



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

431.33-8

5 - 98

3628

ՆԱՅԻ ԵՐԱՌՈՅԵԱՆ

3  
5  
5  
5  
9  
1

# ՏԱՐԵՐՔ

## ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

ՀԱՏՈԳ Բ.

Ե. ՑՊԱԴՐՈՒԹԻՒՆ (ԲԱՐԵՎՈՒԵԱԼ)

ՎԱՐԵՐԱՑԵԱԼ ՅՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



մարգ նշարտ յիլեսնէ հ յօմրու վ գ դ ու զ 319  
յարշխո քաշտամա սիլ թիմ անշնդր

Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱՐԱՐ ԵՐ ԱՌԱՋՈՒՄՈՒ ԱՌԱՋՈՒՄ

Կ. Ա. Ա. Պ. Ա.

1904

0194

157:29

2010

BB 2002

Rif

NF

11804

4-1 三五九

428  
267 E 1-1

# Subtlety

# ԱՃԻԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

ଶ୍ରୀମଦ୍ଭଗବତ

ԷՆԹԵՐՅԱՆ

અત્યારે એ.

## Ե. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ (ԲԱՐԵՓՈԽԵԱԼ)

Վահերազեստ, ՅՈՒՆԻՄԱԿԱՆ ԽՈՐՀՅՈՒՅՑ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



معارف نظارت جلیله سنک ۵۱ نومرسی و ف ۵ تموز ۳۱۹ تاریخلو

خستنامہ سبلہ طبع اول نشیدر

4.901bu

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՍԴԱԵԱՆ  
Կալաբա, Գուրզունլու խան, թիւ 7

1904

## ՎԱԻԵՐԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Հայ Ռւսուցիչներէն՝ Պ. Բարսեղ Էխերձեանի աշխատահրութեամբ պատրաստեալ «ՏԱՐԵՐԻ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ» դասագիրքն Ռւսումնական Խորհուրդս ֆննելով՝ օգտակար գտաւ զայն Հայոց մանկույն ընթերցանութեան, եւ կ'արտօնէ նորա գործածութիւնը Հայոց վարժարանաց մէջ:

Ի դիմաց Ռւսումնական Խորհրդոյ

Վ. ԱՏԵՆԱԴՊԻ

ԱՏԵՆԱՊԵՏ

Ա. Յ. ԱՐԱՊԵԱՆ

Ի. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՃԻՆԴԵՐՈՐԴ ԺՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայ մանկան դաստիարակութեան համար հին ժամանակէն մինչեւ վերջին օրերս պարբերաբար ի գործ ածուած են այլ եւ այլ մատեաններ առաւել կամ նուազ օգտակար: Այժմ կուգամ օգտակար մատենից վրայ յաւելու զայս Տարերք Աշխարհիկ լեզուի, որ արդէն լաւ ընդունելութիւն գտած է Հայոց վարժարանները շատ տարիներէ ի վեր: Սոյն գրքին մէջ հետեւած եմ նիւթոց զանազանութեան, այսինքն, զուարթէն անցած եմ ախուրին, տիսուրէն զուարթին, պատմականէն՝ գիտնական նիւթոց:

Իւրաքանչիւր դաս կը սկսի նախ Դասախոսութեամբ մը, որ առաջին մամն է, յորում պիտի խօսի ուսուցիչը պարունակուած բառերուն՝ և իմաստից վրայ բացատրութիւններ տալով:

Դասախոսութեան կը յաջորդեն.

Բ. Բառեր. զորս աշակերտը պարտի սերտել անսխալ:

Գ. Ընթերցանութիւն. զորս աշակերտը պիտի ընթերոնու անսըսալ, եւ կարդացածն ըմբռնելով:

Դ. Հարցմունք. որոց աշակերտը պիտի պատասխանէ, որք քաղուածք են ընթերցանութեան մասէն:

Իսկ առանց կը հետեւին.

Ա. Բացատեղի բառեր. զորս աշակերտը իր Հրահանգաց տեսրին մէջ կ'օրինակէ աջ կողմը, և ձախ կողմը 5-6 բառերով անսնց բացատրութիւնը կը գրէ իւր կողմանէ՝ ուսուցչէն նախապէս ուսանելով դասարանին մէջ:

Բ. Բաղդատեղի բառեր. սոքա ալ պիտի օրինակէ աշակերտն իւր Հրահանգի տետրակին մէջ, եւ ասոր ի ստորև պիտի նշանակէ թէ՝ բաղդատութեան եղբերն որո՞նք են, և ի՞նչ բանի մէջ է տարբերութիւննին կամ նմանութիւննին:

Գ. Նմանութիւնն. նոյնպէս և զայս նշանակել պարտի աշակերտն իւր Հրահանգի տետրին մէջ և ցուցնել թէ նմանութեան եղբերն որո՞նք են:

**Պ.** Կրբանի. որք մտահարզական վարդութիւններ են, զորս  
աշակերտն իւր Հրահանգի տետրին մէջ կ'օրինակէ և պատասխան-  
ները կը նշանակէ ի ստորեւ :

**6.** Ուղղելիք. ուր թէ տառախաներ և թէ բառից և գաղափարաց սխաներ կան, զորս աշակերտն ուղղելով իւր Հրահանգի տեսրին մէջ կը վարժի ուղիղ խօսելու և ուղիղ գրելու:

Զ. Ծուտասուրինելիք. զորս աշակերտը միայն պիտի կարդայ. գժուարընթեանլիք և բաղաձայններով լի բառեր չուտ կարդալու վարժեցր համար :

կ. Հականիշը. զորս աշակերտը պիտի օրինակէ իւր Հրահանգի տետրին մէջ և աջ կողմն պիտի նաշանակէ հոբանիչը :

Ը. Օրինակուրինեմ. զորս իւր Օրինակուրեան տեսքին մէջ պիտի գրէ, և գասի միջոցին ուսուցիչն աշակերտաց Օրինակուրեան տեսքերն պիտի փոխանակէ անոնց, որք միմեանց գրածները պիտի սրբազրեն գրքին հետեւելով. այս ալ պիտի ծառայէ ուղղագրութեան եւ շարադրութեան վարժելու համար:

Թ. Քերականական վարժ. զորս իւր Հրահանգի տետրին մէջ պիտի դրէ և ի սոսորեւ պիտի աւելցնէ իւր կողմանէ օրինակներ :

**Փ. Ուղագրութիւն.** յորս պիտի գամէ պահանջուած բառերն և պիտի նշանակէ իւր Հրահնանցի տետրին մէջ, ուղղագրութեան վարդեւու համար:

**Փ.Ա.** Հրանի ասացուածք. որոց պակաս մասերը պիտի լրացրնէ իւր Հրանիզի տեսքին մէջ :

**ՓԲ.** Շարադրութիւն. յորս գրուած բառերը պիտի գրէ Հրահանցի տեսրին մէջ և ի տառիւ 5—6 բառերով փոքր նախադատութիւններ պիտի կազմէ շարադրութեան բնուելանայու համար :

**Φθ.** Βιωσιστρούρηβιέζ. Ηρμηνεία της παραπάνω στρατηγικής πολιτικής της Ελλάδας στην περιόδο 1940-1945. Το θέμα αυτό σχετίζεται με την επίδραση της Ελλάδας στην Ανατολική Μεσόγειο κατά τη διάρκεια του Δεύτερου Παγκόσμιου Πολέμου. Οι αναφορές στην παραπάνω στρατηγική πολιτική της Ελλάδας στην περιόδο 1940-1945, συγχρόνως με την επίδραση της Ελλάδας στην Ανατολική Μεσόγειο κατά τη διάρκεια του Δεύτερου Παγκόσμιου Πολέμου, σχετίζονται με την επίδραση της Ελλάδας στην Ανατολική Μεσόγειο κατά τη διάρκεια του Δεύτερου Παγκόσμιου Πολέμου.

**ԺԵ.** Ուսումնի ի բերան. ուսանաւորները պիտի ուսանի ի բերան։  
**ԺԵ.** Բերանազի պատմ. պատմական դասերը կարդայէ մետոյ

Կարդացածն պիտի հասկնայ և պիտի պատմէ՝ խօսիլ վարժելու:

**Փ.9.** Հաստականի եւ հարցականի. սոքա եւս աշակերան պիտի գրէ իւր Հրահանզի տեսրին մէջ և ի սոորեւ պիտի նշանակէ ճիշդը:

**ՓԼ.** Նամակագրութիւնն. պիտի օրինակէ Նամակագրութեան տետրին մէջ անոր վարժելու համար :

**ՓՂ.** Գրավարժութիւն. ուր դասը պիտի գրէ իւր տեսրի մէջ :



**Ժ.Թ.** Գաղափարաց բացառութիւնն. նոյն գաղափարը այլ և այլ եղանակաւ պիտի բացատրէ :

Ուստի աշակերտը պէտք է ունենայ .

1. Ընդօրինակութեան տեսք. 2. Հրահնագի տեսք. 3. Նամակագրութեան տեսք. 4. Գրավարժութեան տեսք:

Ասանցմէզ զատ կան իրագիտական բառեր, որք թուանշանով ցուցուած են. և մէկ և երկու աստղանիշերով բառեր, որոց առաջնարին բառեր են, որոց վրայ ուսուցիչը աեղեկութիւն կռատայ. իսկ երկաստղանիշերը, արդէն իրենց պատճառ բառերն են:

Սոյն Ե. Տպագրութեան առթիւ պարտք կը համարիմ խորին շնորհակալիքս յայսնել առ Պատ. Հոգաբարձուս և Տեսուչս Հայոց վարժարանաց, որք հաճեցան քաջալերել զիս գործածելով դասագիրքս իրենց վարժարանաց մէջ, ոյր Ա. և Բ. հատորներուն տպագրութենէն 21,000 օրինակ սպառեցաւ գարդ:



Դ.Ս.Ս.

ՈՎ ՍՏԵՂԾԵՑ ԱՇԽԱՐՀԸ

ԳԱԱԱԽՕՍՈՒԹԻՒՆ - ԲՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ  
Զաղացպան . — Զաղացքի մէջ Ստեղծել . — Զկայէն շինել :  
աշխառող : Պատճպարել . — Պահպանել :  
Ամենուրեք . — Ամէն տեղ : Հիւսն . — Կարասիք , տուն  
իտար . — Մութ . շինող :

Աղնիւ մանուկներս , երբ կ'անօթենաք , կերթաք ձեր  
մօր հաց\* խնդրելու , այնպէս չէ՝ — Այո՛ , մեր մօր կ'եր-  
թանք և կ'ըսենք անոր . մայիկ , անօթի ենք , հաց տուր՝ —  
ՈՎ շինած է այն հացը , որ ձեր մայրը կուտայ ձեզի , գի-

տէ՞ք: — Հայագործը: — Հայագործն ի՞նչ բանով կը շնէ հայր: — Ալիւրով\* և ջրով: — Բայց ալիւրը ո՞վ կուտայ: — Զաղացպանը\*: — Ի՞նչ բանով կը շնէ զայն: — Յորենով\*: — Յորենը ո՞վ կը բուցնէ, գիտէ՞ք. այս մասը չէք կրնար գիտնալ: — Ջուրն ո՞վ կը պատրաստէ: — Ջուրը կը գըտնուի աղբիւրներուն\*, ծովերուն\* և լիճերուն մէջ. բայց լը գիտենք թէ ո՞վ կը շնէ զայն: — Լաւ ուրեմն, թողէք այս մասն ալ:

2. Երբ անձրեւ\* գայ. դուք կը պատրաստուիք երթալ ձեր բնակարանը. ո՞վ շնած է զայն. կրնա՞ք ըսել: Հիւսնը\*: — Ի՞նչ բանով շնած է: — Քարերով և փայտերով: — Բայց այդ քարերն ու փայտերն ո՞վ պատրաստած է. այս ալ չգիտէք: — Գիշերը, երբ խաւարը ծածկած է ամէն բան, մութը կը տեսնէք. իսկ առաւօտուն, երբ արթըննազ, ընդհակառակը լոյսը\* կը տեսնէք ամենուրեք. ըսէ՞ք. խաւարն և լոյսն ո՞վ ստեղծած է: — Կը տեսնենք որ ամէն բանի ստեղծող մը պէտք կրյայ. բայց չենք գիտեր որ այդ ամէն բաներն ալ ո՞վ ստեղծած է:

3. Հիմա պիտի հասկնաք. ըսէ՞ք ինձ թէ կարելի՞ է որ չուրը, խաւարը, լոյսը, ցորենը, քարերը, փայտերն ինքնիւրենուն ստեղծուած լինին, մինչեւ որ զանոնք մէկը չատեղծէ. ի՞նչպէս կրնաք հաց ունենալ, մինչեւ որ հացագործը շինէ, և կամ կրնա՞ք ձեր տան մէջ բնակիլ մինչեւ որ հիւսնը զայն շինէ. կարելի՞ է ըսել որ տունը, հայն ինքնիւրենուն շինուած են: — Ո՞չ բնաւ:

4. Արդ ուշագրութեամբ մտիկ ըրէք. Աստուած կը կոչուի այն, որ ստեղծած է այս ամէնքը: (\*)

(\*) Սոյն դասը օրինակէ մի անգամ օրինակութեան տեսրիդ մէջ:

Հարցմունք. — Ուսուցիչն ի՞նչպէս սկսաւ իր դասը: — Հայն ո՞վ կը շնէ: — Ի՞նչ բանով կը շնէ: — Զաղացպանն ի՞նչ կ'ընէ: — Հիւսնը ի՞նչ կ'ընէ: — Ո՞ր ժամանակ գիշեր կ'ըլլայ:

Դ Ա Ս Բ.

### ՏԱՄՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ

ԴԱՍՍԻԽՈՍՈՒԹԻՒՆ. — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Կուռք. — Քարէ, փայտէ շինուած	Երդնուլ. — Երդում ընել:
պատկեր:	Ատելի. — Չոփուելու:
Պատշաճ. — Վայելուչ:	Մեղանչել. — Մեղք գործել:
Գաղտնաբար. — Գաղտուկ:	Կը չըլինք. — Կը պարտինք:

1. Զբոսանքի ժամանակ էր, երբ ընկերներէս մէկը խաչի միջոցին Յովհաննէսին գնտիկը գաղտնաբար առաւ և ուղեց պահել իր գրպանը\*: Այդ ընկերս կը կոչուէր Վա-

ՀՐԱՀԱՆԳ. — Ուղղագրութիւն. — Գտնել քսան բառ որ իր մէջ ունենայ թ գիրը, և գրել Հրահանգի տեսրին մէջ:

Ուղղելիք. — Գաղամար, պնազ, վարսագ, ցօրէն, քարի, ցայն, զի, բապար, երդալ, հաճախ, ստեղլիխին:

Իրացիւթիւն. — Պատրոյկ. բամպակէ շինուած երկար հաստ թել մ'է, որ կը գըտի իւղի մէջ, որուն ծայրը եթէ վառեն, կը լուսաւորէ:

\* Աստղանիշով ցուցուած բառից վրայ ուսուցիչը պիտի խօսի:

\*\* Երկու աստղանիշով ցուցուած բառերն աշակերտին ծանօթ կամ պատահած բառերն են:

Հան։ Վաղեցի իւր քով և հարցուցի թէ որո՞ւնն էր այն գնալին որ աճապարանօք իր դրապանը կը դնէր։ Վահան չուզեց պատասխանել։ Ես ալ բարկանալով բռնութեամբ իր ձեռքէն առի գնալիլը։ Այս միջոցին ուսուցիչը վրայ հաշաւ աւ և ամէն բան իմանալէն վերջ ըստ վահանին։ «Դու Աստուծոյ մէկ պատուիրանաքին դէմ գործած ես»։ Յովհաննէս պարկեցտութեամբ հարցուց ուսուցիչը պատասխանէց։ Աստուծած ի՞նչ պատուիրանկ տուած է։ Ուսուցիչը պատասխանէց։ «Աստուծ Մոլոկս\* մարգարէին\* ձեռքով Սինա\* լեռան վրայ երկու քարէ տախտակներով տասը պատուիրանկ տուաւ, որը են։ 1. Միայն գու զիս քու Աստուծոյ ճանչցիր. 2. Կուռք մի՛ պաշտեր. 3. Աստուծոյ անոնը պարապ տեղը բերանդ մի՛ առներ. 4. Նարախ օրը քու գործերուդ մի՛ աշխատիր<sup>(1)</sup>, միայն բարի և սուրբ գործեր ըրէ՛. 5. Քու հայրդ ու մայրդ պատուէ՛. 6. Սպաննութիւն մի՛ ըներ. 7. Գողութիւն մի՛ ըներ. 8. Գէշ ու ամօխ բաներ մի՛ խօսիր և մի՛ գործեր։ 9. Սուտ մի՛ խօսիր. 10. Ուրիշին ունեցածին աչք մի՛ տնկեր։ Ըսէր հիմա թէ Վահան այս պատուիրանկներէն որո՞ւն դէմ մեղանչեր է։ — «Գողութիւն մի՛ ըներ.»ին դէմ։

2. Կը յիշէ՞ք, գուք այս պատուիրանկներուն դէմ շատ անդամ մեղանչած\* էք. — Այո՛, շատին դէմ մեղանչած ենք, ինչպէս. շատ անդամ վշտացուցած ենք մեր հայրն ու մայրը, և անոնց չենք հնազանդած և պատշաճ պատիւը չենք տուած, պէտք չեղած ժամանակ Աստուծոյ անոնը պարապ տեղ բերաննիս տուած ենք, շատ անդամ սուտ երդումներ

[1] Հիմա Շաբաթի տեղ կիւրակէ։

ըրած ենք, հայհոյութիւն ըրած ենք, որ կը խոստովանինք թէ պարկեցտ և Աստուծամաէր տպու մը չեն վայլեր։ Ասոնցմէ գուրս նիրակի օրերը զինքը պաշտելու համար եկեղեցի չենք երթար, աղօթք չենք ըներ, բարոյական գիրք մը կարդալու կամ մեր մօրը խրաները մտիկ ընելու հոգ չենք տանիր, փողոցները կը շրջինք և մեր ժամանակը պարապը կանցրնենք, ուրիշին ունեցածին աչք տնկելով, կուզենք անոր տէր ըլլալ, գաղտուկ ուրիշին ունեցած բանը կառնենք. սուտ կը խօսինք մեղի անմեղ ցուցնելու համար։

Ահա շխտակ շխտակ լսէր ձեր մեղքերը. հիմա կը ներեմ ձեզի. բայց կ'ըսեմ նաեւ թէ պարկեցտ և աղնիւ աշակերտ մը բնաւ այդպիսի մեղքերու մէջ չդանուիր. խրատ կուտամ ձեզի որ յետ այսորիկ այդպիսի մեղքեր չդործէք։<sup>(1)</sup>

Հարցմունիք. — Վահան ո՞ւրիէ գողցաւ գնալիլը. — Ո՞վ ձեռքէն առաւ. — Ուսուցիչն ի՞նչ ըստ. — Տան պատուիրանկներն որո՞նք են։

ՀՐԱՀԱՆԴ. — Ուղղագրութիւն. — Գանել քսան բառ որ է ունենայ իւր մէջը։

Զուի գող, ձիու գող։ Կը նշանակէ թէ՝ այն որ փոքր բաներ կը գողնայ նախ և առաջ, ապա օր մ'ալ մեծ բաներ կը գողնայ։

Լրանալիք. — Գրիչով կը գրեն բայց տապարով. . . Գիրքո՞վ. . . Զմելիո՞վ. . . եւայլն։

Զբանամիք գրի փոփոխամամբ. — Աշել, Տիրել, գամել, սողալ, կրել, վախցնել, Խզել։ (մաշել — տաշել եւայլն)։

[1] Սոյն դասը օրինակէ միանդամ օրինակութեան տետրիդ մէջ։

Դ Ա Ս Ա Գ.

ՊԱՏՈՒՒՐԱՆՔ ՄԱՆԿԱԿԱՆ

ԴԱՍԱՀՈՍՈՒԹԻՒՆ—ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Անկողին . — Պառկելու տեղ :	Դաստակ . — Պիլէկ :
Մեղմու . — Կահաց մը :	Այդորել . — Բարի լոյս ըսել :
Տաբատ . — Անգրավարտիք :	Անդադար . — Միշտ :
Անխնամ . — Խնամ չուրուած :	Ամիսիէ . — Ժողվէ :
Խողանակ . — Ֆրչա :	Համեղ . — Համով :
Պայուսակ . — Զանթա :	Եղունդն . — Թրնախ :
Շքուիլ . — Զարդարուիլ :	Բանկրնալ . — Ելէկ :

1. Երբ առաւօտուն ենես անկողնէդ\*,  
Զգեստիդ ծածկոց\*\* մէկդի առ մեզմիւ,  
Ծալլած տարատղուդ\*\*, բաճկոնակդ\*\*, մեկնոց\*\*,  
Չըլլայ որ հոս հոն նետես անխընամ\*\*\*:

Ապա խողանակդ\*\* վնառել դընա',  
Թօթափել\*\* փոշին\* զլիսարկիդ կարմիր.  
Եւ մաքրելէ վերջ լաթերուդ հետ զայն,  
Փութացիր հագուիլ, զարդարուիլ, շքուիլ:

2. Բայց մի' մոռանար մասներուդ, ոսքիդ  
Ծայրերէն կտրել եղունդն\*\* սրածայր\*\*,  
Լուալ պաղ ջուրով երեսդ ու դէմքդ,  
Լուալ դաստակդ\*\*, սանտրել զլիսուդ մազ:

Առաւօտուն միշտ ազօթքիդ ժամուն  
Աչքդ ու միտքդ Աստուծոյ դարձուր,

Եւ անկէ քեզի օդնութիւն, շնորհ,  
Եւ խմաստութիւն խնդրէ' անդադար:

3. Երբ այս ամենն ընես, կատարես,  
Գլնա' ողջունել\*\* մայրիկդ ու հայրիկ,  
Կամ եթէ ունիս քուրիկ ու եղբայր,  
Զանոնկը ալ սիրով այդորել գընա':

Հիմա նախաճաշ ընելու է ժամ.  
Շուտ ա՛ռ աթոռակդ\*\*, նստէ' հանդարտիկ,  
Մայրիկդ քեզ տայ միրդ ախորժահամ\*\*,  
Հաց, պանիր, ընկոյլ\* կամ թէ կաթ\*, հաւկիթ\*:

Եւ երբ աւարտի նախաճաշդ համեղ,  
Ա՛ռ պայուսակդ և կամ թէ ծրաբ,  
Ամիսիէ դրբերդ, թողթ, դրիչ, մելան,  
Եւ դէպ ի դպրոց խնդալով դնըա':<sup>(1)</sup>

Հարցմունիք.—Ծածկոցն որո՞ւ վրայ կը դրուի. — Խողանակով ի՞նչ կ'ընեն. — Առաւօտուն ենելուն պէս ի՞նչ ընելու է:

ՀԲԱՀԱՆԴ. — Ուղղագրութիւն. — Գանել քսան բառ որ ե գիրն ունենայ իւր մէջ:

Բացաւրութիւն քատից. — Առարկայ մը, որ պողպատեայ բարակ գլանիկ մ'է, որուն մէկ ծայրը սուր ըլլալով կրնայ ծակել ամէն տեսակ կերպաններ. իսկ միւս ծայրը բուժէ, և ունի ծակ մը, որմէ կ'անցունեն դերձանը: — Ի՞նչ է այն:

(1) Մոյն դասը օրինակէ օրինակութեան տետրիդ մէջ:

Ուղղեցիք.—Աշկս կը ցաւի կոր։ Ամէն իժիր փողոց կելշատ։ Զուն կուգայ կոր։ Ասոր մարդը ես կը ճաշնամ։ Եղշբոյր-որդիս շատ խելացի է։ Աղբաներս սառեցաւ։ Արզեւ կուգայ կոր։ Երեք թերթի խըտար թուղթ ունիմ<sup>(1)</sup>։

Զրօնանիք զրի մը կրնաւմամբ.—փայտ, աթոռ, մատեան, բաղեղ, ուռի, ցաւար, մամուլ, մորթ, մանուշակ, նման, նաւաղ, նպար, նօտար, ապարան, նահաւոր, ագահ, ըլար, չողի։ (Փայտ—այտ եւայլն)։

Սիրելի եղբայր իմ,

Երկուշարթի առաւօտ գրավարժութեան դասին գրիչ-ինդլեցի, սա պայմանաւ որ դասէն վերջը ձեղ վերադարձնեմ։ բայց մոռացութեամբ մինչև հիմա չկրցայ կատարել խոստումն. ահա՛ այժմ կը զրկեմ զայն կրտսեր եղբօրս միշոցաւ և ձեր ներողութիւնը կը իննդրեմ։

Յայտնելով իմ մասնաւոր չնորհակալիքս,

1904 Յունիար 1

Մնամք քոյրդ

Խոսկիւսաւ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՀՈՐԳԵՎԱՆ

Գրեցէք եղբօր պատասխանը սոյն նամակին ի ստորեւ, ըսէք թէ ընդունած էք 1904 Յունիար 1 ամսաթիւ նամակը, որ գրուած էր Խոսկիւսարէն, որով կը զրկէր գրիչը զոր մոռացմամբ չէր զրկած։ Ըսէք թէ գրիչ չունենալուն և մէկէ մ'ալ առնել չհամարձակելուն դասը չէր պատրաստած և իր մոռացումին հետեւանդն եղած էր իր պատժուիլլը։

(1) Ասոնց մէջէն որո՞նք սիսալ են, զորս պիտի ուղղեն։

Դ Ա Ս Գ.

### Մ Ի Ա Մ Ի Տ Կ Ի Ն Ը

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ—ՀԱՅԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Անզդամ։ — Զար։

Խաբերայ. — Խաբող։

Ուտեստ. — Ուտելիք։

Հեծաւ. — Զի նստաւ։

Հալածել. — Ետեւէն իյնալ։

Աճապարանօք. — Շուտով։

Ապրդեցաւ. — Կամաց մը մը-

տաւ։

Անծանօթ. — Զձանչցուած։

Հագուստ. — Զգեստ։

1. — Միամիտ\* կնոջ մը տասն և վեց տարեկան որդին մեռնելով, մայրը ցաւի և սուզի մէջ թողած էր։ Անզդամ\*\* մարդ մը իմանալով մօրը միամոռութիւնը, և որդւոյն վրայ ունեցած ցաւը, կերթայ անոր գուռը կը զարնէ։ Կինն աճապարանօք\*\* դուռը բանալէն վերջը, երբ անձանօթ\*\* մարդ մը կը տեսնէ, կը հարցնէ թէ ո՞վ է ինք։ Խաբերայն առանց շուարելու կը պատասխանէ։ «Անդիի աշխարհէն կուգամ, ձեր Ուուրէն որդւոյն գրացի եմ։ Ուուրէն խիստ տառապեալ վիճակ մը ունի, և ոչ մէկ գրամ կայ վրան, ի՞նչ կըսէմ, հագուստ ալ չունի կանոնաւոր, բողոքն ալ պատրուտած\*\* է. ցուրտէն, հովէն կը գողայ, անօթի և ծարաւ է. երբ տեսաւ թէ ես այս աշխարհս կը պատրաստուիմ գալ, աղաչեց ինձ որ իրեն մօրը հանդիպիմ\*\*+, և իրեն վիճակն յայտնելով, օգնութիւն ինդրեմ։ Այս բանն ինձի համար ծանր չէր. ուստի խոստացայ կատարել իննդիլլը։

2. — Մայրը խաբերային\*\* այս խօսքերը լսելով դառնապէս\*\* սկսաւ լալ, և խիստ չնորհակալ եղաւ անոր որ իւր

որդւոյն վիճակն իմացուց. յետոյ ելաւ շատ մը զգեսաներ, կտաւ, ոսկի և հաց տալով, աղաչեց որ իւր մեռած որդւոյն տանիւ Խարերայն զանոնք առնելով մեկնեցաւ:

Երեկոյին երբ ամուսինն եկաւ, կինը ցերեկուան ընդունած լուրն\* իմացուց, և ըստ թէ իր որդւոյն ուտեստ\*\* և հագնելիք ու դրամ զրկած է: Ամուսինը զայս լսելով, խիստ կատղեցաւ և բարկացաւ իր կնոջ դէմ որ այսպէս խարերայութեան կը հաւատար. ուստի տեղեկանալէ վերջ թէ դողն ո՛ր կողմէն դացած էր, ձիոն վրայ հեծաւ և ձին մտրակեց որ անոր համնիւ:

3. — Գողը դիտնալով որ ամուսինը զինքը պիտի հալածէր. անմիջապէս ջաղացքի մը մէջ սպրդեցաւ\*\* և ծրարը ծածուկ տեղ մը դնելով, գործաւորներէն միոյն լաթերն հագաւ և ջաղացքին\*\* դրան առջեւ կեցաւ: Կնոջ ամուսինն անկէ անցած միջոցին զայն տեսնելով, հարցուց անոր թէ արդեօք ձեռքը ծրարով\*\* մարու մը անցնիլը տեսած էր: Գողը պատասխանեց. «Այո՛, անցած էր այդպիսի մարդ մը». և հեռու տեղեր տանող ճամբայ մը ցուցուց: Մարդն աղաչեց խարերային\* որ քիչ մը ձիոն պահպանութիւն ընէ, ու ինք անցաւ դնաց հետիւոնն:

4. — Խարերան անոր հեռանալէն յետոյ լսթերը փոխեց, ծրարն առաւ և ձին հեծնելով փախաւ:

Խեղճ ամուսինը երկար ատեն պատելէ վերջ՝ վերադաւ ջաղացքը, և երբ ձին հոն չգտաւ, ալ հասկցաւ թէ դողը նոյն ինքն էր. ուստի աւելի բարկացած ուղղակի տուն դարձաւ:

Երբ կինն հարցուց ամուսնոյն թէ արդեօք դողը\* դտա՞ւ



թէ ոչ. այրը պատասխանեց այսպէս. «Որովհետեւ նորոք լուր զրկեր էր այն մարդուն ձեռքով թէ՝ ձիու մ'ալ պէտք ունէր. ուստի ինքն ալ ձին զրկած էր, որպէս զի հանդիսա, ուրախ և զուարթ\*\* ապրի»: (<sup>1</sup>)

Հարցմունիք. — Միամիտ կինն ո՞վ կորսնցուցած էր. — Խարերան ի՞նչ ըստ. — Ո՞ր աստիճանի միամիտ էր. — Ի՞նչ տուաւ խարերային. — Ամուսինը ի՞նչ ըստ. — Գողն ի՞նչպէս ամուսնոյն ձիուն ալ ձեռք զարկաւ. — Ամուսինն ի՞նչ պատասխան տուաւ կնոջ:

**ՀՐԱՀԱՆԴ.** — Ուղղագրութիւն. — Գտնել քսան բառ որ Տ ունենայ իրեն մէջ:

Բացատրելի բառեր. — Քար, շուն, կատու, այծ, նաւակ, այգի, ծոյլ (<sup>2</sup>):

Քերականական վարժ. — Իր, անձ, տեղ ցուցնող բառերը գոյական են: Թռչուն. իր կը ցուցնէ. Սմբատ. անձ կը ցուցունէ. Կ. Պոյիս. տեղ կը ցուցունէ. ուստի գոյական են:

Օրինակ. — Որսորդ, կերակուր, երկիր, պարտէզ, դըպրոց, տուն, խոհանոց, լուցկի, աշտանակ, թիմնաթոռ, խնձոր, հայր, ծառայ, Մովսէս, իշխան, փեսայ, Վան, Զմիւռնիա, Այսին, Պրուսա (<sup>3</sup>):

Գաղափարաց բացատրութիւն. — Գրիգոր շատ աշխա-

(<sup>1</sup>) Սոյն դասը օրինակէ օրինակութեան տեսրիդ մէջ:

(<sup>2</sup>) Աշակերտը իր բացատրութեան տեսրին մէջ պիտի գրէ, ասոնց առհմանը տալով:

(<sup>3</sup>) Զատել իր, անձ, տեղ ցուցնող բառերը:

տասէր է. բայց անկիրթ է. — Կը հաւատամ թէ Գրիգոր կը սիրէ աշխատիլ. բայց կրթութիւն չունի. — Գրիգոր թէպէտ աշխատասիրութեանն համար գովելի է, բայց անկրթութեան համար պարսաւելի. — Գրիգոր ծոյլ չէ, բայց կրթեալ տըզայ մը չէ. — Ո՞վ կրնայ ուրանալ Գրիգորի աշխատասիրութիւնը, բայց ո՞վ կրնայ չհաստատել անոր անկրթութիւնը:

Երանալիք. — Գիրքս բացի, որպէս զի . . . : — Խնձոր մը առի, կեղեւեցի, որպէս զի . . . : — Հայրս գեղեցիկ գերք մը տուաւ, որպէս զի . . . :<sup>(1)</sup>

Սիրելի Հօրեղբայր իմ,

Խնձ պատուիրած էկը կարդալ Զեր զրկած դասադիրքը և մէջի խնդիրները լուծելով ներկայացնել Զեղի. Կիւրակէ առաւօտ, կարդացի զայն. Անոր մէջ ի՞նչ հաճոյափ դասէր կային ինձ համար. Խնդիրները լուծեցի և ահա՛ ներփակեալ կը դրկեմ Զեղի.

Մատուցանելով խորին շնորհակալիքս,

1904 Յունիս 4

Բակուաւ

Մնամ խորին յարգանօք

ՄԻԿ. Ա. Ա Վ. Ա. Ն Ե Ա. Ն

Մինասին պատասխան մը գրեցէք, ըսէք թէ ընդունած էք 1904 Յունիսը 1 ամսաթիւ նամակն իւսկեւտարէն գրատած, խօսեցէք պլոտիկ պատմութիւններէն առնուած բարոյականին օգտակարութեան վրայ, լուծուած խնդիրներուն վրայ Զեր կարծիքը յայտնեցէք:

(1) Գիրքս բացի, որպէս զի կարդալ:

Դ Ա Ա Ե.

### ԱՍՏՈՒԱԾ ԱՐԴԱՐ Է

ԴԱՍՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ — ԲՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Արդար. — Մեղք չունեցող :	Ուշադիր. — Միտ դնող :
Յանդիմանել :	Հմող :
Կրեսին զարնել :	Անհազանդ. — Խօսք մտիկ
Վարձատրել. — Վարձք տալ :	Սաել. — Սուտ խօսիլ :
Շատակերութիւն. — Շատ ուտելն :	Ուսումնական . — Ուսումնաք ունեցող :

Բարի տղափս, երբ դուք խելօք կենաք, և ձեր մօր խօսքը մտիկ ընէք. նա ի՞նչ կ'ընէ ձեզի. — Նա կը գրկէ զմեզ, իւր ծնդաց վրայ կ'առնու, կը սիրէ, կը համբուրէ զմեզ. — Իսկ երբ խելօք չկենաք և անոր խրատները մտիկ չընէք. ի՞նչ կ'ընէ : — Այն ատեն զմեզ կը յանդիմանէ, կը պատժէ : — Ուրեմն արդար է ձեր մայրը. որովհետեւ կը վարձատրէ՝ երբ դուք բարի էք, կը պատժէ՝ երբ դուք չարէք. այդպէս չէ : — Այո՛, նա կը պատժէ չարը, և կը վարձատրէ բարին. — Իսկ ես ի՞նչ կ'ընեմ, երբ դուք խելօք կենաք. — Դուք մեզի փոքրիկ, գեղեցիկ պատմութիւններ կ'ընէք և սիրուն պատկերներ կ'ուտաք : — Բայց երբ խելօք չկենաք, ի՞նչ կ'ընեմ : — Այլ ես չէք ուզեր մեզի գեղեցիկ պատմութիւններ ընել և չէք նուիրեր սիրուն պատկերներ — ես ալ արդար եմ ուրեմն : — Այո՛, արդար էք. որովհե-

աեւ կը վարձատրէք բարին և կը պատժէք չարը : — Բայց  
այս արդարութիւնը մեզի ուսուցանողը գիտէ<sup>8</sup>ք, ո՞վ է . Աս-  
տուած է : Բարի<sup>9</sup> է շատակերութիւնը . ո՞ւ զի այն որ շա-  
տակէր է , ի՞նչ կ'ըլլայ . գիտէ<sup>8</sup>ք . կը հիւանդանայ . ի՞նչ  
կ'ըլլայ . այն փոքրիկ անհնազանդը , որ կրակին հետ կը  
խաղայ : — Կ'այրի : — Ի՞նչ կ'ըլլայ այն ծոյլ<sup>\*</sup> տղան,  
որ բնաւ չաշխատիր : — Աղքատ : — Ի՞նչ կ'ըլլայ այն  
ստախօսը , որ միշտ կը ստէ : — Անհաւատարիմ , մէկը չհա-  
ւատար անոր : — Ի՞նչ կ'ըլլայ այն աշխատասէր տղան , որ  
միշտ կ'աշխատի իր գասերոն : — Ուսումնական : — Ի՞նչ  
կ'ընեն այն տղան , որ միշտ ճշմարիտը կը խօսի : — Ամէն  
մարդիկ միշտ կը յարգեն և կը սիրեն :<sup>(1)</sup>

Հարցմունք . — Ե՞րբ կը սիրէ ձեզի ձեր մայրը : — Ի՞նչ  
կը նշանակէ արդար : — Ի՞նչո՞ւ համար ձեր մայրն արդար է :  
— Ի՞նչո՞ւ համար վարժապեսն ալ արդար է :

ՀՐԱՀԱՆԳ . — Բացատրութիւն բառից . — Բան մը որ  
երեք ուզ ունի , երկալթէ շնուած է , եռանկիւն է , կը  
դրուի կրակարանին մէջ , իր վրան կը դնեն կերակուրի սանը  
որ տաքնայ . ի՞նչ է այն :

Ուղղագրութիւն . — Գտնել քսան բառ որ իր մէջ ու-  
նենայ վ գիրն :

Ուղղելիք . — « Պաղչային » մէջէն մօրս « ծանը » լսեցի :  
— « Օտքս » կոտրեցաւ ձորին « տիպը » գացի : — « Էրկնքի »  
վրայ « ի՞նչ խտար » լցուեր կը վառին : — Լեռան « թէփէէն »  
վար կը թափէին խոշոր « ծուներ » :

(1) Օրինակէ սոյն գասը օրինակութեան տեսրիդ մէջ :

Սիրելի Հայր իմ ,  
Երբ կը մտածեմ թէ այսօր վերջին օրն է , վերջին գի-  
շերն այն տարւոյն , որ պիտի անցնի , կը սարսուխմ , որովհե-  
տեւ կը զգամ թէ պարտաւոր եմ միամեայ գործերաւ հա-  
շուը տալ Զեղի :

Դուք արդէն ամեն ատեն իմ համարս պահանջած էք  
և ես կարողացած եմ միշտ Զեր գոհունակութեան արժա-  
նանալ : Պիտի ջանամ ներկայ տարւոյս մէջ ալ աշխատիլ և  
գոհացնել Զեղի իմ վարքովս և բարքովս :

Յանացիկայ տարւոյս մէջ ալ միշտ աշխատասիրութիւն ,  
միշտ հնազանդութիւն և առաքինութիւն խոստանալով ,

Մնամ

1904 Յունիվար 4

Իւսիկւար

Խոհեկն ԵՐԿԱՆԵԱՆ

ԷՌԵԿՆ ԵՐԿԱՆԵԱՆ

Գրեցէք հօրը պատասխանը , հօրը խրատները ժամա-  
նակը օդտակար լնելու և առաքինի գործերով օրը անցնելու  
մասին :

Դ Ա Ս Զ.

## ՏԱՍՆ ԵՐԿՈՒ ՅԻՄԱՐՆԵՐ

ԴԱՍՍԻԽՈՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ

Զինորսութիւն . — Զուկ բըռա-  
նելն :

Աքացի . — Ոտքով :

Խորամանկ . — Նենդաւոր :

Որսալ . — Զուկ բըռնել :

Բռնցի . — Բուռնով :

Օր մը , երբ օդը գեղեցիկ էր , տասն երկու յիմար մար-  
գիկ ձկնորսութեան գացին ծովուն եղեցքը : Մինչեւ երեկոյ

ամենքն ալ աշխատեցան. բայց մէկ ձուկ անդամ՝ չկրցան  
բռնել:

Մէջերնուն ամենէն խելացին՝ իրենց յողնութեանց պա-  
րապն ենելը տեսնելով, ըստ. «Այս ձուկիրը շատ խորա-  
մանկ են եղեր, չըլայ թէ մենք զիրենք որսալու տեղ՝ ա-  
նոնք մեղի որսան։ Եկէք մեր թիւն համրենք, տեսնենք  
ամրող ենք»։ Ամենքն ալ կարգաւ շարուեցան և ամենէն խե-  
լացին նախ համրեց, մէկ հատ պակաս գտաւ. միւսն ալ  
համրեց, ան ալ այնպէս. այս կերպով ամենքն ալ համրեցին  
և թիւն եղաւ տասն և մէկ. ուստի շատ տիրեցան, ի՞նչ ը-  
նելին չէին գիտեր. այս ժամանակ գիւղացի մը անցաւ մօ-  
տէն և անոնց տիրութիւնը տեսնելով, մօտեցաւ իրենց, և  
տեղեկացաւ պատճառն և ըստ. «Եթէ ձեր կորառած ըն-  
կերը գտնեմ, ի՞նչ կ'ուտաք ինձ»։ — «Մեր վրայ գտնուած  
ստակն ամէնն ալ քեզի կ'ուտանք»։ պատասխանեցին. Դիւ-  
ղացին նախ և առաջ ստակները ժողվեց. և ապա կարգաւ  
շարեց յիմարները. յետոյ իւրաքանչիւրին կունակին զարկաւ  
բռնցի ըսելով. «Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը,  
ութը, ինը, տասը, տասն և մէկ»։

Յիմարները երբ լսեցին տասն և մէկ թիւը, «Զեղաւ,  
գոչեցին, մենք տասն երկու թիւը կ'ուղենք»։ — «Ահա  
տասն երկու թիւը»։ ըսելով ամենէն ծայրը գտնուողին  
կունակին պացի զարկաւ և թաւալեց գետինը։

Յիմարները չորսհակալ եղան անոր իրենց կորառած  
ընկերը գտնելուն։ Համրովները ներկայ եղողները թուած  
ատեննին զիրենք մէջը չէին առած։<sup>(1)</sup>

(1) Սոյն դասը օրինակէ օրինակութեան տեսրիդ մէջ։

**Հարցմունիք.** — Որո՞ք ձկնորսութեան ելան։ — Ամենէն  
խելացին ի՞նչ ըստ։ — Ինչո՞ւ համար մէկ հատը պակաս  
կ'ըլլար իրենց համրանքին մէջ։ — Ո՞վ էր որ պակասը գը-  
տաւ։ — Յիմարները ի՞նչ ըրին գիւղացիին։

**Բացատրելի բառեր.** — Խարիսխ. հարուստ. աղքատ.  
քարայր. առիւծ, վերմակ. կանգուն. մաքուր։

**Ուղղելիք.** — «Փախայ» և օձ մը «Նշմարեցի»։ — «Քը-  
նանալուն» պէս «պառկեցաւ»։ — Գողը «կախուելուն» պէս  
«բռնուեցաւ»։ — Ծառը «չորցաւ», տերեւներ տուաւ և  
ծաղիկ բացաւ։

**Հականիշ.** — Ճերմակ—Սեւ։ Բաբէ—Զար։ Ողորմած—  
Անողորմ։ Հեռի—Մօտ։ Ծեր—Երիտասարդ։ Մեծ—Փոքր։

### Սիրելի Հայր իմ,

Վարժապետու ինձ այսօր բարոյական գեղեցիկ պատմու-  
թիւն մը պատմեց. շատ զգածուեցայ և շատ սիրեցի զայն,  
ուստի միաքս գրի որ խնդրեմ ձենէ որպէս զի ինձ բարոյա-  
կան գեղեցիկ պատմութեան գիրք մը առնեք, որոյ համար  
երախտապարտ և չնորհակալ պիտի ըլլամ յաւէտ։

Մասուցանելով որդիխական յարգանքը,  
Մնամ

1904 Յունիս 4

Խոսկիստար

Խոնարհ որդիդ

ՄԱՏԹԵՈՍ ԳԱՐԱԳԱՉԵՆՅԱՆ

Գրեցէք հօրը պատասխանը. նամակին թուականը և  
տեղը, որիէ գրած է. յիշեցէք հօրը քաջալերութիւնը տղուն  
աշխատասիրութեան մասին, խնդրուած գրքին զրկուիլ։

Դ. Ա. Ա Ե.

ՔՐՏԻՆՔԻ ՎԱՍՏԱԿՆ Է ԱՐԴԱՐ ՎԱՍՏԱԿ

Դ.Ա.Ա.Խ.ՕՍՈՒԻԹԻԻՆ—ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻԻՆ,

Հանդիպեցան. — Իրարու դէմ Մորթ. — Մարմնոյն պատելան:

Աճապարել. — Շուտով գործել: Ինչք. — Ստացուածք:

1. — Օր մը երկու գեղացի մարդիկ, մին խիստ բարեսէր, միւսը խիստ չարասէր, ճամբան իրարու հանդիպեցան, և իրարու հետ տեսակցելով բարեկամութիւն\* հաստատեցին:

Օր մ'ալ առաջինը իմացաւ որ իր ընկերը գողութիւն մը ըրեր և հարատացեր է, ելաւ դնաց զինքը վնասուելու, որպէս զի խրատէ այդպիսի մեղքի մէջ չդանուելու համար. գտաւ զինքը և հետք տեսակցելով բաւ. «Ի՞նչպէս էք, բարեկամ: — Կարծեմ թէ գողութիւն\*\* ընելս չէք լսեր: — Ի՞նչ. գողութիւն ըստիք. ա՞յ, այդ ի՞նչ ծանր մեղք: — Բարեկամ, մեղքին հետ քանի մը հարիւր սակի վրայ ստացայ: — Այդքեզի աղէկ է, բայց ինձի համար խիստ գէշ լուր է: — Ո՞չ, ինձ համար ալ այնքան աղէկ չէ, բարեկամ, որովհետեւ այն ստակով ոչխարներ առի, ոչխարներուս մէջ հիւանդութիւն\* պատահեցաւ և ամենքն ալ մեռան, և մէկ բարա մը չմնաց: — Այ, տեսա՞ր, գողութեամբ վաստկուած ստակով շուտով կը կորսուի. ահա գործդ լմնցած է հիմայ:

— Մի աճապարեր, ես ալ այդպէս գործս լմնցած կը կարծէի. բայց երբ ոչխարներուն մորթը ծախեցի, կորուսած ստակով մէկ մասը նորէն ձեռք ձգեցի:

2. — Իբր բարեկամ, կը ցաւիմ վրադ. — Բարեկամ, այդ ալ շատ աղէկ չեղաւ, որովհետեւ այն ստակով տուն մը առի, տունն ալ այրեցաւ, լմնցաւ: — Վա՛խ, կը ցաւիմ վրադ. այդ ի՞նչ գըժբաղդութեանց հանդիպեր ես. ես չէի՞ ըսեր ըեզի թէ՝ «Քրտինքի վաստակն է արդար վաստակ». վա՛խ, խեղճ բարեկամ: — Ո՞չ, բարեկամ, մի ցաւիր վրաս, այլ ուրախացիր: — Ի՞նչ կըսես, ասկէց աւելի գըժբաղդութիւն կրնա՞յ ըլլալ. — Մափկ ըրէ. վաստկած ամէն ինչքերս և գողութեան բնաւորութիւնս տանը հետ մէջը այրեցան. հիմա գո՞ն եմ և ուրախ: (<sup>1</sup>)

Հարցւումն. — Ինչո՞ւ համար բարեկամը գնաց ընկերին հետ տեսնուելու: — Զարասիրտ ընկերն ի՞նչ ըրած էր: — Ոչխարները ի՞նչ եղան: — Ինչո՞ւ համար գո՞ն էր չարասէր ընկերը:

ՀՐԱՀԱՆԳ. — Բացատրելի բառեր. — Սրեւ, աղուէս, վարդ, անտառ, ջրհոր, մշակ, ջրկիր, ժժմակ:

Ուղղագրութիւնն. — Գտնել քսան բառ որ իր մէջն ունենայ և գիրը:

Բառագիշական. — Բառարան նայելով հետեւեալ բառերուն նշանակութիւնը գտնել և գրել.

Թուղ, պատաղիդ, ժոռատ, բիժ, խիղք, պարեխ, մրկել, խարկել, խարոյկ, զնդան, փեճեկ, շիւ, քիւ:

(1) Սոյն գասը օրինակէ օրինակութեան տեսպիդ մէջ:

Համեստուհի քոյր իմ,

Երէկ առաւօտ շրջագայութեանս ժամանակ՝ երբ ինձմէ շաբար մը ուղեցիր, ես չտուի. բայց վերջը մտածելով որ ըրածս կոշտութիւն մ'էր, շատ ցաւեցայ և զղացի:

Արդ այժմ կուգամներողութիւն խնդրելքենէ և նուիւրել փոքր տուի մը շաբար, զոր նուիրած էր հայրիկս անուանս տարեգարձին օրը և ես պահած էի խնամք:

Ընդունէ, սիրելի քոյր իմ, զայն, խչպէս նաև եղբայրական սէրա:

1904 Յունիս 4

Թիվիւթար

Մնամ եղբայրդ

ՍՄԲԱՏ ՄՍՐԿՈՍԵԱՆ

Սմբատին գրած նամակին պատասխանը զրեցէք, զուվեցէք եղբօր զղումը խնդրուած շաբարին մերժումին համար. ըսէք թէ այդ զղումը աւելի սիրելի ըրած է զինքը, խչպէս նաեւ այն նուէրը, զոր ընդունած էր հօրմէն, և որ հիմա կը նուիրէ քրոջ, բայց քոյրը կ'ուղէ հաւասարապէս բաժնել իրենց մէջ և ի միասին ուտել:



### Դ. Ա. Ա. Ը.

### ՀԱՐՈՒՍԻ ՄԸ ՍՊԱՍԱԽՈՐԸ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ,

Սփոռոց. — Ծածկոց:

Բժիշկ. — Հիւանդութիւն

Բժշկող:

Շնչառապառ. — Շունչը՝ կտրած:

Սնդութ. — Գութ չունեցող:

Դեղագործ. — Դեղ շինող:

Վիրաբուժ. — Վերք բժշկող:

Դագաղ. — Մեռելի սնտուկ:

1. Հարուստ մարդ մը սպասաւոր մը կանչեց իր քով և ըստ. «Կուզե՞ս իմ քով ծառայութիւն ընել»: — Այո՛, սիւրով, տէ՛ր իմչ» — Քանի տարեկան ես: — Մայրս մեռնելու ատենները կըսէր թէ տասը տարեկան եմ. այս հաշուով այժմ քսան տարեկան ըլլալու եմ: — Մօրդ մեռնելը քանի՞ տարի է: — Կարծեմ թէ քսան տարի կայ մօրս մեռնիլը: — Ուրեմն երեսուն տարեկան կ'ըլլաս չէ թէ քըսան: — Այդ հաշուով ըսածնիդ ուղիղ է, սակայն հայրս, որ խելացի մարդ մ'էր, կ'ըսէր. «Տղաս, ի՞նչ որ ըսես կամ լսես, տասը միշտ գեղեցէ» ուստի այս գեղցումի\*\* հաշուով քըսան տարեկան կ'ըլլամ: — Նատ աղէկ, հիմա հասկցար. դալով քու ծառայութեանդ. նախ խօսիմ թէ ի՞նչ կերպով պիտի ծառայեաֆ. Երբ բան մը հրամայելու ըլլամ, անմիջապէս զայն մանրամասնութեամբ կատարելու ես: — Կաղաչեմ, տէ՛ր իմ, այդ մանրամասնութիւն ըրածդ ի՞նչ է: — Օրինակի համար. եթէ ըսեմ. սեղաննը\*\* պատրաստէ. դու շուտով մը պնակները. դգալները, պատառաքաղները, անձեռոցիկները, ջորի շիշը, գաւաթը\* բեր շարէ: — Եթէ այս է ձեր ըսածը, բան մը չէ:

2. — Մէկ քանի տարիներ տէր և ծառայ աղէկ տպրեւէն վերջը, յանկարծ տէրը հիւանդացաւ, և իր ծառային ըստ որ իր դրացի բժիշկը\* երթայ կոչէ: Մառան անոր տունը գնաց, որոյ հեռաւորութիւնը իր տունէն երկու վայրեան չէր տեսեր. բայց մէկ ժամ, երկու ժամ, երեք ժամ, չորս ժամ, հինգ ժամ անցաւ, և տակաւին ծառան երեւան չելաւ:

Գիշերը ծառան շնչառապառ եկաւ տիրոջը տունը, որ

բարկանալով ըստ «Ո՞ւր մնացիր, անդուժ մարդ, զիս  
պիտի մեռյնէի՞ր : — Կաղաշեմ, տէր իմ, մի՛ բարկանաք,  
ձեր հրամանը մանրամասնութեամբ կասարեցի . Եօթը ժամէ  
ի վեր գիւղէ ի զիւղ, քաղաքէ ի քաղաք կը պարտիմ, որպէս  
զի բան մը չմոռնամ . գիտէք որ հիւանդի մը հա-  
մար խնամատար\* կին մը պէտք է, գտայ զայն և հետո  
առնելով գեղագործ մը գտնելու ետեւէ եղայ . ուստի դիւղ  
գացի և զայն գտնելով, մտածեցի որ գեղագործին\*\* ալ ըը-  
ժիշկ մը պէտք էր, ուստի քաղաք իջայ հետո առնելով իր-  
նամակալ կինը և գեղագործը, բժիշկն ալ քաղաքին գտնելով  
ունեցայ երեքհոգի : 2. — Մտածեցի որ բժիշկն ալ վիրաբուժի  
պէտք կընայ ունենալ, գիւղէն այն ալ բերի և ունեցայ չորս  
հողի : Մտածեցի նաև որ քու մեռնելէդ վերջը քահանայի  
ալ պէտք պիտի ըլլայ, չորս հոգւովս եկեղեցի գացի և քա-  
հանայ մը առնելով ունեցայ հինգ մարդ . հիմա այս ամենքը  
վարը կ'սպասեն : — Ալ ուրիշ մէկը չկանչեցի՞ր : — Այո՛, դա-  
դաղ շինողը, դադաղակիրները, մոմակաները . գերեզման  
փողող\* ժամկոչը, ամենքն ալ վարը կ'սպասեն :

Ծերունին ծառային սոյն գործքին հաւնելով կտակ ըրաւ  
որ մեռնելէն վերջը հինգ հարիւր ոսկի արուի անոր, սակայն  
գժրաղդաբար ծառան տիրոջմէն առաջ մեռաւ : (1)

Հարցւունիք . — Ծառան ի՞նչ հաշուով քսան տարե-  
կան էր : — Տէրը ի՞նչ կուղէր որ ըներ ծառան : — Սպա-  
սաւորը ինչո՞ւ բժշկին դնաց : — Ինչո՞ւ ուշացաւ : — Տէրը  
ի՞նչ կտակեց :

(1) Այսն դասը օրինակէ օրինակութեան տետրիդ մէջ :

Աղնիւ Ընկեր իմ,

Ձեր ՏՈՒՐԵՐԻ ԱՇԽԱԲՐՀԻԿԻ ԼԵԶՈՒԻ դասագրքին խիստ  
պէտք ունիմ այսօր, որովհետեւ երկուշաբթի օրուան դասս  
պիտի պատրաստեմ, կը խնդրեմ որ գրաբերիս հետ ինձ  
դրկել հաճիք, և ընդունիք չնորհակալեացս հաւասարին :

Մասուցանելով յարդանացս հետ եղբայրական սէրս,  
1904 Յունիւար 4 Մնամ ընկերդ  
Թւոկիւտար Դ.Ա.ԶԱՐ ՅՈՎ.Ա.ԿԻՄԵՍՆ

Կաղարին սոյն նամակին պատասխանը գրեցէք, թուա-  
կանը և տեղը, ուրկէ գրուած է, յիշեցէք նաև խնդրուած  
գրքին զրկուիլը :


ՀՐԱՀԱՆԳ. — Ուղղելիք . — Քաշինք . — Վարեկամ . —  
Բուռ . — Էլուխ . — Հրթեհ . — Դաշել . — Հաւկիդ . — ցեղուն . —  
սերունք . — Բանակ :

Ուղղագրութիւն . — Գտնել քսան բառ, որ իր մէջ ու-  
նենայ դ գիրը :

Զրօսանիք զիրի մը յաւելմամբ . — Աւազան, -արագ,  
-առխ, -ուր, -անկ, -արդ, -նուշ, -որթ : (1)

Զրօսանիք զիրի մը փոփոխմամբ, ինասի նոյնութիւն .  
— Ճկոյթ, ճկոյթ, բճիճ, բջիջ, գէճ, գէչ, գծուծ, գծուծ,  
խնծոր, խնծոր, թակարդ, թակարդ, սաղաւարդ, սաղա-  
ւարդ, գունդ, գունդ :

(1) Աւազան — գաւազան եւայլն :



Դ Ա Ա Թ.

Ս Ա Ր Դ (Միկալ)

ԴԱՍԱԽՈՍՈՒԻԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Սարդ. — Մամուկ:

Գարշելի. — Պիղծ.

Աղտեղի. — Աղտոտ:

Այլանդակ. — Անձոռնի:

Թունաւորք. — Թոյն ունեցողներ:

Հարթ. — Շիտակ:

Ճիրան. — Թաթ:

Զրասուն. — Զրի մէջ ապրող:

Փոքրափոր. — Ստորին որովայն:

Կը յարձակի. — Վրանին կը

վազէ:

Գիշակեր. — Մեռած մարմին ու-

սող:

Ընդարձացունեն. — Թմբեցնեն:

1. — Սարդը միջատ մ'է երկայն ոտքերով և այլանդակ  
մարմնով: Նա գարշելի է աղսեղի սովորութեամբը: Կայ տե-

Միջատակերք. — Միջատ ու-  
սողներ:

Գարանի կենալ. — Պահուըտիւ:

Կղակ. — Դունչ:

Թոյն. — Զէհիր:

Մսան. — Մսոտ մաս, դնդեր:

Փաղիթ. — Թունաւոր մամուկ:

Որս. — Բռնուած ճճի, միջատ:

Թեթեւընթաց. — Թեթեւ քա-

լող:

Խրելով. — Մացնելով:

Ոստայն. — Էօրիւմճէք:

Պարկաւոր. — Պարկ ունեցող:

Յանկարծ. — Մէկէն ի մէկ:

աակ մը սարդ<sup>\*\*</sup>, որոյ խածուածքը վտանգաւոր է, բայց մեր երկրին մէջ չկայ այն: Մեղ ծանօթ սարդերը, որոց մէջ կը գտնուին թունաւորք և միջակերտք<sup>\*\*</sup>, դարանի կը կենան, և յանկարծ իրենց որսին՝ ինչպէս ճանճին՝ վրայ յարձակերպ կը խածնեն և թունաւորելով կ'ընդարձացնեն զայն, յետոյ կը ծծեն անոր արխնը: իրենց կղակները<sup>\*</sup> թոյն կը պարունակեն, և ծայրերն՝ ասեղներով ծածկուած մնաններ, որոնցմէ կ'ենէ տեսակ մը նիւթ, որով կը շինեն իրենց ոստայնը: Սարդերէն ոմանք ջրասուն են: 2. — Վնասակար է գաշտային սարդը կամ վաղիթը, որ թունաւոր է: Ոնոր տեսակէն է պարկաւոր սարդը, որ թեթեւընթաց կը վազէ՝ կրելով իրեն փոքրափորին տակ իր հաւկիթները, որ պարունակուած են կանաչագոյն և հարթ բոժոժի<sup>\*\*</sup> մը մէջ: Կայ նաեւ տեսակ մը սարդ՝ միկալ կոչուած: աս գիշակեր է, մարմինը սեւ՝ և կարծր մազերով ծածկուած, թաթերը շատ երկար են, ունի մազուա ճիրաններ: Ոկոանները թոյն կը պարունակեն: Երբեմն տղայոց վրայ կը յարձակի և անսոնց մարմնոյն կը վակչի, ճիրանները մնին մէջ խրելով արխնը կը ծծէ: կը յարձակի թռչնոց բոյները, աղաւնոցները<sup>\*</sup> և հաւնոցները, կը խեղդէ կենդանիններն և արիւննին կը խմէ: <sup>(1)</sup>

Հարցմունք. — Ի՞նչպէս կենդանի է սարդը: — Ի՞նչ տեսակ սարդեր կան: — Թունաւոր սարդն ի՞նչպէս արխն կը ծծէ: — Միկալն ի՞նչ տեսակ սարդ է:

ՀՐԱՀՈՒՆԳ. — Ռողագրութիւն, — Գտնել քսան բառ որ է գիրն ունենայ իր մէջ:

Զբօամֆ գիրի փոփոխմամբ, իմասի նոյնութիւն. — Թող, թոք, կաթսայ, կատսայ, գափնի, դաբնի, թանկ, թանդ, մագիլ, մաքիլ, սարբինայ, սարփինայ:

(1) Օրինակէ սոյն դասը օրինակութեան տետրիդ մէջ:

Իրազիս. — Հաւկիք. Միջամներու և հաւերու այն բերքն  
է, որոց վրայ պատաժ է կեղեւը, և մէջը կան հեղուկ մար-  
միններ, որոց մին սպիտակ է և կը գտնուի կեղեւին անմի-  
ջապէս տակը, խսկ միւսը. դեղին և գնդաձեւ է, որ կը գըտ-  
նուի սպիտակ հեղուկ մարմնոյն տակ. այդ հաւկիթներէն  
յառաջ կուգան ձագեր, որ կը կոչուին ծուածին. այսպէս են.  
հաւը, աքաղաղը, թռչունները և այլն,

**Убийца бывшего**

Գասերս լաւ՝ պատրաստելուս համար ուսուցչես գեղեցիկ պատկեր մը ընդունեցայ, զոր կը յանձնեմ քեզի։ Ընկերս՝ Յակովիս իր գասերը չէր պատրաստած, ուստի խստիւ պատժուեցաւ և հրապարակաւ յանդիմանուեցաւ։

Մայր, ի՞նչ գէշ բան մ'է յանդիմանուին։ Այսուհետեւ պիտի ջանամ ամէն առաւօտ կանուխ ելնել և լաւ մը սերտել դասերս։

1904 Յունիս 1  
Երևան

Մնամ հլու որդիդ

Զարմայրի նամակին պատասխանը գրեցէք . ըստք թէ  
մայրը ընդունած է իր նամակը . թուականը , տեղը , ուրիշ  
գրուած է , յիշեցէք . մայրը թող զգացնէ թէ ծոյլ աշակեր-  
տին և աշխատասէրին միջեւ ի՞նչ խտիր կայ . յորդորէ յա-  
րատեւ աշխատասիլութեան :

P.U.U.  $\Phi$ .

902 սարգելու

ԴԱՍԱԿՐՈՒԹԻՒՆ - ԸՆԹԵՐՑԱԿՈՒԹԻՒՆ,

Յաճախել . — Նատ երդիալ :	Անտառապահ . — Անտառի
Մերժել . — Զընդունիլ :	պահապահ :
Ծառատառան . — Պարագա մը , ուր շատ ծառեր կան :	Զօրոնուլ . — Խաղալ :
Սողոսկել . — Բանելով վեր ել- նել :	Միրգ . — Պտուղ :
	Եշանակել . — Հասկցնել :
	Հրաւէր . — Կոհ :

4. — Դպրոցի մը մէջ Սարդիս անունով չար տղայ մը կար, Պետրոս անոր քով կը յաճախէր\*\* մինչդեռ ճնողքն և ուսուցիչները կ'արգ իլէին :

Զորեքշաբթի օր մը, երբ Պետրոս դուրս ելաւ, մայրը  
անոր ըստաւ. «Մի մասնար ինչ որ քեզի պատուիրեցի, եթէ  
Սարգիսին հանդիպելու ըլլան, և եթէ քեզի կոչէ իրեն քով,  
մերժէ հրաւելը». — Բայց, մայրիկ, եթէ պատճառը հարցը-  
նելու ըլլայ, ի՞նչ ըսեմ. — Իսէ անոր թէ մայրս արգիլած է  
քեզի հետ խաղալ:

2. — Գերազարար նոյն օրը Պետրոս Սարգիսին հանգիպեցաւ. ինչ մեծ տարբերութիւն\* երկուքին մէջ։ Պետրոս բարեկիրժ տղայ մը կ'երեւէր. իսկ Սարգիս խիստ չար. անոր շավիկը պատռաւած էր, և աղոտու գլխարկը մինչեւ ականջներուն վրայ դրուած, և ձեռքերը երկու գրպանին մէջ էր, որ կ'ըսէր անոր. «Կուգա՞ս հետո, Պետրոս, երթանք

խաղանք։ — Պետրոս չհամարձակեցաւ մերժել<sup>\*</sup> և այդ անպիտան տղուն հետ ելաւ գնաց։

3. — Ծառասատանի<sup>\*</sup> մը պատին վրայէն կ'երկննային ինձորենւոյ ճիւղեր, որոց վրայէն կախուած էին հասուն պտուղներ։ Սարդիս զանոնք Պետրոսին ցուցուց և ըստ . «Ինձոր ուտել կուղե՞ս, առանց ստակի քեզի կերցնեմ»։ — Ո՞չ, այդ բանը գողնալ կը նշանակէ. — Կորի՛ր, ապուշ, ո՞վ պիտի իմանայ, ահա դիտէ, պատին քարերուն մէջ ծակեր կան, ոսքերս և ձեռքերս հոն դնելուս պէս վեր կը սողոսկիմ, և կը հասնիմ ինձորներուն։

4. — Սարդիս պատին վրայէն ճիւղերուն կը հասնի և ինձորները բրցնելով կ'լսէ. «Օ՞ն, տեսնենք, գլխարկի պիտի բանա՞ս որ մէջը նետեմ»։ Պետրոս կը վարանի տակաւին, կարծես թէ ըսել կուղէր. Ո՞չ, չեմ կրնար ընել այդ բանը։ Սակայն մտերմական զգացումներ կը լւեցնէին զինքը. ուստի կը բանայ իր դլարկը գողցուած պտուղները մէջը ընափունելու համար։ Բայց վարը, ճամբուն միւս կողմը մէկը կը նշմարուի։

5. — Սա անտառապահն<sup>\*\*</sup> է. Սարդիս զայն կը նշմարէ, պատէն վար կը ցատքէ. Երկուքն ալ կ'սկսին փախչիլ. բայց Պետրոսին սիրար<sup>\*</sup> չեմ կրնար հասկցնել թէ ի՞նչպէս կը զարնէր։ Կը վաղեն, կը վագեն, մինչեւ որ շունչերնին կը կորի. անտառապահը երկայն սրունքներով<sup>\*</sup> կը հասնի առոնց ետեւէն և երկուքն ալ կը բռնէ։

6. — «Օ՞ն, նայինք, կ'ըսէ անտառապահը, չարագործ տղաքներ, առջեւս ինկէք, բանտ պիտի տանիմ»։ Երբ ետ կը գառնային, փողոյը մարդիկներով լեցուն էր, անտառա-

պահը Սարդիսին ականջէն կը բռնէր և խստութեամբ կը քաշէր, վասն զի քանի մը անգամ արդէն բռնած էր։ Իսկ Պետրոսի հետ մեղմութեամբ<sup>\*</sup> կը վարուէր, և կանցնէր զայն իրեն տանը առջեւէն։ Մայրը նշմարեց Պետրոսը, դուռը վազեց և գոչեց. «Աստուած իմ, Պետրոսի կս, ի՞նչ ըբիր»։ Անտառապահը Պետրոսը իր մօրը յանձնեց և գողութիւնը յայտնելով լաւ խրատ մը տուաւ անորց Պետրոս երբէք չմուցաւ այն օրը, երբ անհնազանդ<sup>\*\*</sup> գտնուած էր իր ծնողաց։<sup>(1)</sup>

Հարցմունիք. — Պետրոս որո՞ւ հետ ընկերացաւ։ — Սարդիս ի՞նչ կուղէր գողնալ։ — Անտառապահը ի՞նչ ըբաւ։ — Երկու տղայոց մէջ ի՞նչ տարբերութիւն կայ։

ՀՐԱՀԱՆԴ. — Ուղղագրութիւն. — Գտնել քսան բառ, որ իր մէջ ունենայ և գերը։

Իրազիս. — Ուսայն. — Մանր թերթով շինուած մամուկի բնակարանը կամ լարած որոգայթն է, որով ճանճ և ուրիշ միջատներ կ'որսայ և կոտէ։

Լրանալիք. — Համբը կը տեսնէ, բայց չկրնար . . . . — Կազմ կը խօսի, բայց չկրնար . . . . — Զրոյ մէջ եփուած բաննարեղէններն իմ կերակուրներս . . . . — Օդին գէշութեան ջնայելով ճամբորդութիւնա . . . . — Հեռուէն զանդակի ձայն մը . . . . — Ընկերներս զիս իրենց բարեկամ. . . . — Դու անցեալ տարի այս տարունէ աւելի. . . . — Նա մեր բացակայեղած ատենը. . . . — Հանդէսը շատ երկար. . . . — Այս երիտասարդը իր հօր և մօր խրատները . . . .

(1) Սոյն գաար օրինակէ օրինակութեան տետրիդ մէջ։

Գ. Ա. Ա ԺԱ.

Պ Ո Ս Ֆ Ո Ր

ԴԱՍԱԿԱՐԱՎՈՒԹԻՒՆ - ԲՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ,

Անոահան . — Զափի չունեցող : Ցցուած . — Վեր տնկուած :  
Կերթեւելին . — Կ'երթան կու . Շոգեկառք . — Շոգիով գացող  
դան : Կառք :

Շոգենաւ . — Շոգիով գացող Ծաւալ . — Տարածութիւն ջրոյ .  
նաւ : Եւայլն :

Նախորդ . — Մացած : Զանդուած . — Շաղուած ,  
Ահագին . — Ահաելի , մեծ :

կոյտ :

4. Կոստանդնուպոլսոյ կամ Պոսֆորի նեղուցը իւր եր-  
կու եզերաց վրայ ունի բազմաթիւ գիւղեր, որոց մէջ նշա-  
նաւոր են Պէյֆօզ, Քանիսիլի, Գուզկուննուի, Խւսկիւտար .  
իսկ անոր հանդիպակաց կողմը, Կ. Պոլիս, Կալաթա, Բերա,  
Պէշիկրաչ, Օրբագիդ, Պէպէֆ, Թարապիա, Պէօլիմբէրէ:  
Ոսկեղիւրի երկու եզերաց վրայ կը գտնուին, Պալար, Եյուպ,  
Խասպիլ, Քէնատինանել :

Սոյն գիւղերուն մէջ կը գտնուին Տէրութեան վարժա-  
րաններ, Հայ վարժարաններ ու եկեղեցիներ, ինչպէս նաև  
օտարադպերաց վարժարաններ և նշանաւոր շինքեր<sup>\*\*</sup> ու զրօ-  
սաւեղիներ: Յիշատակելի են մէկ քանի լեռները, ինչպէս.  
Եսուա-Տաղը, Չամլընա, Պուլկուրլու: Իսկ մզկիթներէն՝  
Այս-Խօթիա, Սուլբան-Ահմետ, Եկնի-Ճամի, Եւլն. Կոթող-  
Ներէն՝ Տիֆլի-Թաւ, Զէմպէրլի-Թաւ, Եանկըն-Քէօսկի:

Կ. Պոլիս ունի մեծ շուկայ մը, որ ամէն կողմանէ կը դե-  
մեն մարդիկ առեւտուրի համար:

2. Պոսֆորի աշխարհացոյցին մէջ կը տեսնենք Մար-  
մարա և Սեւ ծովերը, Նեղուց, ծովածոց, զլուխ, եւալին:  
Ասոնց վրայ համառօտ ծանօթութիւն մը տամ ձեզի: Երբ  
ջուրերու՝ ընդարձակ և անսահման տարածութիւն մը տես-  
նէք, որուն վրայ կելթեւելին նաւեր, շոգենաւներ<sup>\*\*</sup>, նաւակ-  
ներ, այդ ընդարձակ ջուրց ծաւալին կը սենք ծով: Նոյն  
գիւրով ցամազին ալ դաշտ: Մեպենք թէ ձեր շըակայքը  
գտնուած լեռները, փողոցները կամ գիւղերը և կամ բա-  
զաները ջուրով ծածկուած ըլլան. ի՞նչ կանուանենք զայն:—  
Ծով:— Հիմա պիտի սովորէք թէ ի՞նչ է կողմն, այդ ենթա-  
դրուած ծովին մէջ գտնուող տունկերը, լեռները, որ ջուրէն  
վեր բարձրացած ըլլան, կը սուխն կողի. իսկ լե՞ռ՝ ցամաքին  
հաւասար բարձրութենէն դէպի վեր ցցուած ահազին հո-  
ղոյ զանդուածին<sup>\*\*</sup> կ'ըսուի: Եթէ այդ լեռը ջրով շրջապատ-  
ուած<sup>\*</sup> ըլլայ, կը նաև ըսել, ելիզ, ի՞նչպէս կը տեսնէիր զայն:—  
Այս, չորս կողմը ջրով ծածկուած կը տեսնէի և միայն  
Եռուան գագամթը, որ ցամազ մ'է, ջուրէն վեր բարձրացած:

3. Ահաւասիկ ձեղ երկրորդ օրինակ մը. ենթադրենք  
որ ձեր փողոցը՝ և շրջակայքը<sup>\*</sup> ծով մ'է. անոր մէջ գտնուած  
փոքր ու մեծ քարերը ի՞նչ կ'ըսուին. գիտէ<sup>\*\*</sup>ք: — Կողիներ:—  
Բայց եթէ այդտեղ գտնուած կողիները խիստ շատ ըլ-  
լան, զանոնք պարունակող ծովն ի՞նչ կ'ըսուի. Արշակեղա-  
գոս:— Հիմա պիտի բացարեմ<sup>\*\*</sup> լինը: Կը լիչէք, երբեմն  
զուարճանալու համար փոքրիկ, երբեմն ալ մեծ փոսկը կը  
բանագ և չորս կողմը հողով կը պատէք, կը ձեփէք մէջն և

Հոն կը լեցնէք ջուր և մէջը փարբիկ փայտէ նաւեր\*\* ձգելով  
կը քաշէք թելով մը հոս ու հոն . ահա լիճն ալ այդ ջրա-  
մեջ փոսին կը նմանի , թէև խիստ ընդարձակ է : Այդ լիճին  
և ծովուն մէջ կը թափին\* գետեր . բայց գիտէ՞ք թէ ո՞ւրիէ  
կուգան այդ գետերուն ջուրերը : — Լեռներուն ստորոտնե-  
րէն : — Ի՞նչպէս ջուր կը ժողվուի\* հոն : — Երբ անձրև գայ,  
անձրեւին ջուրը կը ծծէ հողն և խր տակը կը ժողվէ : Խոկ  
եթէ ձիւն դալու ըլլայ: — Սրեւը ծաղելուն պէս այդ ձիւ-  
նը ջուր կ'ըլլայ: — Լաւ ուրեմն , ձիւնն ի՞նչ բանէ շնուած  
է : — Ջուրէն : — Հորին ջուրերն ո՞ւրիէ են : — Հողին ծծած  
ջուրերը՝ գետնին տակէն՝ գետեր , գետակներ կազմելով  
կ'անյնին , և հորին ջուրը կը մատակարարեն: (1)

Հարցմունիք . Ի՞նչ կ'իմանաս ծով , կղղի , թռ , լիճ ,  
գետ եւայլն ըսելով :

ՀՐԱՀԱՆԳ.—Ռողելիիք . — Վեր իշնել . Վար ելնել . Հաց  
լսմել . Ջուր ուտել . Յամաքի վրայ լողալ . Հացով կտրել .  
Դանակով ալոցել . Սղայով տաշել . Մուրճով ծակել . Ճիրա-  
նով ծեծել . Ակնօցով փորել :

ՆԱԽՈՒՐԻՆԻՔ . — Գիշերուան պէս մութ: — Զիու պէս  
արաղլնիթաց: — Իշու պէս յամառ: — Վարդի նման անուշա-  
հոս: — Եանթի պէս արագ: — Մօր մը նման ինսամտառ:

(1) Օրինակ սոյն դասը օրինակութեան տետրիդ մէջ :

Դ Ա Ս Ժ Բ Բ .

Լ Ե Ղ Ի Ն Է

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Հեծեց . — Լացաւ :

Զերծ . — Աղաս :

Սպեղանի . — Դեղ մը :

Գգուանք . — Մէր :

Միաթեւ . — Մէկ թեւով :

Ուշաղիր . — Միտ դնող :

Անդօր : — Տկար :

Ներքեւ . — Բանի մը տակը :



1. — Հինդ տարեկան  
Մի աղջկան

Մեքենայ\*\* մի կտրեց տարաւ  
Աղ թեն . (Ի՞նչ աղէտ սրտադրաւ:)  
— Մանկիկն այնքան հեծեց , լացաւ ,  
թափեց այնքան արցունք և ցու  
Որ հայրաբար

Աստուածն արդար

Գթութեան շող\* մ'ուղղեց լրան ,

— Ամենաբուժ սպեղանի . —

Որ փոյթ գոցեց վէլքին բերան  
Եւ միաթեւ , ալ կենդանի

Հատոյց խր մօր

Մանկիկն անդօր:

2. — Անցան օրեր , և Հեղինէ

(Հեղինէ էր անունն , ըմբ\*.)

Ալ զերծ\* վէրքէ , դառնութենէ  
Ամէն առառու կ'երթար դասի,  
Եւ անդադար  
Գիլք կը կարդար :  
Եւ իր պարտուց խիստ ուշադիր  
Զախովն այնքան լաւ գրէր գիր  
Որ վարժատան յարկին ներքեւ  
Ինքն առնելով նիշ ու պարգեւ  
Միւս աղջկանց  
Գրդուեր նախանձ :

3. —Յանկարծ մի օր մեծ և բարի  
Կին մ' (ամուսին մեծ դեսպանի,)՝  
Գիւղին մէջէն անցած ատեն  
Կանդ առաւ և գիւղապետէն  
Խնդրեց խկոյն  
Որ փոքրագոյն ,  
Ա.Ալ խելայի , յառաջադէմ\*\*  
Միւ աշակերտ բերեն իր դէմ :  
—Մարդ զրկեցին և Հեղինէն  
Առին բերին վարժատունէն :

4. — Աղջիկն անվախ ,  
Կազմ և ուրախ ,  
Ա.Ալ թեւազուրկ երբ երեւառ ,  
Ազնիւ տիկնոջ աչքը լեցաւ ,  
Եւ գդուանոք քաղցրաձայն  
Իր գրկաց մէջ առնելով զայն

Ցուաւ պաշիկ  
Եւ «փոքրիկ աղջիկ ,  
Բոսւ , գո՞ւ եմ որ դու այդպէս  
«Աշխատասէր\*\* և խոհեմ ես ,  
Լաւ կը գրես , լաւ կը կարդաս  
Եւ կ'ումնիս ինչ որ տան քեզ դաս .  
«Արդ փոխարէն  
«Աւատօրէն  
«Քեզ վարձատրել\* կ'ուղեմ այսօր .  
«Բոէ , ի՞նչ տամ , գրքո՞յկ մ'աղուոր ,  
«Հագո՞ւստ , պատկե՞ր թէ խաղալիկ ,  
«Կ'ուղե՞ս շաքար կամ ուտելիք ,  
«Կ'ուղե՞ս օղեր .  
«Մի՞ , մի՞ վախեր ,  
«Բոէ շիտակ ,» իսկ Հեղինէ ,  
Հոգին լցուած ցնծութենէ ,  
Բացաւ շրթունքն և խնդագին  
Գոշեց . «Թեւ մը տրւէք , տիկին :» (1)  
Ս.Դ.Հ.Ք.Ս.Ա.Դ.Ր. Փ.Ս.Ն.Ո.Ս.Ե.Ա.

*Հարցմունիք . — Աղջիկը ինչո՞ւ համար աջ թեւը կորսընցուցած է : — Հեղինէ ո՞ւր կ'երթար : — Ի՞նչու իր ընկերներուն նախանձ կը պատճառէր : — Որո՞ւ ներկայացաւ : — Հեղինէ ի՞նչ ինդրեց անկէ :*

*ՀՐԱՀԱՆԳ . — Լրանալիք . — Գիլքը կը շարեն . . . . Գրամը կը պահեն . . . . — Պնակները կը դնեն . . . . — Ուտելիքը կը դնեն . . . . — Ցորենը կը դնեն . . . .*

(1) Սոյն դասը օրինակէ օրինակութեան տետրիդ մէջ :

Ուղղելիք. — Երկաթը ծանր է, անոր համար շատ դիւրաւ կը վեցուի: — Քոյրս խիստ բարեսիր է, անոր համար իմ պտուղներս յափշտակելով ինք կուտէ: — Այսօր օդը պայծառ էր և գեղեցիկ, ուստի հովանոցս բացի եւ դուռնեն դուրս ելայ:

Երազիս. — Աւելան. — Առանին [տան վերաբերած] սպաս մ'է. որուն վրայ կերակուրներ, պատառաքաղ, դդալ, անձեռոցիկ, սկաւառակ, ջուրի չիշ և գաւոթ կան, և շորջը կը նստին տան բնակիչք, եթէ հիւր ունենան, իրենց հիւրերով:

### Դ Ա Ս Ժ Գ.

#### Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

ԴԱՍԱԿԱՐԱԳՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Գործունեայ. — Աշխատող :	Արձակել. — Թողուլ :
Դատարկ. — Պարապ :	Չմերուկ. — Պառուղ մը :
Լուսահուտ. — Պատուհան :	Կը գասախօսէ. — Դաս կուտայ :
Պաշարել. — Չորս կողմը առնել :	Բայն. — Թուչոց բնակարան :
Անգլուխ. — Գլուխ չունեցող :	Մրջիւն. — Միջատ մը :

#### 1. Վ Ե Ա Ս Խ Ը Ծ Ա Ռ Ա Յ

Երբ տանուտէր մը տուն գալով իր ծառան ի քուն գտաւ, «Ո՞րչափ ծոյլ ես, ըստ. ամէն ատեն որ գամքեղի քնացած կը տեսնեմ»: «Տէ՛ր իմ, ծոյլ չեմ, այլ շատ

գործունեայ լինելուս համար է որ գատարկ\* մնալ չեմ սիրեր, զի քուն ալ ինձ համար աշխատութիւն մ'է». պատասխան տուաւ ծառան:

#### 2. Ա Վ Ա Ք Ա Տ Ի Գ Ո Վ Ա Յ

Գող մը գիշեր ատեն աղքատ մարդու մը տան լուսամուտէն ներս մուաւ, և սկսաւ մոթի մէջ ձեռքելն ասդին անդին երկնցնել, որպէս զի գողնալու բան մը գտնէ: Աղքատը, որ գեռ քնացած չէր, ըստ անոր. «Բարեկամ, դուն եկեր ես գիշերով բան մը վնառել այն տեղ, ուր ես ցերեկով բան մը չեմ կարող գտնել»:

#### 3. Գ Լ Խ Ա Կ Ո Ր Ջ Ա Բ Ն Ո Ր Մ Է

Զինուոր\* մը պաշարեալ քաղաքի պարսպի մը վրայ քնացած ատեն, թնթանօթի գնատակ\* մը գալով անոր գլուխը տարաւ. որիշ զինուոր մը զայս տեսնելով «Վա՛չ, պուաց, ի՞նչպէս պիտի զարմանայ սղորմելին՝ երբ արթնայ և տեսնէթէ անդլուխ է»:

#### 4. Ս Ր Ա Մ Ի Տ Վ Կ Ե Կ Վ Ա Յ Ա Յ

Գիւղացի\*\* մը իր էշով ճամբայ ելած ատեն թեթեւսումին մէկը խեղճը ծաղրելու համար սկսաւ ետեւէն կանչել «Ո՞ւր բարով երկաքնիդ մէկուեղ»: Գիւղացին դարձաւ և ըստ. «Երեքիս համար խոս վնառելու»:

#### 5. Մ Ի Ա Մ Ի Տ Վ Կ Ե Կ Վ Ա Յ

Պարտիզպան մը իր աղաքներէն մէկուն երկու հատ ընմիր թուղ\*, կուտայ որ իր բարեկամին նուէր տանի. ճամբան խեղճ տղան թուղերուն գեղեցկութեանը չգիմանալով

մէկ հատը կ'ուտէ։ Բարեկամը ընծայաբերին\*\* թուղթէն իւմանալով թէ երկու հատ պէտք է լինին թուղերը, կը հարցընէ ծառային թէ՝ «Ո՞ւր է միւս թուղը»։ «Միւոր կերայ, պատասխանեց բարեմիտ ծառան»։ «Ի՞նչպէս», կ'ըսէ տիրոջ բարեկամը զարմանալով։ Այն ատեն միամիտը միւս թուղն ալ բերանը կը նետէ, և «Այսպէս կերայ, պարո՞ն»։ ըսելով այն ալ կուտէ։

#### 6. ԶՄԵՐՈՒԿԵՎ ԳՈՂ

Պարտիզան\*\* մը իր ձմերուկանոցը\*\* մանող գող մը բռնելով՝ երբ «Դու այդ տեղ ի՞նչ դործ ունիս»։ Հարցուց, գողը պատասխանեց. «Վերէն անցնելու ատենս՝ քամին՝ զիս այս տեղ գլորեց»։ — «Հապա ինչո՞ւ ձմերուկը բռներ էիր»։ — «Քամին այս տեղէն ալ զիս վերցնել ուղեց. ուստի զիս ուրիշ տեղ մ'ալ չուանելու համար՝ ձմերուկին փաթթուեցայ»։ Պարտիզանը այն ժամանակ դողին պարկը\*\* հետազօտելով հարցուց. «Հապա այս պարկին մէջի ձմերուկները ի՞նչ են»։ — Գողը պատասխան տուաւ. «Ես ալ այդ բանին վրայ կը մտածէի, երբ գուն վրայ հասար»։<sup>(1)</sup>

Հարցմունիք. — Քնասէր ծառան ի՞նչ պատասխան տուաւ. — Աղքատը ի՞նչ պատասխանեց գողին։ — Զինուորը ի՞նչ ըստ անդլուխ զինուորին համար։ — Գիւղացին ի՞նչպէս նախատեց իր ծաղրածոները։ — Միամիտ տղան ինչո՞ւ կերաւ երկրորդ թուղը։ — Գողը ի՞նչ պատասխանեց պարտիզանին։

ՀՐԱՀԱՆԴ. — Ուղագրութիւն. Գտնել քսան բառ որ իր մէջ ունենայ վի զիրը։

<sup>(1)</sup> Օրինակէ սոյն գասը օրինակութեան տետրիդ մէջ։

Լրանալիք. — Զգուշացէք որ չ'աղտոտէք մելանով. . . . — Մօրուքը կ'ածիլեն. . . . — Դլուխը կը սանտրեն. . . . — Գրիշ կը կտրեն. . . . — Մարդ կը սնանի. . . .

Իրազիս. — Նարինջ. — Նարինջը պտուղ մ'է որ կը սիրէ տաք երկիրներու մէջ ածիլ. այս պտուղը կլոր է և վրան ծակոտ կեղեւ ունի. մէջն ալ թթու, անուշ մսոտ և ջրոտ մարմին մը կայ. զայն հեռաւոր երկիրներէ կը բերեն։ Իր ծառը կը կոչուի նարնջենի։

Հետեւեալները բառարանը նայերով նշանակութիւնը գրել. — Բերդ, փերդ, գալարս, գաւարս, շաղախ, շաղազ, նքոյր, նգոյր, ներգեւ, ներքեւ, ապուր, ապուռ, խաղախ, խաղազ, թուռ, դուռ։

Դ Ա Ա Ժ Դ Դ.

#### ԳՈՂԻ ՄԸ ՏՂԱՆ

ԴԱՍՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Սովոր էր. — Սովորութիւն

ըրած էր։

Գողնալ. — Գողութիւն ընել։

Կարծել. — Հաւատալ։

Մնաց. — Կեցաւ։

Դարձաւ. — Եսեւը դարձաւ։

Ասուածալախ. — Ասուած։

մէ վախցոզ։

1. — Մարդուն մէկը սովոր էր գրացւոյն արտը երթալ ցորեն գողնալու։ Օր մը ութ տարեկան տղան հետն առաւ և պարկին անոր ձեռքը տալով արտ մը մտաւ և ասդին ան-

գին նայեցաւ զիտնալու համար թէ արդեօք տեսնող մը կա՞յ։  
Աղէկ մը նայելէն ետքը, երբ տեսաւ որ մարդ չկայ, պարկը  
տղուն ձեռքէն առնելով սկսաւ իր գործը յառաջ տանիլ։

2. — «Հա՛յր, ըստ տղան, տեղ մ'ալ մնաց, ուր նա-  
յելու մոռցար»։ Մարդը վախնալով պարկը գետինը դրաւ-  
ու ըստաւ. «Ո՞ր կողմը, տղաս»։ կարծելով թէ զինքը դիտող  
մէկը կայ։ Տղան պատասխանեց. «Դէպ ի երկինք նայելու  
մոռցար, որպէս զի խմանայիր թէ Աստուած զքեղ կը տեսնէ»։

3. — Այս Աստուածավախս տղուն յանդիմանական խօս-  
քըն այնպէս ազդեց հօրը որ անմիջապէս տուն դարձաւ, և  
մէջ մ'ալ գողութեան չգնաց, միտքը պահելով իր որդւոյն  
այս ճշմարտութիւնը թէ Աստուծոյ ամենատես\*\* աչքը զմեղ  
միշտ կը տեսնէ։<sup>(1)</sup>

Հարցմունիք. — Մարդուն մէկն ի՞նչ ընելու սովոր էր։—  
Օր մը հեաը ո՞վ առաւ և ի՞նչ տուաւ անոր։ — Յետոյ ի՞նչ  
ըրաւ։ — Տղան ի՞նչ ըստաւ։ — Հայրն ի՞նչ ըրաւ։

ՀՐԱՀԱՆԳ. — Ուղղելիք. — թդում, յամնիլ, մնտենալ,  
բառաւոր, իւլացի, ինել, ձուցնել, գլուղ, նայապետ։

Զրուանիք զրի փոփոխամբ, իմասի փոփոխութիւն.  
— Սուրճ, բարտէզ, սակառ, նահիճ, լերկ, խեր, լինդ,  
կապիկ։<sup>(2)</sup>

Բացաւրելի բառեր. — Աղաւնիի կամ գառնուկի պէս  
անմեղ։ — Փայլակի պէս փայլող։ — Ստուերի պէս անցնիլ։  
— Մըջիւնի պէս ժրաշան։ — Սոխակի պէս երգել։ — Տերեւի  
պէս գողալ։

<sup>(1)</sup> Օրինակէ սոյն դասը օրինակութեան տետրիդ մէջ։

<sup>(2)</sup> Սուրճ — մուրճ, քարտէզ — պարտէզ եւայլն։

Դ Ա Ս Բ Ժ Ե.

ԱՍՏՈՒԱԾ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆ. — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆՆ

Ոսկեգոյն. — Ոսկիի գոյն։	Կանթեղ. — Լամպար։
Զմրուխթ. — Զիւմրիւտ։	Շքեղ. — Փառաւոր։
Գոհար. — Պատուական քար։	Փայլիին. — Կը փայլին։
Անբաւ. — Շատ։	Անհամար. — Թիւ չունեցող։
Գունաւոր. — Գոյն ունեցող։	Լուսագեղ. — Լուսի նման- թեւեն։ — Թուչին։
Գեղաւոր. — Գեղաւոր։	գեղեցիկ։

1. — Մա՛յրիկ, նայէ, ի՞նչպէս սիրուն  
Են այս ծաղիկներ։

Կալմիր, ճերմակ և ոսկեգոյն,  
Դաշտն է լեփ լեցուն։

Ի՞նչ ալ անուշ հոտ ունին, մայր։  
Ոիրեմ ես զանոնք։

Մին է զմրուխտ, միւլը գոհար,  
Գոյն ունին վառվառ։

Մայր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ,  
Ո՞վ ցանեց այսպէս։

— Աստուած, տըլաս, Նա, որ տըւաւ  
Մեղ բարիք անբաւ։

2. — Մայրիկ, նայէ, ի՞նչպէս աղուոր  
Են այս թռչուններ,  
Ունին փափուկ թեւ գունաւոր,  
Հանդերձ փառաւոր։

Ճիւղէ ի ճիւղ կը թռչըտին,  
Անտառն է բռներ  
Իրենց ճիվ ճիվ, ու երբ կամին,  
Կը թեւեն յերկին:  
Մայր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ  
Այսպէս գեղեցիկ:  
— Աստուած, աղջաս, Նա՛, որ տըւաւ  
Մեղ բարիք անբաւ:

3. — Մայրիկ, նոյե՛, ի՞նչպէս պայծառ  
Ե՞ն այս լուսիներ.  
Կը փայլփին յերկնից կամար,  
Ու են անհամար:  
Մին քան զմիւսն է լուսագեղ,  
Եւ մըմութեան մէջ  
Իբրեւ մէջմէկ վառին կանթեղ.  
Քանի՛ են շըքեղ:  
Մայր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ,  
Ո՞վ վառեց այսպէս:  
— Աստուած, աղջաս, Նա՛, որ տըւաւ  
Մեղ բարիք անբաւ: (1)  
ՈՒԹԵԱԾՈՍ ՊԵՐՊԵՐԵՑՄԱՆ

Հարցմունք. — Մօրը հետ ո՞վ կը խօսէր: — Մայրն ի՞նչ  
պատասխան տուաւ: — Ի՞նչ քանի վրայ կը խօսէին:

ՀՐԱՀԱՆԳ. — Խողագրութիւն. — Գտնել քսան բառ որ  
Իր մէջ ունենայ ն գերը:

(1) Օրինակէ սոյն դասը օրինակութեան տեսքիդ մէջ:




Դ Ա Ա Ժ Զ.

ԳՈՐԾԱՐԱՆՔ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ. — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Յօդուած. — Կապ.	Բարախում. — Սրափ զարնելն :
Կմախը. — Ամբողջ ոսկորներ :	Լանջք. — Կուրծք :
Ողնայար. — Կոնակի ոսկոր :	Ծնչափող. — Ծունչ առնելու իրան. — Վիզէն մինչ մէջքի մասը :
Փաղձախ. — Տալախ :	Կը խոռժէ. — Ներա կը մանէ :
Աղջախ. — Տալախ :	Ներշնչում. — Ներշնչելն :
Աղիք. — Պաղլասախ :	Արտաշնչում. — Դուրս չնչել :
Եռչակ. — Կոկորդի խողովակ :	Զերմութիւն. — Տաքութիւն :
Ստոգն. — Կոկորդ :	Պրկուիլ. — Քաշուիլ :
	Գանդ. — Գլխու ոսկոր :




1. — Մեր մարմնոյն մէջ կարծր  
նիւթեր\*\* կան, որք ոսկոր կ'ըստին,  
և որք իրարու հետ կապուելով կը  
կազմեն բազմաթիւ յօդուածներ:  
Ոսկորներու ամբողջը կմախից կը կոչ-  
ուի, որ մարմնոյն նախակողմն ըլ-  
լալով անոր ձեւ կուտայ և զայն կանգուն կը բռնէ ամէն  
կեցուածքի մէջ: Կմախըը առանցք մը տնի, որտն վրայ  
բռնուած են բոլոր միւս ոսկորները. այդ առանցքը իրանին  
ետեւը միջին գծին վրայ վերուաս ի վար կ'երկարի և կ'ըս-  
ուի ողնայար: Կմախքին\*\* վրայ շատ լաւ կ'որոշուին գլխուն  
երկու մասերն՝ դէմք և գանկ. իրանին երկու մասերն՝ լանջք

և որովայն, վերին և ստորին անդամք իրենց մասերով. վերշապէս վիզն՝ որ ողնայարին վերի ծայրէն կը բաղկանայ և կը կը գլուխը:

2. — Իրանը երկու մեծ խոռոշի բաժնուած է. մին լանջքն է, որ կը ձեւանայ ողնայարով, տաճն և երկու զոյտ փղոսկրներով<sup>\*\*</sup> և մի կրծոսկրով. միւսը որովայնն է, որ լանջքին տակ կը գլուխնուի, և անկէ կը զատուի մաշկով մը: Լանջքին մէջ պարունակեալ են սիրար, երկու թաքերը, չնչափողը և ստուգն. որովայնին մէջ կան ստամոքս<sup>\*\*</sup>, աղիք, լեարդ, երիկամունք, փայծախ, և լն:

3. — Սիրար մոէ բասկ մ'է, և երկու խորշի կը բաժնուի, մին կ'ըստի աջ սիրս, խոկ միւսը ձախս սիրս: Չախս սրտէն ենող երակն իր ճիւղերով կ'ըստի օնչերակ. խոկ աջ սրտին մէջ բացուող ուրիշ երկու երակներ՝ հանդերձ իրենց ճիւղերով՝ կ'ըստին սեւերակ. չնչերակաց առաջին ծայրերը իրարու կը միանան հերափողիւներով: Սիրար բոլոր չնչերակներով և սեւերակներով միասին կ'ըստի արեան ցըանի դործարան, որուն կեդրոնն է սիրար:



Չախս սրտին մէջ կարմիր արիւն կայ, որ չնչերակաց միշոցաւ մարմնոյն ամէն կողմերը կերթայ, և ամէն հիւսուածոց մէջ թափանցելով զանոնք կը նորոգէ, այնպէս որ հիները մասամբ կ'այրէ իր պարունակած թթուածնին մէջ, և արդիւնքն՝ ջուր և ածխային թթուած՝ իր մէջ կ'առնէ փոխարէն թողով՝ նոր հիւսուածներ կազմելու համար հարկ եղած հիւթը. այս փոփոխութեամբ կարմիր արիւնը կը մթագնի, և կ'ըլլայ սեւ արիւն. այն ասեն շարունակելով իր ճանրան՝ կը մանէ սեւ երակաց ճիւղերուն մէջ, որոց հետեւելով կուգայ կը թափի աջ սրտին մէջ: Արեան այս շրջանը՝ ձախս սրտէն մեկնիլ՝ և մարմնոյն բոլոր հիւսուածներէն<sup>\*\*</sup> անցնելէն ետք երթալ աջ սրտին մէջ — մեծ ցըան կը կոչուի:

Սեւ արիւնը աջ սրտէն կը մեկնի և բոխային օնչերակին միջոցաւ կ'երթայ թոքին մէջ, հոն կը թողու իր ածխային թթուն<sup>\*\*</sup> և նոր թթուածին առած կը նորոգուի, և կ'ըլլայ կարմիր արիւն, և մանելով բոխային սեւերակին կը դառնայ ձախս սրտին մէջ, ուսկից կը վերակսի մեծ շրջանը. աջ սրտէն ենել՝ և թոքերուն մէջէն անցնելէ եսքը գալ ձախս սրտին մէջ՝ փոքր ցըան կը կոչուի. արեան շարժում կուտան սրտի կծկումները, որոնք կը ծնանին սրտի բարախումը և չնչերակաց զարկը:<sup>(1)</sup>

**Հարցմունք.** — Մարմնը ի՞նչ մասերէ կը բաղկանայ: — Երանի բաժնուածները որո՞նք են: — Սիրար ի՞նչ բաժնուածներ ունի: — Արիւնը ի՞նչ միջոցաւ շրջան կ'ընէ երակաց մէջ:

**ՀՐՈՀԱՆԳ.** — Հետեւութիւն. — Պէտք է սիրել ինչ որ բարի է. արդ Աստուած բարի է. ուստի պէտք է սիրել զԱստուած:

(1) Սոյն դասը օրինակէ օրինակութեան տեսարիդ մէջ:

Դ. Ա. Ս ԺԷ.

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆՆ

1. ՈՍԿԻՒ ԳԵՂՆՈՒԹԻՒՆԸ

Մարդու մը հարցուցին թէ ինչո՞ւ համար գեղին է ոսկին. պատասխանեց թէ զինքը ուղղված է այնշափ՝ շատ են որ երկիւղէն\* գեղներ է:

2. ԱՆՉԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Օր մը հայր և որդի միասին ճաշ ընելու ատեն որդւոյն ուշադրութիւնը\*\* ուրիշ տեղ լինելով կերակուրը տաք տաք բերանը կը տանի, որուն ցաւէն կ'սկսի արցունք վաղել աչքերէն: «Որդի՛ս, ինչո՞ւ կուլաւ». կ'ըսէ հայրը: «Ողորմած հոդի քոյլս միտքս ինկաւ». կը պատասխանէ որդին: Հօրը ուշադրութիւնն ալ աղուն խօսքերուն վրայ դաւնալով, ինքն ալ տաք տաք կերակուրը առնելով բերանը կը տանի: Երբ հօրը աչքերէն ևս կ'սկսի արցունք վաղել, որդին կը դառնայ և կը հարցնէ, «Հայրիկ, հապա դուք ինչո՞ւ կուլաք: — Անոր համար կուլամ որ, կ'ըսէ, քեզի ալ քոյլիդ հետ չժաղեցի:»<sup>(1)</sup>

Հարցմունիք. — Ճաշի ատեն սեղանին վրայ որդին ու հայրը իրարու ի՞նչ պատասխանեցին:

ՀՐԱՀԱՆԳ. — Բացատրութիւն բառից. — Քառակուսի արջանակ մը, որոյ վրայ իրարու մօտ դաւաղաններ կան, չորս

(1) Օրինակէ սոյն դասը օրինակութեան տեսրիդ մէջ:

անկիւնները մէկ մէկ ոտք ունին և կոթ մ'ալ, հաստատուած է մէկ կողմին վրայ, բոլորովին երկաթէ շինուած և անագով կլայեկուած, որուն վրայ կը տապկեն ձուկ. — Ի՞նչ է:

Լրանալիք. — Երկիր մը, ուր շատ լեռներ կան, երկիր մ'է . . . : Քաղաքը, որ ծովուն եղերը կը դտնուի, քաղաքը մ'է . . . :

Հետեւութիւնիք. — Անոնք որ չեն ուսանիր, միշտ տգէտ են. արդ ծոյլերը չեն ուսանիր. ուստի ծոյլերը միշտ տգէտ պիտի ըլլան:

Ուղղելիք. — Յակովի հովանէքը կը սիրեր միւս որդիններնեն ալլելի, վասն զի Յովանէիը Յակովիայ ձերուդեան ատենը ծնաց էր. Յակովի այլ և այլ հոյներէ ցաղկէ պաքմուճան մը շինելով Յովանէին յագցուձ:

• • • • • • • • •

Դ. Ա. Ս ԺԷ.

ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ԶԵՒԵՐ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Ուղիղ. — Շիտակ:

Բեկեալ. — Կոտրտած:

Տարածութիւն. — Բնդարձաւ կութիւն:

Գագաթ. — Բանի մը վերի մասը:

Կոր. — Ծուռ.

Ամենանուրը. — Ամենաբարակ:

Անկիւն. — Քէօշէ:

Անկիւնաչափ. — Անկիւն չափող:

Դմբէթ. — Խուպոէ:

Մակերեւոյթ. — Բանի մը վրան:

• • •

1. Երեք տեսակ գիծ կայ. ուղիղ գիծ, կոր գիծ եւ  
բեկալ գիծ :

ՈՒՂԻՂ ԳԻԾ

2. Երկու կէտերու մէջ քաշուած զանազան\*\* գիծերէն  
միշտ ամենակարծը ուղիղ գիծն է։ Երկու կէտերու մէջ մէկ  
մէկ ուղիղ գիծ միայն կրնայ քաշուիլ։


3. Գիծ մը երկու ծայր\* ունի, որ մէկ մէկ կէտին գի-  
ծերու ծայրերը այրութենի գիրեր դնելով կ'ըսենք. ա բ  
գիծը զ դ գծէն աւելի կ'արժէ։

ա ————— բ ————— դ ————— դ

4. Գիծը ամենանուրը\*\* նշան մ'է երկու կէտերու մէջ  
ձգուած եւ ունի միայն երկայնութիւն։

5. Կէտը ամենափոքր նշան մ'է ու բնաւ տարածութիւն  
չունի, եւ չը չափուիր։

6. Երբ երկու ուղիղ գիծեր մէկ ծայրով իրարու դպչին,  
մէջտեղի բացուածքը անկիւն կ'ըսուի։ Գրաստախոակը չորս  
անկիւն ունի, դասարանը չորս անկիւն ունի։



ԱՆԿԻՒՆ ՄԸ

7. Երկու ուղիղ կամ Երկու կոր գծեր, որ իրարու մօտ  
գտնուելով իրենց ամբողջ երկայնութեան մէջ հաւասար հե-

ռաւորութիւն ունին, կ'ըսուին զուգահեռական զծեր։ Երկա-  
թուղւոյ զոյգ գիծերը, քանակին զոյգ կողերը զուգահեռա-  
կան են։

ԶՈՒԴԱՀԵՌԱԿԱՆ ԳԾԵՐ

8. Անկիւնը կազմող երկու ուղիղ գծերը կող կ'ըսուին,  
իսկ կողերուն իրարու դպած տեղը զագաք։ Սնկեան մե-  
ծութիւնը ո'չ թէ կողերուն երկայնութենէն, այլ անկեան  
բացուածքէն կափեալ է։

9. Երեք տեսակ անկիւն կայ, ուղիղ անկիւն, բուք  
անկիւն և սուր անկիւն։ Անկիւնները Սնկիւնաչափ ըս-  
ուած գործիքով կը չափուին. ուղիղ անկիւնը իննուսուն աս-  
տիճան է, սուր անկիւնը անկէ աւելի փոքր, բութ անկիւնը  
անկէ աւելի մեծ։ Ուղիղ անկիւնի մը երկու կողերը իրարու-  
ողզահայեաց կ'ըսուին։

10. Առարկայի\*\* մը երեսը Մակերեւոյք կը կոչուի, որ  
միայն երկու տարածութիւն ունի. Երկայնութիւն և լայնու-  
թիւն, և կ'ըլլայ երկու տեսակ. Հարք և կոր։ Սեղան մը,  
գիրք մը, տախտակամած մը հարթ մակերեւոյթներ ունին.  
գունտ մը, գլան մը, հաւկիթ մը, գմբէթ մը կոր մակերե-  
ւոյթներ ունին։


11. Մակերոյթի ձեւերը շատ են. ոմանք կանոնաւոր  
կ'ըսուին, ոմանք անկանոն։ Կանոնաւոր մակերեւոյթներ են.  
Եռանկիւն, բառանկիւն, բազմանկիւն, բոլորակ և ձուաձեւ։

12. Եռանկիւնը երեք ուղիղ գծերով ձեւացեալ է, և  
երեք անկիւն ունի։ Եռանկեան երեք կողերէն յատակինը

խարիսխ կը կոչուի, և բարձր կեցող անկիւնը՝ զագար: Մի՛ քանի տեսակ եռանկիւն կայ. ուղղանկիւն եռանկիւն, հաւասարակող եռանկիւնածեւ եռայլն :

13. Քառանկիւնը չորս ուղիղ գծերով ձեւացեալ է, և նոյնքան անկիւն ունի: Քառանկեան տեսակներն են. քառակուսի, ուղղանկիւն, սարանկիւն, սեղանածեւ ևայլն. քառակուսին չորս հաւասար կողերով և չորս ուղիղ անկիւններով ձեւացեալ քառանկիւնածեւ մ'է:

14. Բազմանկիւնը չորսէ աւելի կողերով և նոյնչափ ալ անկիւններով ձեւացեալ մակերեւոյթ մ'է: Հնգանկիւնը, վեցանկիւնը, ութանկիւնը եռայլն բազմանկիւններ են:



Եռանկիւն



Բուլորակ



Սուերանկիւն

15. Բոլորակը կոր գծով ձեւացեալ կը ը ձեւ մ'է, եւ ընդհանրապէս կարկինով կը գծուի: Բոլորակին ճիշդ մէջ տեղը բանող կէտը կեդրոն կ'ըստի, և բոլորակը շրջապատ: Կեդրոնէն գէպ ի շրջապատ տարուած ուղիղ գիծ մը շառաւիդ կ'ըստի, իսկ կեդրոնէն անցնելով շրջապատը երկու հանդիպակաց կէտերէ կարող ուղիղ գիծ մը տրամագիծ կը կոչուի: Տրամագիծը երկու կիսաշրջանակ կամ կիսարուրակ հաւասար մասերու կը բաժնէ բոլորակը: Բոլորակի մը շրջապատին մէկ մասն աղեղ կը կոչուի:

16. Զուածեւը երկայն բոլորակ մ'է, որուն մէջ կան մեծ և փոքր երկու կէտեր: (1)

Հարցմնունիք.—Որո՞ւ կ'ըստի ուղիղ գիծ, բեկեալ, կոր գիծ, անկիւն, զուգահեռական գիծ, եռանկիւն, քառակուսի, բոլորակ, վեցանկիւն ևայլն:

ՀՐԱՀԱՆԳ.—Բացատրութիւն.—Առարկայ մը, որ ապակիէ շինուած է և կը բաղկանայ երկու ամաններէ քով քովի, որոնց մէկուն մէջ աղ և միւսին մէջ սև պղպեղ կը դնեն. մէջտեղը ունի անգեղ մը, որով կը բռնեն:

Հետեւութիւննիք.—Ո՞չ մէկ մարդ ազատ է տկարութենէ. ես մարդ մըն եմ. ուստի ես տկարութենէ ազատ չեմ:

Բոլոր թռչունները ձուածին են. արդ արծիւը թռչուն մ'է, ուստի արծիւը ձուածին է:

Բոլոր մետաղները երկրին ծոցէն կ'ելնեն. արդ երկաթը մետաղ մ'է, ուստի երկաթը երկրին ծոցէն կ'ելնէ:

Գիրֆ.—Գիրքը դպրոցական պիտոյք մ'է, որուն մէջ աշակերտն իր գասը կը սորվի: Այս առարկայն կը բաղկանայ շատ մը գրուած թերթերէ, ուրտեղ պատկերներ ալ կը գտնուին երբեմն, կողերուն վրայ երկու հաստ թուղթերէ ծածկոյթներ կան. այս բոլորը ամրացեալ է կտաւէ կամ կաշիէ կողքի մը վրայ:

Ուղղագրութիւն. —Գտնել քսան բառ որ իր մէջ ունենայ իս գիրը:

(1) Օրինակէ սոյն գասը օրինակութեան տեսարիդ մէջ:



Դ Ա Ս Ժ Թ

### ԱՇԽԱՏԱՍԻՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՍԱԿԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Բաւեց . — Բաւական եղաւ :	Փակել . — Գոցել :
Յանկացող . — Փախաքող :	Ապագայ . — Դալիք :
Տքնիլ . — Անքուն մնալ :	Փորձանք . — Վատանք :
Վշտաց . — Ցաւերու :	Յամառ . — Մտիկ չընող (ինատճը) :
Անդադար . . . Միշտ :	Տատան . — Երերալն :
Զերդ . . . Նման :	Անդորր . — Հանդարս :
Տակաւին . — Դեռ :	Ապերախտ . — Երախտիք չգիտցող :
Անհատնում . — Զհատնելիք :	Մեզմ . — Բաղցր :

Մ Ա Ց Ր Ն

— Մըտիկ ըրէ , ժամն է վեց,  
Ե՛լ , որդեակ իմ , չե՞ս լըսեր .

Կ'անցնին ժամերն , ա՛լ բաւեց ,  
Շատ կարդացիր այս գիշեր :

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս

— Մայր իմ , ինդրեմ , ո՛հ , զիս թող ,  
Զը սորվեցայ տակաւին  
Ինչ որ բարուցս ցանկացող\*\*  
Վարպետներս ինձ դաս տըւին :

Մ Ա Ց Ր Ն

— Ինչ անհատնում գիր ու դաս . . .  
Դու կ'աշխատիս օրն ի բուն ,  
Բայց արդ ժամ է որ երթաս  
Փակել աշերդ մեղմ ի քուն\*\* :

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս

— Մակայն , գիտե՞ս , ձըմրան մէջ  
Օրերն , ո՛վ մայր սիրական ,  
Այնքան կարճ են որ տասն էջ  
Սերտելու չեն բաւական :

Մ Ա Ց Ր Ն

— Ե՛լ , դու մըտիր յանկողին\* ,  
Վաղը առառ , Տէ՛ր վկայ ,  
Ես իսկ , քեզ դաս տըւողին  
Պիտ' ըսել դամ որ քիչ տայ :

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս

— Մայր , մի՛ ըսեր , ինդրեմ մի՛ ,  
Դու չես գիտեր թէ ո՛րքան

Նա կը ջանայ, կը կամի  
Պատրաստել իմ ապագան\*\*:

Մ Ա Յ Բ Ն

—Ապագայ . . . ի՞նչ ապագայ . . .  
(Ի՞նչ նոր բառեր ալ գիտեն . . .)  
Եթէ գլխուղ փորձանք գայ,  
Հիւանդ ըլլաս, այն ատե՞ն . . . :

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս

—Ո՛չ, չեմ ըլլար ես հիւանդ,  
Քանզի ուսման սիրով նոր  
Կը տըքնիմ, և մանաւանդ  
Կը խաղամ ալ ամէն օր :

Մ Ա Յ Բ Ն

—Յամա՛ռ տըզայ, ա՛նպիտան,  
Դու մայրդ երեկը չե՞ս գըմար  
Որ՝ վշտաց մէջ ի տատան,  
Կը թողուս զայն անդադար:

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս

—Մայրդ իմ ազնիւ ու բարի,  
Թեւոցդ անդորր շուքին տակ  
Դու պահես զիս յաշխարհի  
Զերդ պահապան հըրեշտակ\*\*:

Մ Ա Յ Բ Ն

—Ուրեմն ինչո՞ւ, ապերախտ,  
Դու չես անսար իմ խօսքիս,

Եւ կամակոր\*\* ու անխախտ,  
Կը մաշես սիրոս ու հոգիս:

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս

—Մա՛յր, կ'աշխատիմ ամէն օր  
Օգուտ բաղել իմ դասէն  
Որ ինձ համար «Բարի մօր  
Բարի զաւակն է.» ըսեն:<sup>(1)</sup>

Ա.Դ.Է.ԲՍՍ.Ն.ԴՐ ՓԱՆՈՍԽԱՆ

**Հարցմունիք.** —Մօր ու աղուն մէջ ի՞նչ հարցումներ տես-  
զի ունեցան:

**ՀՐԱՀԱՆԳԻ.** — Բացարութիւնիք բառից. — Բրիչ. — Սրա-  
ծայր երկաթի կտոր մ'է, փայտէ կոթի մը վրայ հաստատ-  
ուած: Դիտակ. — Գործիք մ'է, որով կը տեսնենք հեռաւոր  
տեղերը, զորս աւելի մօտ տեսնելով աւելի մօտ կը կարծենք  
ըլլալ: Մանրադէս. — Դիտակի նման գործիք մ'է, որ կը ծա-  
ռայէ ամենէն մանր բաները հազարապատիկ մեծ ցուցնելու:

**Սահմանիք բառից.** — Գրասեղան. — Գրասեղանը դպրոցի  
առարկայ մ'է, անոր առջեւ աշակերտք նստած կը զբաղին  
երենց գասերով, կը կարդան, կը գրեն, կը գծագրեն: Գրասեղանին մասերն են. Երես մը, խորշեր ու ոսքեր, նաև  
նստարան մը, որուն վրայ աշակերտները կը նստին. այս ա-  
ռարկան ամբողջ փայտէ շինուած է:

(1) Առյն գասը օրինակէ օրինակութեան տետրիդ մէջ:



Դ Ա Ս Ի.

ԱՌՏՈՒՆԵՐԸ ԿԱՆՈՒԽ ԵԼՆԵԼ

ԷԴԱՍՍ.ԽՕՍՈՒԹԻՒՆ—ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Պառկիլ .— Անկողին մտնել :	Առողջ .— Զօրաւոր :
Կարօտ .— Պէտք ունեցող :	Անդին .— Գին չունեցող :
Ապուշ .— Շօշորդ :	Զօրութիւն .— Ոյժ :

1. — Առջի իրիկուընէ կանուխ պառկիլը օդասակար է տկար մարդոց . սակայն անկողնոյ մէջ չափէ աւելի երկար ատեն անկուն մնալը շատ վնասակար է : Եթէ կ'ուզես, քանի մը օր փորձի համար մէկ կամ երկու ժամ կանուխ ե'լ, պիտի տեսնես որ նոր զօրութիւն և ոյժ պիտի առնես, զոր ուրիշ կերպով չէիր կընար ստանալ :

Անոնք որ շատ տկար չեն, պէտք է որ անդանդաղ անկողնէն ելնեն, և թէպէտ առաջին անդամ ծանր պիտի գայ իրենց, որովհետեւ տկարն առողջէն աւելի քնոյ կարօտութիւն ունի, բայց անոնց երկրորդ իրիկուան քունն աւելի անուշ կ'ըլլայ : Երկար ատեն անկողնոյ մէջ մնալը ոչ միայն վնասակար և թուլացուցիչ է, այլ և անդին ժամանակի կուրուստ, քանդի եթէ մարդը շարժմամբ այն ժամանակն անցուներ, առողջութիւնն աւելի պիտի շատնար:

2. — Անոնք որ առտոները կանուխ կ'ելնեն, աւելի առողջ, հարուստ և խմատուն կ'ըլլան : Մարդկային կենաց բոլոր թշուառութիւնք և մինչև իսկ կենաց կարճելուն միակ

պատճառը ծուլութիւնը և անհոգութիւնն է, որ սաստիկ աշխատանքներէն աւելի մարդս կը փնացնէ :

Բոլոր մեծամեծ մարդիկ գիշերուան քանի մը ժամը միայն քնանալով կ'անցունեն, և պէտք եղածէն աւելի չեն կընար քնանալ, որով իրենց կենացը մէկ մասն ալ կը շահին : Մարդս շատ քիչ քնոյ կարօտութիւն ունի, և այս պատճառաւ շատ քնացողները ապուշ կ'ըլլան : <sup>(1)</sup>

Հարցմունք.—Կանուխ պառկելու վրայ ի՞նչ գիտես : Որո՞նք աւելի շուտ ելնելու են անկողնէն : Ի՞նչո՞ւ : Ի՞նչ բանէ յառաջ կուգայ թշուառութիւնը : Հարուստները ի՞նչ ընել սովոր են :

ՀԻԱՆԱՆԳ.—Ուղղագրութիւն .— Գտնել քան բառ որ իր մէջ ունենայ ծ գիրը :

Լրանալիք .— Անձրեւ եկած ատեն մարդ պէտք չունի աղբիրէն . . . : Փոթորկի ատեն նաւը . . . : Եղբայրս դասերը չէր գիտեր, ուստի . . . : Գողը բանեցին և . . . :

Ուղղելիք .— Քրամ, կանդեղ, բարբար, բաբուկ, տուբ, վարանոյր, բող, բերի, մուդ, խալար, իշեր, սգեստ :

Իրացիսութիւն .— Խոյակ .— Խոյակ'ը բարակ' երկաթ մ'է, և թիթեղէ շնուած առարկ'այ մ'է երկայն և կլոր, ունի վրան թեւ մը որ այդ խոյակ'ը կը գարձնէ հողմոյն ազդեցութեամբ և մեղի կ'իմացնէ թէ հողմն ո՞ր կողմէն է : Խոյակները գործարաններու և տաներու վրայ կը տեսնուին ընդհանրապէս :

(1) Օրինակէ սոյն դասը օրինակութեան տեսրիդ մէջ :

Դ Ա Ս Ի Ա Յ

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ՇԱՔԱՐ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ, ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ,

Պահարան. — Տողապ:

Իմանալ. — Հասկնալ :

Անհանդիստ. — Հանդարտութիւն վաստահիլ. — Հաւատատալ :

Հունենալն :

Շարունակ. — Միշտ :

Պատուհան. — Լոյս առնելու տեղ :

Վաստահիլ. — Հաւատատալ :

Խորհեցաւ. — Մտմոաց :

1. — Մարգարիտ իր մօրը բաց պահարանին քով կեցած էր. Սենեկին մէջ անկէ զատ ուրիշ մարդ չըլլալով՝ պահարանէն չափարի թուղթը առնելը մէկը չտեսաւ. Անոր միտքը զանոնք հոսոտել էր միայն, բայց հոտն այնպէս անուշ եկաւ որ թուղթին մէկ կողմէն քիչ մը բացաւ զանոնք տեսնելու համար, յետոյ թուղթը դոցելով զանոնք տեղը դրաւ, և պատուհանը երթարով դուրս կը նայէր, և «Ի՞նչ աղուոր շաբարներ են,» կ'ըսէր ինքնիրեն:

2. — Քիչ մը եսքը դարձեալ պահարանին քով գնաց, ամենեւին միտք չուներ շաբարներն առնելու, եթէ աշխարհն ալ անոր տային. միայն զանոնք անգամ մ'ալ տեսնել կ'ուզեր. Մարգարիտ կամաց կամաց քալելով նորէն պահարանին քով եկաւ և դուրս հանեց թուղթը և բանալով մէջը նայեցաւ. Այս անգամ աւելի աղուոր երեւեցաւ անոր, և խորհեցաւ թէ «Միայն համը նայելու համար մէկ հատէն կտուքիկ մը փրցնելը վասա մը չուներ»:

3. — Ուստի կտորիկ մը փրցուց ու բերանը դրաւ,

մնացածն ալ շուտով պահարանը դնելով դոցեց Բայց համը բերնին այնչափամնուշ եկաւ ուղեց անգամ մ'ալ շաբարաներուն նայէլ: Պահարանին գլուցը քիչ մը քաշելով թուղթը գտաւ և անիկա առաւ, տեսաւ որ կերած տեղը որոշ կ'երեւէր: Երկար ատեն վրան նայելէն յետոյ ըստ. «Մէկը չհասկնար կտոր մը պակսած ըլլալը, եթէ այս կտորն ամբողջ ուտեմ». և այս ըսելով կտրած կտորին մնացեալն ալ առաւ ու վաղելով սենեակէն դուրս ելաւ: Բայց անոր ներսիդին շարունակ ըսող մը կար. «Մարգարիտ, գողութիւն ըրիր»:

Այս ձայնէն շատ անհանգիստ եղաւ Մարգարիտ, մինչեւ որ վերջապէս ըստ. «Ամենեւին հոգս չէ, ի՞նչ որ ալ ըլլայ՝ ես քիչ մը շաբար եւս պիտի առնեմ»: Մարգարիտ գնաց կտոր մ'ալ կերաւ, ետքը դնաց մէկ մ'ալ կերաւ, մինչեւ որ քանի մը անգամ ուտելէն ետքը թուղթին կէսը պարագուեցաւ: Այս ատեն վախնալով շիտակ պարտէղ վազեց:

4. — Քիչ մը եսքը մօրը ձայնը լսեց որ «Մարգարիտ, Մարգարիտ» կը կոչէր: Կամաց կամաց սուն գնաց և տեսաւ որ մայրը պարտէզին դրան առջեւ կեցած էր, շաբարն ալ ձեռքը: «Մարգարիտ, ըստ, գիտե՞ս, ո՞վ է կերեր այս պակսածը»: Մարգարիտ չպատասխանեց, միայն ամէնալով գլուխը կախեց, այնպէս որ ինք կերած ըլլալը հասկցուեցաւ: «Այս ի՞նչ է, Մարգարիտ, ըստ մայրը, ո՞րդիս, քենէ այսպիսի բան մը չէի յուսար, ես միշտ կը խորհէի թէ կընամ վաստահիլ քեզի»:

5. — Խեղճ Մարգարիտ շատ զզաց ըրածին վրայ, քանզի իր մօրը վաստահութիւնը իր վրայէն վերցուած էր, և ինքը

քանի մը չնշին շաբարի համար վշտացուցած էր զայն։ Շատ  
մը արցունք թափեց, և որոշեց որ այլ եւս դէմ չդնէ իր  
խղճի ձայնին, որպէս զի մայրը դարձեալ վստահի անոր։<sup>(1)</sup>

**Հարցմունք.** — Մարգարիտը սենեակին մէջ ի՞նչ ըրաւ։ —  
ի՞նչ մտօք պահարանին մօտ գնաց։ — Ի՞նչ ըստ և ի՞նչ  
ըրաւ։ — Անոր խղճը ի՞նչ կ'ըսէր։ — Մայրը ի՞նչ հարցուց,  
և ի՞նքը ի՞նչ պատասխան տուաւ։ — Մարգարիտ ըրածին  
վրայ զդշաց։

**ՀԲԱՀԱՆԴԻ.** — Հետեւուրիւն. — Դուք պարտիք սիրել զա-  
նոնք, որ ձեզ բարիք կ'ընեն. արդ ձեր վարժապետները ձեզ  
ուսմունք կը սորվեցնեն, որ ամենամեծ բարիքն է. ուրեմն  
դուք պարտիք սիրել ձեր վարժապետները։

**Ուղղագրուրիւն.** — Դտնել քսան բառ որ և գիրը ու-  
նենայ իր մէջ։

Բացարուրիւն բառից. — Կանեփէ, մետաքսէ, բուրդէ  
ոլորուած երկայն, բարակ առէլ մը։ — Ի՞նչ է։

### Քերականական վարժ

Կամոն. — 1. Երբ բան մը մէկէ աւելի չի ցուցունէր  
եզակի կ'ըսուի, երբ մէկէ աւելի կը ցուցնէ յոզնակի կ'ըս-  
ուի։ 2. Եղակի միավանկ բառ մը յոզնակի ընելու համար եր  
պէտք է դնել ծայրը. բաղմավանկ եղակի բառ մը յոզնակի  
ընելու համար ներ պէտք է դնել ծայրը։

Օրինակներ. — Տուն, տուներ. հաց, հացեր. գոմ, գո-  
մեր. կով, կովեր. ջուր, ջուրեր. Քաղաք, քաղաքներ. կան-  
թեղ, կանթեղներ. ճրագ, ճրագներ։

(1) Սոյն դասը օրինակէ օրինակութեան տետրիդ մէջ։

Դ. Ա. Ա իբ.

### ԱՅՐԵԼԻ ՆԻՒԹԵՐ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ. — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Հանքածուխ. — Դետնէն եւ	Ծխան. — Օձախ:
լած ածուխ:	Քանակութիւն. — Զափ:
Այրելի. — Այն որ կ'այրի:	Խոյակ. — Ծխանին գլուխը:
Ջեռուցումն. — Տաքցնելը:	Արծարծել. — Վառել:
Կ'արտադրէ. — Դուրս կը բերէ:	Յարգի. — Պատուական:
Ածուխ. — Բէօմիւր:	Փայտածուխ. — Փայտէ շն-
Ջերմանոց. — Վառարան:	ուած ածուխ:

1. — Վարժապետն\* օր մը իր աշակերտին\* պարտէզը\*  
երթալով՝ երբ սա ածուխի տեսակներուն վրայ տեղեկու-  
թիւն կը ինդրէ, կ'ըսէ. «Փայտը\* և փայտածուխը ինչպէս  
նաև հանքածուխը այրելի նիւթեր են։ Հանքածուխի ջեռու-  
ցումը կմասակար է մասամբ, իսկ փայտինը առողջարար։  
Ամենէն կարծը և ամենէն չոր փայտերը թեթեւ թաց փայ-  
տերէն աւելի կը տաքցնեն և աւելի առողջարար են։ Թաց  
փայտը աւելի մուխ կ'արտադրէ (վասն զի իր պարունակած  
ջուրը կրակին\* մէջ տարածելով կրակը կը մարէ և ասկէ  
յառաջ կուգայ մուխը)։ Այսպէս են նաև կանաչ\* կամ ջու-  
րի մէջ նետուած փայտերը։ Հիմա եթէ պարտէզին մէջ  
գտնուած ծառերը կտրենք և այրելու ըլլանք, ի՞նչ կ'ըլլայ.  
թէ կրակը կը մարէ և թէ կը միայ, այնպէս չէ։ — Այո՛։  
կարծը փայտէ շնուրած ածուխը կանաչ փայտէ շնուրած

ածուխէն խիստ շատ ծանր կ'ըլլայ, և անկէ շատ աւելի կը տաքցնէ, ասոր համար միշտ առաջինը յարդի է: Դիտա՞ծ էք, երբ ձեր հայրը ձմրան<sup>\*</sup> համար փայտ առնելու ըլլայ, կարծր փայտեր միշտ կ'ուզէ առնել: Հիմա հասկցաք թէ ի՞նչ է եղեր պատճառը:

2. — Հանքածուխը սենեակին<sup>\*</sup> մէջ վառելն աղէկ չէ, վասն զի իր մէջ մեծ քանակութեամբ կազ պարունակելով՝ երբ այրի, կազը երեւան կ'ելնէ և սենեակին օդին հետ կը խառնուի և առողջութեան կը վնասէ: Ուրիշ բան է եթէ ջերմանոցներու համար գործածուի: Պէտք է միշտ զգուշանալ ծուխէն, վասն զի գլխու ցաւ, հաղ, աչքի<sup>\*</sup> ցաւ և մինչեւ իսկ մա՞ն կը պատճառէ այն: Միսցող ծխան մը ուղղելու համար, ծխանին շուրջը շարժուն խոյակներ դնելու է, որը հովին միջոցաւ կը դառնան և ծխանը հովին ու անձրեւէն կը պատսպարեն և ծոխը դիւրութեամբ վեր կը քաշէն:

3. — Այրելիք կը կոչուին նաև ճարպը, ձէթը, կազը, քարածէթը, որոց մէջ կը գտնուի նաև ածուխ, յորմէ կայ ածուխին, փայտածուխին և հանքածուխին մէջ: Գիտնալու համար թէ փայտն ածուխ կը պարունակէ<sup>\*</sup> թէ ոչ. նախ պէտք է այրենք և ապա մարենք, և այն ատեն պիտի տեսնենք թէ մնացածն ածուխ եղած է: Հաստատելու համար նաև թէ ճարպին, ձէթին, քարէձէթին և կազին մէջ ալ ածուխ կայ, նախ կ'առնենք խիստ մաքուր և ճերմակ սկաշառակ մը և կը բռնենք ճրագին, կանթեղին, լամբարին պատրոյդին վրայ քիչ մը ժամանակ, և ապա սկաւառակը մէկդի կ'առնենք, այն ատեն պիտի տեսնենք որ ածուխի

մեծ սև բիծ մը կայ ճերմակ սկաւառակին վրայ, որ կը հաստատէ թէ ածուխ կայ այդ այրելիքներուն մէջ:<sup>(1)</sup>

Հարցմունք.—Որո՞նք են այրելի նիւթերը: — Ո՞ր փայտ աւելի աղէկ է: — Ի՞նչ և համար թաց փայտը կը միսայ: — Մուխն ի՞նչ հիւանդութիւններ կը պատճառէ: — Ի՞նչ է ճարպը, կազը, ձէթը: — Ի՞նչպէս կը հաստատուի թէ ասոնց մէջը ածուխ կայ:

ՀՐԱՀԱՆԳ.—Ուղղագրութիւն. — Կը շրջնիք ի գաղաքս և կ'այծելենք ախքատներուն, աջքով կը թիթենք, ծեռքով կը շղաբենք անոնձ ամենաթառն կեանզին վոլոր յանհամանքները:

Իրագիտութիւն. — Սենեակը կը գտնուի մարդոց յասուկ բնակարաններուն մէջ, որ չորս կողմանէ ծեփուած պատերով կամ տախտակներով շղապատուած է, վրան ձեղուն ունի և տակը տախտակամած, հոն կը գըտնուին անկողնակալ, դարակ, և պատուհաններով կը լուսաւորուի, ունի նաև դուռ մը ուրկէ սենեակին մէջ գտնուողները կը մտնեն ու կ'ենեն:

Բացատրութիւն բառից. — Թաւալիլ. — Թաւալիլ կ'ըսուի, երբ որ և իցէ առարկայ մը, որ կը ու առնենք և մղենք հարթ գետնի կամ գրասեղանի վրայ. այս գործողութեան կ'ըսենք Թաւալիլ. քիչ անգամ կը գործածուի առարկայի մը բարձրէն վար սահելուն ալ:

(1) Օրինակէ սոյն դասը օրինակութեան տետրիդ մէջ:

۲۸۰

## ՀՈՒԱՐՑԱԼԻՔ

ԴԱՍԱՀՕՍՈՒԹԻՒՆ – ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ,

Ճարտար . — Ճարպիկ :	Կանխավճար . — Առաջուընէ վճա-
Մտերժական . . . թարեկամական :	բում :
Սպասաւոր . — Ծառայ :	Արօս . — Դաշտ :
Հեծեալ . — Հեծնող :	Կահկարասիք . — Եշեա :
Նորածին . — Նոր ծնող :	Աճապարող . — Փութացող :

## 1. ՃԱՐՏՅԱՐ ԳՈՂ

Ճարտար գող մը դրամ չունենալով, կ'ուզէ առաւօտեան ընտիր նախաճաշ մը ընել. ուստի տունէն կը մեկնի և կը հանդիպի հարուստ մարդու մը, և զինքը բարեւելէ վերջ ա՛յն տեսակ մտերմական տեսութիւն մը կ'ունենայ անոր հետ որ հարուստ մարդը իր մոռցած բարեկամներէն մին կը կարծէ անիկա:

Գողը կը հրաւիրէ զինքը երթալ սրճարան մը շարունակելու համար իրենց մտերմական տեսութիւնը։ Հարուստ մարդը կ'ընդունի անոր հրաւերը, և երկուքը ի միասին կ'երթան փառաւոր ճաշարան մը։ Հոն գողը կը հրամայէ սպասաւորին ընտիր թէյ պատրաստել, ինչպէս նաեւ սեր, հաւկիթ և կաթ՝ քիչ մը հացով։ Թէյլ խմելէն վերջ կը հրաւիրէ եր կարծեցեալ բարեկամը նախաճա, բնելու։

Գողը լաւ մը կշտանալէ վերջ խօսքի կը բռնէ իր բարեկամը, և յետոյ պատուհանին առջեւէն լսուած ձայնէ մը

օգուտ քաղելով, գլուխը դուրս կը հանէ և կը պոռայ. «Քիչ մը սպասեցէք, հիմա պիտի դամ:» և դառնալով իր բարեկամն կ'ըսէ . «Կը խնդրեմ, ինձի երկու վայրկեանի համար ներողամիտ եղէք, զիս կը կանչեն, երթամ և անմիշապէս կը դառնամ:» Գողը կը մեկնի, հարուստ մարդը մէկ երկու ժամ ի զուր կը սպասէ, և վերջը թէյին և նախաճաշին դրամը վճարելով, կը հասկնայ թէ գողի մը հետ էր իր տեսութիւնը :

2. 89-88

Տղէտ մարդ մը իր ջորիին վրայ հեծած՝ շուկայ կ'եր-  
թար . գիւղացի մը մօտէն անցած ատեն ջորին սքացի կը  
զարնէ անոր . խկ գիւղացին, « Հա՛ աւանակ . » ըսելով կը  
քալէ՛ Տղէտ հեծեալը բարկանալով, ջորիէն կ'իջնէ և գիւ-  
ղացւոյն հետ կռուի կը բռնուի, կարծելով թէ անկէ նա-  
խատուած էր աւանակ բառովը . Գիւղացին կը պատասխանէ .  
« Ներեցէք, բարեկա՛մ, խօսք ջորիիդ էր, չէ թէ քեզի՛ —  
« Ջորին ո՛վ, ես ո՛վ. հա՛ ջորին, հա՛ ես. » կը պատասխանէ  
տղէտը :

3. ପାତ୍ର

Մարդ մը իր նորածին մանկան համար ատաղձագործին  
օրօրոց մը կ'ապսպրէ, և փոքր կանխալիճար մը կ'ընէ. տղան  
կը մեծնայ և ինք ի զուր կ'երթայ կուգայ օրօրոցը առնե-  
լու, որովհետև արտաքոյ կարգի ծոյլ մ'էր. Տղան կ'ամուս-  
նանայ և զաւակ մը կ'ունենայ, որովհետև օրօրոց գեռ չու-  
նէին, հայրը կը յիշէ անմիջապէս ատաղձագործը, և կ'եր-

թայ առնել այն օրօրոցը, զոր երեսուն տարի առաջ ասլուապրած էր շինել։ Ատաղձագործը կը պատասխանէ բարկութեամբ։ «Օ՞ք, այս ի՞նչ աճապարող մարդ ես եղեր, դեռ երեկ ապսպրեցիր, այսօր կուզես, ա՛ռ սա ստակդ և դնա՛»։

#### 4. ԷՇԵՐՈՒ ՄՍՅԵ

Մի քանի սրիկայ աղաքներ կ'ուղէին կին մը ծաղրել, որ իր էշերը արօտը կը տանէր արածելու. ուստի բարեւելով զինքը կ'ըսէին։ «Բարի երթաս, էշերու մայր» — «Դուք ալ բարի երթաք, զաւակներս.» կը պատասխանէր կինը։

#### 5. ՀՆԱՐԳ ՄԸ

Մարդու մը տուն գիշեր զատեն գողեր մտնելով բոլոր կահ կարասիքը կը վերցնեն, և անոր դրացիին պարապ տունը կը փոխադրէն։ Մարդն իմանալով կ'ենէ, և կը տեսնէ որ մինակ անկողինը մնացած էր, կը շալկէ զայն և դրացիին դուռը կը զարնէ։

Երբ կը հարցնեն պատուհանէն թէ՝ ի՞նչ կ'ուղէր, կը պատասխանէ։ «Մեր տունէն ելանք, հոս փոխադրուելու համար, բոլոր կարասիքս արդէն բերուած են այս տունը, և միայն մնացած է անկողին մը, այն ալ ես բերի»։<sup>(1)</sup>

Հարցմունիք.—Ճարտար գողը ի՞նչպէս ըրաւ իր նախաճաշը։ — Հեծեալլ ի՞նչ կ'անուանէր զինքը։ — Հայրը ի՞նչպէս առաւ իւր կանխավճարը։ — Կինը ի՞նչ պատասխանեց սրիկաներուն։ — Գողերը ի՞նչպէս խայտառակուեցան։

<sup>(1)</sup> Օրինակէ սոյն դասը օրինակութեան աետրիդ մէջ։

ՀՐԱՀԱՆԳ.—Ուղղելիք. — յիւանդ պանթուլտին ի տէս հնայինք։ Մի քարշիք, մտեր մի ժայայոտ սենեկի մէջ միսի դարել աղգատը։

Գաղափարաց բացատրութիւնն. — Պանիրը օդտակար մնունդ մ'է։ — Զենք կրնար ըսել թէ պանիրը օդտակար սընունդ մը չէ։ — Ո՞վ կրնայ ըսել թէ մնունդներուն մէջ պանիրը օդտակար մնունդ մը չէ։ — Ամէն մարդ կ'ընդունի թէ պանիրը իր մէջ ունի այնպիսի մննդարար նիւթեր, որ օդտակար են մարդոց։ — Պանիրին օդտակարութիւնը անկէ յայտնի է որ շատ կը սպառի և մարդիկ ախորժով կ'ուտեն իբր մննդարար բան մը։

#### Դ Ա Ս Ի Ի Դ.

#### Ն Ո Ր Տ Ա Ր Ի

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Գողարիկ. — Սիրուն :	Աւետարեր. — Բարի լուր բերող :
Կը գուրգուրայ. — Կը փայփայէ :	Կորաքարմակ. — Մէջքը ծուռ :
Խինդ. — Խինդութիւն :	Սառնամանիք. — Սառեր :
Կայտուեցէք. — Ցատկեցէք :	Անչչ. — Անմարելի :

1. — Ո՛ արղաքներ, անմեղ մանկունք,  
կենաց դրան սեմին վրայ՝

Զոր շուրջ պատեն դողտրիկ ծաղկոնք ,  
Եւ ուր զեփիւռ կը դուրդուրայ,

Յայս բուրաստան ,

Ուր խմնդք խայտան ,

Իբրեւ հրեշտակ աւետարեր ,

Ահա մի կոյս գեղածիծաղ

Ողջունելով ծաղկանց թըրիեր ,

Զեղ աւետէ սիրակենցաղ

Նոր և արի

Բարի տարի :

Զեղ ի՞նչ փոյթ թէ կորաքամակ ,

Դողդոջաքայլ մի ծերունի ,

Զմեռն արդէն կուգայ ճերմակ ,

Եւ ցըրտարեր մի սառ ունի

Ներքեւ խոնարհ

Պահել զաշխարհ :

Զեղ ի՞նչ փոյթ ձիւն , սառնամանիք ,

Մթին ամպեր և փոթորիկ ,

Մինչ ցանկալի կաղանդ մ'ունիք ,

Որ աւետէ ձեղ աղուորիկ

Նոր և արի

Բարի տարի :

2.— Օ՞ն , կայտուեցէր ժպտուն , զըւա՛րթ ,

Տանց յուսահեղ ողիքն էք դոք ,

Սեղանն է ճոխ և լուսաղարդ ,

Դադրին արտունջք և արտաստք ,

Եւ սիրաբոյր ,

Տալով համբոյր

Զեր ծնողք՝ ոյց հոդին ցնծայ ,

Զեղ նուիրեն եռանդագին

Ոսկեղօծ գիզք մ'իբրև ընծայ ,

Մաղթելով որ շնորհէ երկին

Նոր և արի

Բարի տարի :

Զեր նորածիլ սրտերուն մէջ

Թո՞ղ արեւու լուսոյն նըման

Երկինք այսօր վառեն անշէջ

Մէրն բարութեան և մէրն ուսման ,

Մէրն աղքատին

Եւ տըկարին : (1)

**Ո.Վ.Ք.ՔՍՍ.ՆԴՐ ՓԱ.ՆՈՍԵՍ.Ն**


*Հարցմունիք.*— Նոր Տարի մաղթողը ո՞վ է : Մանուկները ի՞նչ բանի փոյթ չեն ըներ .— Ի՞նչ կը նուիրեն ծնողք :

*ՀԲԱՀԱՆԴ.* — Թուշունները փետուրներով ծածկուած մարմիններ ունին (2) : Աղուանները սե կատոց ունին (3) : Գեւտերը ծովը կը թափին (4) : Ծովերուն ջուրը աղի է (5) : Բարի խրամներուն մտիկ կ'ընէ քոյրս (6) :

(1) Օրինակէ սոյն դասը օրինակութեան տեսրիդ մէջ :

[2. 3. 4. 5. 6.] Արոշել եղալին և յոգնակին :

# ՀԱՏՈՒՄԸ Պ.



Դ Ա Ս Ա

Շ Ե Ր Ա Մ

ԴԱՍԱԿՈՍՈՒԹԻՒՆ - ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

**Մետաքս.** - իփէք :

Ճարակել . - Ռւտել :

Զեռնլով . - Տաքնալով :

Շերամարոյծ . - Շերամը մեծ-

ցընող :

Մազկ . - Բարակ մորթ :

Ցախ . - Ցալը (ծառ մը) :

Շերամ . - Իփէկի որդ :

Կը գոյանայ . - Կ'ըլլայ , յառաջ

կուգայ :

Ատուար . - Հասոտ :

Սերմ . - Թօխում :

Մանանեխ . - Հարտալ :

Թթենի . - Թութի ծառ :

Փշուր . - Փշրանք :

Պարարտանալ . - Գիրնալ :

Կազմել . - Շինել :

Թիթեռն . - Քէփէնէկ :

Զու . - Հաւկիթ :

Սրբուհի' , այդ ի՞նչ է . - Թաշկինակ . - Խնչօ շինուած է .  
- Մետաքսէ : - Լա՛ւ , ի՞նչ բանէ շինուած է մետաքսը , կամ  
ո՞վ կը շինէ զայն . չես գիտեր այս . մտի'կ ըրէ ուրեմն : Մե-  
տաքսը կը շինէ շերամը . շերամը որդ մ'է որ կը գոյանայ  
մանանեխի հատի չափ սերմէ : Այդ սերմերը կամ ձուերը  
գարնան՝ արեգական տաքութեամբը ջեռնլով՝ իրենց մէջ կը  
գոյացնեն փոքրիկ որդեր , որ իրենց անդամիկներով կը ճեղ-  
քեն ձուն , դուրս կ'ելնեն : Այս ատեն շերամարոյծք զանոնք  
կը տարածեն թթենւոյ փոքրիկ փշուրներուլ\*\* վրայ , ուր  
նախ նեղուելով և ապա ախորժելով\* կ'ակին ճարակել գի-  
շեր ցերեկ : Շերամը գլխուն վրայ ունի դուրս ցցուած աշ-  
քեր , և փորին վրայ ալ տասնեւլից ոտք և երկու սուր ակ-  
ռայներ . որդը\* շատ ուտելով կը պարարտանայ և նուազիոտ  
փուած կ'իյնայ . այս ատեն շերամարոյծը կ'ըսէ . «Շերամն  
առաջին քոննը մտաւ» : Կամաց կամաց անոր ստուար մորթը  
կը ճեղքուի և տակէն կ'երեւնայ աւելի լայն և նոր մորթ-  
մը : Այսպէս շարունակ վեց , եօթը շաբաթ ուտելով և մորթն  
ալ չորսն անդամ փիփելով մատի չափ թրթուր կ'ըլլայ , որ  
ատեն իր փորին մէջ պատրաստած մետաքսի նիւթը , որ կը  
գոյանայ տերեւները ճարակելով\*\* , բերնէն կ'արձակէ ցա-  
խին ճիւղերուն վրայ , բարակ թելեր կը կազմէ , որոցմէ իր  
խողակը կը շինէ : Ութ օրէն խողակը լմացունելով մէջը կը  
պառկի , տասն և չորս օր եաբք բերնէն հանեած տեսակ մը  
հեղուկովը կը թրջէ պինդ մաշկը , կը ճակէ զայն և թիթուան  
փիփուած գուրս կ'ելնէ : Շերամորոյծք իրենց շահուն հա-  
մար՝ գեռ խողակը չծակած՝ փուռը\* կուտան , որպէս զի  
որդն անշնչանայ եւ խողակը զմաստուի : Այն ատեն շերա-

մը, այժմ թիթեռն, ունի երկու մեծ աչքեր, չորս թեւեր  
եւ վեց սպակեր։<sup>(1)</sup>

Հարցմունիք. — Թաշկինակն ինչէ՞ շնուռած է: — Մետաքսը  
ո՞վ կը շնէ: — Ի՞նչպէս է շերամը կամ թրթուրը: — Ի՞նչպէս  
թիթեռն կ'ըլլայ: — Ի՞նչպէս խողակը կը ծակէ: — Շերամն  
ի՞նչպէս կը պատրաստէ խողակը:

ՀԻՍ. ՀԱ. ՆԳ. — Ուղղագրութիւն. — Գտնել քսան բառ որ իր  
մէջ ունենայ ք գիրը:

Գաղափարաց բացատրութիւնիք. — Թուչուն մը բոյնին վրայ  
կ'երդէ. — Բոյնին մէջէն թուչունի մը երդը կը լսենք. —  
Կը լսե՞ս թուչնոյն երդը որ բոյնին մէջ կ'երդէ. — Զեմ կար-  
ծեր որ դու չսես թուչնոյն երդը. — Անստարակոյս թուչունն  
է որ կ'երդէ իր բոյնին մէջ. — Թուչունը լսելի կ'ընէ իր երդը  
բոյնին մէջէն. — Ե՞նչ անոյշ կ'երդէ բոյնին մէջի թուչունը. —  
Ես կը լսեմ այն բոյնէն ձայն մը, որ չեմ կարծեր թէ թուչ-  
նոյն երդը եղած չըլլայ:

Բացատրելի բառեր. — Հայելի, ապակի, թուղթ, կաշի,  
կողով, խաղող, մուրճ, դաշտ:

Ուղղելիք. — Այս նամակը աղջիկո կը իրէ, որ կը ցանու-  
անէ մէջ թէ իր իշխորակիկ վարժառանին մէջ արցակուրքն  
հառաջիկայ շափու կակի:

Բաղդատելի բառեր. — Չին ջորիին հետ: — Մեղքը քա-  
ցախին հետ: — Ծովը լճին հետ: — Առիւծը աղուէսին հետ: —  
Ուղողը այծին հետ:

(1) Սոյն դասը օրինակէ օրինակութեան տեսրիդ մէջ:

Դ Ա. Ս Բ.

ՏԻՆԵԼՈՅԶ ՄԱՔՐՈՂՆԵՐՈՒՆ ՏՕՆԸ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Պալատ. — Մեծ տուն:

Կոկիծ. — Ցաւ:

Գնչու. — Ջինկէանէ:

Խնձոյք. — Կերուխում:

Թափառիլ. — Սադին անդին

շրջել:

Պատուհաս. — Պատիժ:

Յանկարծ. — Մէկէն ի մէկ:

Հրդեհ. կրակ:

Վաղեմի. — Հին:

Միասին. — Մէկաեղ:

Համադամ. — Համուլ:

Մնձկութիւն. — Սրաի նեղու-

թիւն:

—

1. Հին ժամանակաւ Պօհէմիա երկիրը ծինելոյզ մաք-  
րողներուն համար մեծ տօն կ'ըլլար: Կ'ըսուի թէ այս սովո-  
րութիւն հետեւեալ պարտգայներէն ակիդքն առած է, Տի-  
կին մը ամառ ատեն, ըստ սովորութեան, ամառանոցը դա-  
շած ըլլալով, սովոր էր ամէն օր իր տղան պտըտել զրկելու  
իր ծառային հետ, որուն խսախւ պատուիրած էր տղան աչ-  
քին առջեւէն չհեռացնելու:

2. Սակայն օր մը ծառայն իւր վաղեմի բարեկամներէն  
միայն հանգիպելով ի միասին գինետուն գնաց, և տղան մի-  
նակ մնացած՝ ասդին անդին կը վաղէր: Ժամանակ մը գինե-  
տան մէջ մնալէն ետքը, ծառան դուրս ելաւ տղան փնտու-  
թու օր ճաշի տանէր, սակայն չգտաւ զայն: Նա բոլոր գիշերը  
թափառեցաւ, ամէն տեղ, ամէն կողմ հարցուց: Բայց ի դուր  
Տղան չգտնուեցաւ:

3. Տիկինը այսպիսի դառն անստուգութեան մէջ երկու  
տարի անցուց, և հակառակ սովորութեանը, ձմեռը քաղաք

չվերադարձաւ, այլ գիւղը մնալով բոլոր ժամանակը կսկիծ-ներու և միայնութեան մէջ անցուց։ Հուսկ յետոյ քոյրերէն մին ամուսնացաւ և շատ ընդգիտութիւններէն ետքը Տիկինը հաւանեցաւ պարահանդէս և հարսանեաց ինճոյք մը տալիւր տունը։

4. Հանդիսին պատրաստութեանց ինամ տանելու համար քաղաք վերադարձաւ, և մինչ կերակուրները կ'եփուէին, յանկարծ տան մէջ հրդեհի ձայններ բունեցան։ կ'երեւի թէ խոհարարաց մին կաթսան ձգելով ծխնելոյզը բռնկցուցած էր։ Ծխնելոյզ մաքրող վինտուեցին, և տղայ մը գտնելով վեր հանցին զայն, սակայն սաստիկ մուխէն տղան խղդուելու պէս եղած՝ վառարանին մէջ ինկաւ։ Տիկինը ձեռքը քացախ, և շիշ մը ոգելից հեղուկ առած վազեց եկաւ, և սկսաւ տղուն քունքը և վիզը շվել, երբ յանկարծ «Ո՞հ, իօմէն իմ . . .» գուշեց, և տախտակամածին վրայ ինկաւ անզգայ։ Հուտ մը սթափեցաւ, և տղան բաղկացը վրայ առնելով գրկեց զայն և ըսաւ. «Ո՞յս իմ սիրելի իօմէնս է, իմ սիրելի զաւակու։»

5. կ'երեւի թէ զզին վրայի նշանէն ճանչցած էր զայն և երբ վարպետին հարցուցին թէ ուսկից առած էր տղան, ըստա թէ, տարի մը առաջ երկու սոկի տուած և առած էր զայն գնչու կնոջէ մը, որ կ'ըսէր թէ նա իր զաւակն էր։ Տղան այս միայն կը յիշէր թէ քանի մը մարդիկ անոր պտուղ բերին և ըսին թէ պիտի առնէին մօրը պիտի տանէին զայն, թէ երկար ատեն էշով ճամբորդելէն և շատ ժամանակ անոնց քով մնալէն ետքը, տղուն ըսած էին. «Գուն այսուհետեւ քու հօրդ ծխնելոյզը՝ մաքրողին քով կենալու ես։» Եւ երբ անգամ՝ մը մօրը և գեղեցիկ տանը վրայ խօսեցաւ, այնպէս սաստիկ ծեծեցին որ միաքը անգամ՝ բերելու կը վախնար։ Տղան ըսաւ նաեւ թէ իր վարպետը շատ աղէկ նայած էր զինքը։

Հարցմունք. — Ժամանակաւ ի՞նչ տօն կ'ըլլար։ — Օր մը ի՞նչ պատահեցաւ։ — Ի՞նչ պատճառաւ մայրը քաղաք դարձաւ։ — Ի՞նչպէս բոնկած էր ծխնելոյզը։ — Մայրը տղան ի՞նչպէս ճանչցաւ։ — Տղան ի՞նչ պատմեց։ — Մայրը տղուն վարպետին ի՞նչ ըրաւ։

ՀՐԱՀԱՆԳ. — Ռողագրութիւն. — Գանել քսան բառ, որ եր մէջ ունենայ ձ գերբ։

Ռողելիի. — Հայրս գուռը «մէօհրեց» գնաց։ — Շատ աղաչեցի, սակայն «խէր» չ'ըրաւ։ — «Տիւտիւկ չալել» չեմ գետեր։ — Զեռքէս չպիտի «խալսիս» ըսի կատուիս։ — Քու «խաթերդ» համար պիտի գամ քովի։

Քերականական վարժ. — Կանոն։ — Ի՞նչ որ կրնանք տեսնել, լսել, ճաշակել, հոտոտել կամ շշափել իր կը կոչուի։ Շոնը կը տեսնենք, զանգակին ձայնը կը լսենք, շաքարը կը ճաշակենք, վարդը կը հոտոտենք, թուղթը կը շշափենք. ուստի ասոնք կը կոչուին իր։

Օրինակ. — Ընկուղենի, կառք, անձրեւ, մարդ, երաժշտութիւն, աղ, պտուղ, զինի, միս, պանիր, մանուշակ։

Հրահանգ. — Դերձակը լաթ մը ձեւեց<sup>(1)</sup>։ Սահակ իմացաւ որ խոտին տակ մանուշակ մը կայ<sup>(2)</sup>։ Գարբինը սալին վրայ մուրճով կը ծեծէ երկաթը<sup>(3)</sup>։ Սափրիչը հօրս մօրուքը ածիլեց<sup>(4)</sup>։ Բամպակը շատ թեթեւ է. բայց շաքարը շատ կարծր է<sup>(5)</sup>։

[1. 2. 3. 4. 5.] Որո՞նք են իրերը։

Դ Ա Ս Գ.

ԵՐԿՉՈՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԴՊՐԴԻՒՆ. — ՄԵծ ձայն :

Ծածուկ. — Դաղտուկ :

Սամուխ. — Աստիճան :

Դիզել. — Վրայէ վրայ դնել :

Վանտել. — Ճամբու դնել :

Ունաձայն. — Ռտքի ձայն :

Քաջութիւն. — Կարիճութիւն :

Գաւազան. — Փայտ :

Տնեցիք. — Տան մարդիկ :

Դահանայ. — Տէրտէր :

Գատառոր. — Դատ տեսնող :

Եղնիկ. — Կէյիկ :

1. Ժամանակաւ Սպանիա ազնուականի մը տան մէջ մեծ շփոթութիւն կ'իյնայ առ պատճառաւ որ ամէն երեկոյ կէս գիշերուան մօա ատենները սաստիկ որոսմոնքի պէս ոտնաձայներ կը լսուին, մանաւանդ մէկ պարապ սենեկին մէջ, որ միւսներէն բարձր էր : Խեղճ տնեցիք կարծելով որ տան մէջ սատանայ կայ, տակնուվրայ եղած՝ այս փորձանքը իրենց մէկ բարեկամին կը պատմեն:

2. Մարդը երեւակայութիւն է ըսելով շատ՝ կ'աշխատի կիներուն մարէն համելու այս վախը. բայց երը կը տեսնէ որ ամենքն ալ կը պնդեն, հոս բան մը ըլլալու է ըսելով՝ քաջութիւնը ձեռք կ'առնէ: «Այս իրիկուն ե՞ս կուգամ, այն սենեակը կը պառկիմ. բայց ձեզմէ զատ ուրիշ մարդ չդիտնայ.» կ'ըսէ: Յետոյ հաստ գաւազան մը առած ծածուկ կ'երթայ, կը սպասէ:

3. Մէյ մ'ալ կը տեսնէ որ իրաք կէս գիշերուան մօտ

սոսկալի դպրդիւնով մը սանդուխներէն վեր ենելու սանաձայն մը կայ. կը ցատկէ, վեր կ'ենէ, և ձեռքի փայտովը ներս մտնողին զլատուն երկու հարուած կուտայ, և սատանան սանդուխներէն վար վաղելով աներեւոյթ կ'ըլլայ: Յետոյ մարդը հանգիստ սրտով կ'երթայ, կը պառկի:

4. Առատուն կ'ենէ, կը տեսնեն որ ծառայներէն մէկուն գլուխը կապուած է, և երբ պատճառը կը հարցունեն, պատասխան կուտայ թէ այն զիշեր սատանաներէն ծեծ կերած էր: Տնեցիք զայս լսելուն պէս կ'իմանան թէ այն անզգամն է, որ իրբեւ սատանայ զիշերները տան մէջ կը պտղտի և տնեցիքը վախցնելով կը զուարճանայ: Շուտ մը վոնաեցին զայն, և շատ չնորհակալ եղան իրենց բարեկամն, որ աղատեց զիրենք վախէն:

5. Գիւղի մը եկեղեցին օր մը քանի մը գողեր կը մըանեն պատուհանէն, շատ մը զարդարանքներ և զգեսաներ մէկզմէկու վրայ զիշելով, առանց բան մը առնելու կը ձգեն կ'երթան: Առատուն լուսարարը եկեղեցին մտնելով կ'ապշէ կը մնայ, և եղածը քահանային կ'իմացունէ, այն ալ գատաւորին:

6. Մէկ երկու ամիսէն եսքը քանի մը գողեր կը բըռնուին. քննութեան ատեն իրենց ըրած այլ և այլ գողութիւնները խոստովանելէն ետքը, երբ գատաւորը կը ստիպէ զանոնք որ ըսեն թէ արդեօք եկեղեցիէն ալ բան մը գողցած էին: Գողերը կը խոստովանին թէ՝ թէպէտ ուզած էին գողնալ. բայց չին կրցած, վասն զի երկայն եղիսլուներով և կրակէ աշուըներով սատանայ մը ելած էր անոնց առջեն, և այնպէս վախցուցած էր զանոնք որ որոշած էին մէյ մ'ալ եկեղեցի շմանել բան գողնալու: Քահանան այս լսելով,

հասկցաւ որ սատանայ ըսածնին իր եղնիկն էր, որ ընտանեցած ըլլալով՝ եկեղեցւոյն շուրջը կը պարտէր, և այն գիշեր դիպուածով եկեղեցւոյն մէջ մնացած էր։<sup>(1)</sup>

Հարցմունք. — Տան մը մէջ ի՞նչ կար. — Մարդ մը ի՞նչ հնարք խորհեցաւ. — Կէս գիշերին ի՞նչ պատահեցաւ. — Ո՞վ էր այն սատանայ կարծուածը. — Գողերը ի՞նչ խոստովանեցան քահանային։

**ՀՐԱՀԱՆԴ.** — Բացաւրութիւն բառից. — Այն որ կ'աշխատի՝ երկաթը ծեծելով սալին վրայ կամ տաքցնելով բովին մէջ։ — Ի՞նչ կը կոչուի։

Քերականական վարժիք. — Կանոն. — Խօսակցութեան մէջ բառերը իրենց վերջաւորութիւնը կը փոխեն. այս վերջաւորութեան փոխուելուն կ'ըստի հոլով։ Հոլովները վեց են. Ռւղիական, Սեռական, Տրական, Հայցական, Բացառական և Գործիական։ Ռւղականը Ով հարցումով կը գըտնուի. Սեռականը Որին հարցումով. Հայցականը ԶՈՎ հարցումով. Բացառականը ՈՐՄԵ հարցումով. Գործիականը ՈՐՈՎ հարցումով։

Օրինակ. — Հայրս եկաւ<sup>(2)</sup>։ — Հօրս զգեստը բռնեցի<sup>(3)</sup>։ — Տետրակիներս հօրս ցուցուցի<sup>(4)</sup>։ — Ես հայրս տեսայ<sup>(5)</sup>։ — Հօրմէս խրատ լսեցի<sup>(6)</sup>։ — Գլխարկով եկեղեցի դացի<sup>(7)</sup>։

(1) Սոյն դասը օրինակէ օրինակութեան տետրիդ մէջ։

[2] Ո՞վ եկաւ. Հայրս. — Ռւղական։ [3] Որին զգեստը բռնեցի. Հօրս. — Սեռական։ [4] Որո՞ւ ցուցուցի. Հօրս. — Տրական։ [5] ԶՈՎ տեսայ. Հայրս. — Հայցական։ [6] Որմէ՞ լսեցի. Հօրմէս. — Բացառական։ [7] Որո՞վ դացի. Գլխարկով. — Գործիական։



Դ Ա Ա Դ.

Օ Զ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ,

ՕՃ. — Սողացող կենդանի մը : Միւրամբու. Դիւրաւ հաւացող :  
Խողովակ. — Պօռու : Անթոյն. Թոյն չունեցող :  
Թունաւոր. — Թոյն ունեցող : Խայթուած. — Խածուածք :

1. — Սողուններուն տեսակէն են օձերը, որ երկու տեսակի կը բաժնուին. թունաւոր եւ անթոյն. այս երկուքին մէջ ֆւասակարներ և անֆւասաներ ալ կան, թունաւոր օձերը ֆւասակար են իրենց թոյնով, իսկ անթոյններն իրենց ոյժով։ Անթոյն օձերն են հասարակ օձը և վիշապը, թունաւորներն են, իծը, բոժոժաւոր օձը, բարբը։

Հասարակ օճն անմեղ սողուն մ'է. օդուտ ունի երկրագործներուն, վասն զի շատ մը ֆւասակար կենդանիներ կը սպաննէ, ինչպէս մուկը, խլուրդը, և այլն։ Հասարակ օձերուն մէջ այնքան փոքրիկներ կրնան ըլլալ որ մինչև անգամ հարկ կ'ըլլայ մանրացոյցով տեսնել, իսկ մէծերը՝ գառնուկներ, ոչխարներ, կովեր կրնան ուտել, և յետոյ կը թըմիին շաբաթ մը և երբեմն քանի մը ամիս որ մարտեն. ինչպէս է վիշապը. իսկ իծը հասարակ օճէն փոքր է, տնի տափակ

գլուխ, սև փոր և երկու ակռայ, որոց մէջ է թոյնը : Տաք երկիրներ կը բնակի, աւազի մէջ կը դանուի, մաղովէն կը փախչի, իսկ երբ գրգռեն, վրան կը յարձակի, կը խայթէ և անտառ մը կամ մացառ մը կը քաշուի :

2.—Բոժոժաւոր օձն Ամերիկա կը դանուի, պոչին ծայրը շատ մը օղակներ կան որ տարուէ տարի կ'աւելնան. այս օղակներն իրարու զալմելով ձայն մը կը հանէ, որմէ կ'իւ մացուի իր գալը : Յուրա և անձրեւոտ օրեր իր բոժոժները ձայն չեն հաներ :<sup>(1)</sup>

Հարցմունք.—Քանի՞ տեսակ օձեր կան. — Օձը վնասակա՞ր է թէ օդտակար. — Օձը ո՞ր տեղուանք կը պտտի :

ՀՐԱՀԱՆՔ. — Քերականական վարժ. — Հոգի փրկութիւն, ձիթենի անտառ, որդի անդրանիկ<sup>(2)</sup>: Թաղում հանդէս, լեռ գաղաթ, գարուն սկիզբն, ձուկ փուշ, աղջիկ մայր<sup>(3)</sup>: — Տունը մուկերէն պաշարուեցաւ, երուանդ դասարանէն դուրս ելաւ, հորէն ջուր քաշեցին<sup>(4)</sup>: — Մեղուն մեղը կը հաւաքէ, դիւզացին հացը կը թրէ: Կովը խոտը կ'ուտէ<sup>(5)</sup>: Սաթենիկ կը խաղայ, արեւը կը փայլի, կապարը ծանր է<sup>(6)</sup>: — Զայնա բարեկամիս հասաւ, մանուկը դետին մօտեցաւ, մայրը տղուն ըստ<sup>(7)</sup>: — Դանակով կտրեց հացը, պանիրը հայով կերաւ, սուրճը կաթով խմեց<sup>(8)</sup>:

<sup>(1)</sup> Օրինակէ սոյն դասը օրինակութեան տեսրիդ մէջ :

<sup>(2)</sup> Տարբեր գրով բառերը յոդնակի սեռական ըրէ': [3] Տարբեր գրով բառերը եղակի սեռական ըրէ': [4] Բացառականները զատէ': [5] Հայցականները զատէ': [6] Ուղղականները զատէ': [7] Տրականները զատէ': [8] Գործիականները զատէ':



## Դ Ա Ս Ե Ե

## Գ Ո Ր Տ Ե Ր

ԴԱՍՍԽՕՍՈՒԻԹԻՒՆ—ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Պարզ .— Բաց, պայծառ: Կը կերպարանափոխի . — Կերպա-  
Լողակ .— Զուրին մէջէն շարժե- պարանքը կը փոխէ:  
լու թեւ ձուկի, գորտի: Կ'ածն .— Կը մեծնան:  
Լորձունք .— Շողիք: Անհետ կ'ըլլայ .— Կը կորսուի:  
Գորտ .— Զրային և ցամաքային Ռոկրեղէն .— Ռոկրէ շինուած:  
չորքոտանի մը: Սակաւ առ սակաւ .— Կամաց կա-  
Անասնիկ .— Պղտիկ անսատուն: մաց:  
Երկանաքար .— Զաղացքի քար: Երկակենցաղ .— Թէ ջուրի և թէ  
Կը սուզի .— Զուրին տակ կ'եր- ցամաքի մէջ ապլող:  
թայ: Ջու .— Հաւկիթ:

1. Գարնան եղանակին օդը պարզ եղած ատեն՝ երբ դուք կ'երթաք լճակի մը քով, որուն մէջ գորտեր կ'ըլլան, պիտի տեսնէք ջուրին վրայ կանաչ նիւթ մը, որ կը կոչուի գորտի լորձունք, որոց հետ խառնուած են փոքր գնդաձեւ մարմիններ՝ սեւ կէտերով: Այս գնդաձեւ մարմինները գոր-  
տի ձուեր են : Քանի մը օր վերջը այն սեւ նշանները կը սկսին մեծնալ: Երբ այս անասնիկներուն պոչը երեւնայ, անասնիկը չկրնար դեռ շարժիլ իր տեղէն, այլ կը մնայ

ձուին այն մասին մէջ, զոր դուք տեսած էք թերեւս սեւ կետերով՝ ջուրին երեսը։ Գորտիկը կամաց կամաց կը կարողանայ լողալ՝ երկայն պոչին միջոցաւ։ բայց դեռ դորտի չի նմանիր, հանդարտ կը կենայ, ձայնէ և աղմուկէ չխոռովիր. բայց երբ ջուրը յուղովի, կը սուզի յատակը։ Եթէ այս անամիկները դրուին անձրեւի ջուրի մէջ\* հոն իրենց կերակուր չեն կրնար գտնել։ Այդ անամիկները երկու ամիսէն վերջ քիչ մ'ալ կը կերպարանափոխուին, անոնց աչքերը եւ մարմինը կը մեծնան և քիչ մը յետոյ՝ եթէ քննես, կը տեսնես որ անոնք ունին երկու ետեւի սրունկը՝ իրենց պոչին մօտ։ Այս երկու սրունկները կ'աճին, և կարճ ժամանակի մէջ կ'առնուն ուրիշ կերպարանք մը։ Երեք կամ չորս շաբաթէն վերջը առջի երկու սրունկները կ'երեւան, և այն շատ կակառ երեւցած մարմինը՝ տակաւ ներքին ոսկրեղէն կազմութիւն մը կ'առնէ։

2. Ահա այս միջոցին տակաւ առ տակաւ պոչը անհետ կ'ըլլայ, նիւթը գորտին մարմնոյն մնունդ կ'ըլլայ, մինչեւ որ ըլլայ կատարեալ գորտ, այսպէս։ Այս գորտն ունի դլուխ, եւ ըսկ, սրունք, ոսքեր, և կ'ապշի թէ ջուրի և թէ ցամաքի մէջ, ուստի և ասոր համար կ'ըսուխ երկակենցաղ։ Պիտի ըսեմ ձեզի\* գորտեր ալ, որ կ'ապին առանց ջուրի, առանց օդի, ո՛չ ջուրի ո՛չ ցամաքի մէջ։ Այդ գորտերը չորս կողմէն ամրացած քարերու մէջ կը բնակին։ Հաղար հինգ հարիւր քառասուն և վեցին թուլուզի



թէ ջուրի և թէ ցամաքի մէջ, ուստի և ասոր համար կ'ըսուխ երկակենցաղ։ Պիտի ըսեմ ձեզի\* գորտեր ալ, որ կ'ապին առանց ջուրի, առանց օդի, ո՛չ ջուրի ո՛չ ցամաքի մէջ։ Այդ գորտերը չորս կողմէն ամրացած քարերու մէջ կը բնակին։ Հաղար հինգ հարիւր քառասուն և վեցին թուլուզի

մէջ ջաղացքի մը երկտնաքարը կոտրած ատեն, մէջէն կենդանի գորտ մը ելաւ։ Ուրիշ օր մ'ալ այգիի մը մէջ, երբ ամուր քար մը կը կոտրէին, կտորներէն մէկուն մէջէն գտան կենդանի մեծ գորտ մը։ Նոյնպէս հաղար եօթն հարիւր վաթսունին պատի մը մէջէն ողջ գորտ մը գտնուեցաւ, որ կարծեցին թէ պատին շինութենէն, այսինքն քառասուն տարիէ ի վեր բանտարկուած կը մնայ հոն։

Հաղար ութն հարիւր յիսուն և մէկին յունիսի 23ին երեք գործաւորներ ջրհոր մը փորած ատեն, 19 մէթրօ խորութեան վրայ գտան կիրով ծածկուած կեղեւ մը, երբ զայն երկու կտոր ըրին, յանկարծ մէջէն ցատկեց ահազին գորտ մը, զոր կշռելով հասկցուեցաւ թէ 15 կրամ ծանրութիւն ունէր։

Տակաւին չէ գիտցուած սուզգիւ թէ այդ գորտերը ի՞նչպէս կ'ապին։<sup>(1)</sup>

Հարցմունք. — Զուրին վրայի կանաչ նիւթերը ի՞նչ են։ — Ե՞րբ կը սուզի գորտը. — Ե՞րբ կը կազմակերպի գորտիկը կատարելապէս. — Գորտը քանի՞ վիճակէ կ'անցնի. — Արունկները ո՞ւր են. — Ե՞րբ ոսկրեղէն կազմութիւն կ'առնու մարմինը. — Պոչը ի՞նչ բանի կը ծառայէ. — Քարերու մէջի ամրացած գորտերուն վրայ ի՞նչ գիտես։

ՀՐԱՀԱՆԴ. — Հարցադրութիւն. — Նկարագրեցէք ձմեռը, բեթեհէմի մասուրը, Յիսուսի Ծնունդը, հրեշտակաց վառաբանութիւնը, հովիւներուն և մոգերուն երկրպագութիւնը։

Ուղղագրութիւն. — Գտնել քսան բառ որ իր մէջ ունենայ և գիրը։

(1) Սոյն դասը օրինակէ օրինակութեան տետրիդ մէջ։

Քերականական վարժք. — Մարդու. գլխով. սիրով.  
քաղաքի. եղբօրմէ. տուներէ. քաջութեամբ. պտուղներէ.  
մատով. ցաւով. սրտով. ականջով. շատերու. երգերու.  
ոչխարներու<sup>(1)</sup>:

Նմանաձայն-տարանիշք. — Ասոնք այն տեսակ բառեր  
են որ ձայնով նոյն են գրեթէ, այլ նշանակութեամբ տարբեր:  
Թասել (շոնչը բռնուիլ), դասել (փ կարդ դնել): —  
Խաղաղ (հանդարտ), խաղախ (նաւակ): — Շաղախ (ցեխ),  
շաղաղ (հում միս): — Համբոյր (համբուրելն), յամբոյր  
(անուշադրութեամբ):

Բացատրութիւն բառից. — Բան մը, որ ծառի պտուղ  
մ'է. նախ իր վրայ կանաչ կեղեւ ունի. իսկ երբ հասուն-  
նայ, կանանչ կեղեւը կը հանեն և կը մնայ տակի կարծը  
կեղեւը. սա երբ կոտրելու ըլլանք, չորս մասերէ բազկացեալ  
ընտիր և խոշոր նիւթ մը կ'ունենանք. — Ի՞նչ է:

Լրանալիք. — Անօթի է, որովհետեւ . . . : — Ադամ բո-  
լոր մարդոց . . . : — Յուրաք մարմինը . . . : — Աշխատասէր  
տղաք պիտի . . . : — Աղքատ մարդուն բարեկամները անկէ  
. . . : — Արաքը իր ձին . . . : — Շունը մեր տունը . . . :

Ուղղելիք. — «Հայրուր» հոգի տեսայ. — «Եղին» գա-  
ցի. — Տունը «Երեցաւ». — «Անտար ըսի, խոսք մտիկ չըրաւ.  
— «Խօրաթա» ըրիք. — Վարժապետը «Կանկատ» ըրաւ. —  
Զեռքերս «Վուլացի». — «Իցցուն» տուն գացի:

(1) Հանձ թէ իւրաքանչիւր բառերը ի՞նչ հոլով են, և թէ  
որո՞նք եղակի և որո՞նք յոդնակի են:

Դ Ա Ս Զ.

ՄԱՔՐԱՍԷՐ ԱՂՋԻԿԸ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ - ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Միամիտ.	— Միտքը բարի:	Տաժանելի.	— Դժուարին:
Զգն.	— Խելօք:	Աւարտել.	— Լմացունել:
Խաղի.	Կենդանեաց պառկե-	Հեղ.	— Անոյշ՝ մեղմ բնութեան
	լու տեղ:		տէր:
Անզգամ.	— Խրատ մոի՛ չընող:	Մաքրասէր.	— Մաքրութիւն սի-
Կամուրջ.	— Զուրի, ձորի վրայ՝ բող:	Կամուրջ:	— Ծուէր.
	ճամբայ:		— Ծնծայ:



1. Մաքրասէր աղջիկը միշտ գեղեցիկ և  
սիրուն կ'երեւնայ. Այս մասին ձեզի փոքրիկ  
պատմութիւն մը ընեմ:

Ժամանակաւ փոքրիկ աղջիկ մը կար՝  
Մաննիկ անուն, այս այնչափ մաքրասէր էր  
որ բոլոր աղջականները, դրացիները, բարե-  
կամները կը սիրեին զինքը և կը զարմանային  
վրան. Երբ փողոցէն՝ անցնէր\*, բոլոր տնեցիք  
մէկ մէկու կ'ըսէին. «Նայեցէք սա սիրուն  
փոքրիկ աղջիկը, վրան ամենափոքր արատ մը  
չի կայ, իր հանդերձները թէպէտ և շատ աղ-  
նիւ չեն, բայց ինք վայելուչ հադուած է. կարծես թէ յի-  
րաւի աղնուականի աղջիկ մ'է»: Աս բարեմիտ աղջիկը օր մը  
տիկին Մարիամին պարտէլը գնաց իր մօրը հետ, որուն  
ձեռքը բունած էր: Տիկին Մարիամ տեսաւ անոր աղնուու-

թիւնը և մաքրութիւնը<sup>\*\*</sup>, իր քովը կանչեց զինքը, գովեց իր բարի վարդին ու բարդին համար, համբուրեց զայն և երկու շաքար տուաւ անոր: Իսկ անոր Սահակ եղարօր չտուաւ. միայն ըստ անոր թէ՝ «Եթէ դու ալ ասոր նման մաքրասէր» ըլ-լսո, դուն ալ պիտի ընդունիս այս շաքարէն»: ( )

Հարցմունիք. — Ի՞նչպէս աղջիկ էր Մաննիկ: — Ի՞նչու գրացիները ու ազգականները կը սիրէին զինքը: — Փողոցէն անցած միջոցին ի՞նչ կ'ըսէին անեցիք: — Մայրը ո՞ւր տարաւ զինքը: — Մաննիկ ի՞նչ նուէր ընդունեց և որմէ<sup>\*</sup>:

ՀՐԱՀԱՆԴ. — Նմանութիւնիք. — Զիւնի պէս ճերմակ: Կեռասի պէս կարմիր: Արելի պէս անմեղ: Զմեռուան պէս ցուրտ: Փիղի պէս այլանդակ: Սամիսնի պէս ուժով:

Ուղղելիք. — Նախանձութիւնը ատելութիւն յառաջ կը «պերէ»: — «Իխցը» մարդս կը «դշուառացնէ». — Պատիւը և գիտութիւնը աշխատանաց «բարգեւն» են. — Իւ մաստուն տղան իր «մայրին» երջանկութիւն կը պատճառէ. — «Շատախոսը» ամէն մտածածը կ'ըսէ, իսկ իմաստունը ամէն ըսածը կը մտածէ:

Հականիշ. — Շատ—քիչ: Բարձր—խոնարհ: Տղէտ—գիտուն: Համառօտ—ընդարձակ: Անմարդի—բազմամարդ: Ելնել նստիլ: Ներս—դուրս:

Ուղղագրութիւն. — Գանել քսան բառ որ իր մէջ ունենայ կ գիրը:

(\*) Օրինակէ սոյն դասը օրինակութեան տեսրիդ մէջ:

Դ Ա Ա Ե.

Ե Ր Ի Զ Ա Կ

ԴԱՍՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ—ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Երիզակ:	Երկայն որդ մը:	Խորովել:	Քէպապ ընել:
Աղիք:	Պաղսախ:	Խողինի:	Խողի միս:
Կեղեւ:	Խապուխ:	Մէթրօ:	Գաղիական չափ:
Փոխանցել:	Ուրիշի անցնել:	Հանգոյց:	Կապ:

1. Երիզակը երկու և կէս մէթրօ մարմին ունի: Մարմինը դդումի կուտերունման իրարու կպչած է հանգոյցներով. այն կենդանին ոչ աչք և ոչ բոն ունի, այլ միայն փոքր գլուխ և ոտքեր: Սա լուի նման ծերով կ'ապրի, երբեմն մարդոց աղիքներուն մէջ ալ կը գտնուի: Գլուխն աղիքներուն մորթին կը մտցունէ և ապա աղիքներուն մէջ կ'երթայ: Անոնք որ երիզակ ունին իրենց աղիքներուն մէջ, միշտ հիւանդ կ'ըլլան: Անոր մարմնոյ կեղեւները կը պարունակեն ձուեր: Երիզակները այսպէս կը փոխանցին մարդուն: Աղիքը արօտատեղիներու մէջ կը գտնուին անոնք, երբ կովը կամ ոչխարը կամ խողը՝ աղբ պարունակող արօտներու խոտերը ճարակէ, խոտին մէջ գտնուած երիզակներն ալ միամին կը կլէ, որով իրեն միաը կ'ըլլայ երիզակներով լի: Այն մարդը, որ հում հում կ'ուտէ այսպիսի կենդանեաց միսը, անոր երիզակը իրեն ալ կ'անցնի: Այս վտանգէն աղատելու համար պէտք է նախ միաը խաշել կամ խորովել և ապա ուտել: Այս միջոցաւ միին մէջ գտնուած երիզակները իրենց

Կենդանութիւննին կը կորսնցունեն։ Եթովլիկոյ բնակիչներէն շատերն և Եւրոպիոյ ժողովուրդներէն ումանք, ողք հում խոզգենի կամ ուրիշ կենդանեաց հում միաեր կ'ուտեն, իրենց աղեաց մէջ կը կը երիզա՛ք Ասոր համար միշտ հիւանդոտ են։ Շատ անդամ ալ մահացու է։<sup>(1)</sup>

Հարցմունք. — Երիդակին ի՞նչպէս կենդանի մ'է։ — Ո՞ւր կը գտնուի։ — Ի՞նչպէս կը փոխանցի ժարդոց։ — Ի՞նչ ընելու է որ մարդ այդ վտանդէն ազատ մնայ։

ՀՐԱՀԱՆԳ. — Նմանուրիւնք. — Բու խօսքերդ սուրի պէս կը խոցեն սիրտու։ — Այժեամի պէս արագլնիծաց ես դուն։ — Յիսուսի պէս խոնարհ եղիր։

Ուղղագրուրիւն. — Գտնել քսան բառ որ իր մէջ ունենայ և գիրը։

Շարադրուրիւն. — Նկարագրեցէք գող մը որ տղուն ուոր կուտայ պարկ մը և դրացւոյն արար կը մտնէ յորեն գողնալու։ Նկարագրեցէք գողին երկիւղը, զգուշաւոր նայուածքը իր չորս կողմը, որ գիտող մը չըլլայ, տղուն աս խօսքերը։ «Հայր, տեղ մը մոռցար նայելու, երկինք նայելու մոռցար, ուրիշ Աստուած քեզի կը գիտէ»։ Ի՞նչ ազդեցութիւն ըրաւ այս յանդիմանութիւնը հօրը վրայ։

Ուղղելիք. — Դնբակ, ճանձնալ, քատապարտել, կորցանում, բաշել, զբոշանալ, բեղին։

Հականիշ. — Զգայուն — . . . — Շնչաւոր — . . . — Մեռեալ — . . . — Ոնամօթ — . . . — Ամպարիշ — . . .

(1) Օրինակէ սոյն դասը օրինակութեան տետրիդ մէջ։

Դ Ա Ս Ը

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԴԱՍՍԽՈՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ

Մոլորիլ. — Շեղիլ։

Գաղտաղողի. — Գաղտուկ։

Կարողացաւ. — Կրցաւ։

Սանդուխ. — Վէրտիվէն։

Ծիծաղելով. — Խնդալով։

Վերարկու. — Բալթօ։

Հետաքրքրութեամբ. — Մանրա-

րաման քննելով։

Ծերուկ. — Ծեր մարդ։

Հասարակաց. — Ընդհանուրին։

1. ՎԵՐԱՐԵՎՈՒՆԵՐԸ

Մարդ մը գաղտագողի մօներով հասարակաց գպրոյներուն մէկուն մէջ, ուր տեղ կը սորվէին հարիւրէ աւելի զիշերօթիկ աշակերտներ, կարողացաւ հնարքով մը գողնալ երեք վերարկուներ, եւ երբ ասնդուխէն վար կիշնէր՝ հանդիպեցաւ աշակերտներէն մէկուն։ Աշակերտը դարմացաւ, երբ տեսաւ որ գողը վերարկուները կը տանէր. ուստի հարցուց հետաքրքրութեամբ, «Ասոնք ո՞ր տեղէն առիր»։ Գողը պատասխանեց հանդարտորէն։ «Դպրոցին մի քանի պարոններու վերարկուներն են, որ տուած են ինձ մաքրելու համար»։ «Լաւ, ուրեմն իմս ալ տարէք մաքրելու»։ ըստ աշակերտը յանձնելով անոր իր գեղեցիկ վերարկուն, և պատուիրելով որ երեք ժամէն վերագարձնէ։ «Ոնպատճառ»։ ըստ գողը, և երթալով այլ եւս չերեւցաւ։

2. Ն. Ա. Խ. Տ Ո Ւ Ո Ղ Ը

Գիւղացի մը գլուխը կախած քաղաք կ'երթար. Երեք երիտասարդ քաղաքէն գուրս պտղտելու ելած էին։

Առաջինը կը դառնայ կ'ըսէ գիւղացին. «Բարի երթաս,  
Արլահամ նահապետ» : Գերուկը երեսը կը նայի և ձայն չը  
հաներ. Երկրորդ երիտասարդն եւս կը դառնայ և կ'ըսէ.  
«Բարի երթաս, իսահակ նահապետ» : Գիւղացին դարձեալ  
կը լուէ: Վերջապէս երրորդն ալ նոյնպէս ծաղրելով կ'ըսէ.  
«Բարի երթաս, Յակոբ նահապետ» : Այն ատեն ծերուկը  
հանդարտ և անխռով կեցած՝ կ'ըսէ. «Պարոններ, իմ ա-  
նունս ո՛չ Արլահամ, ո՛չ իսահակ և ո՛չ Յակոբ է, ես կը կոչ-  
ուիմ Սաւուզ, որդի կիսեայ. Հօրս կորսնցուցած էշերը փըն-  
տընելու ելեր էի, երեք հատը դժայ» : <sup>(1)</sup>

Հարցմունի. — Գողը ի՞նչպէս կրցաւ դպրոցականներուն  
հագուստները գողնալ: — Գիւղացին ի՞նչ պատասխանեց  
ծաղրածու երիտասարդներուն:

Ուղղագրութիւն. — Գտնել քսան բառ որ իր մէջ ունե-  
նայ « գիրը »:

Լրանալի. — Թուչունը կը դառնայ իր . . . — Կովը կը  
դառնայ իր . . . — Ոչխարը կը դառնայ իր . . . — Արջը կը  
դառնայ իր . . . — Ուղոը կը դառնայ իր . . . — Շունը կը  
դառնայ իր . . . : <sup>(2)</sup>

Բացաւրութիւն բառից. — Մննդարար նիւթ մը, որ սերէն  
կը գոյանայ, և որ կաթին էական մէկ մասն է. զայն կը ծե-  
ծեն երկայն վիզով ամսնի մը մէջ, որ յետոյ կը թանձրանայ  
եւ որ իր թարմութիւնը կը պահէ. — Ի՞նչ է այն:

<sup>(1)</sup> Օրինակէ սոյն դասը օրինակութեան տեսրիդ մէջ :

<sup>(2)</sup> Գծերուն տեղ պատշաճ բառեր դիր. ի՞նչպէս. թուչունը կը  
դառնայ իր բոյնը :



Դ Ա Ա Յ Յ :

Ա Կ Ռ Ա Ն Ե Ր

ԴԱՍԱԿՈՍՈՒԹԻՒՆ. — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ,

Մնութ. — Կղակին մասը :	Փոփոխելի. — Որ կը փոխուի :
Մնյագ. — Զիշտացած :	Վերաբերել. — Բանի մը իյնալ :
Զետեղուած. — Շարուած :	Մշտակայ. — Միշտ եղող :
Առժամանակեայ. — Ժամանակ- ուան մը համար :	Զափահասութիւն. — Տարիքն ա- ռած :
Ճաշակելիք. — Ուտելու բան :	Սեղանատան. — Տափակ ակռայ :
Շօշափել. — Բանել :	Տափակութիւն. — Շիտակութիւն :
Ժանիք. — Կարող ակռաներ :	Նորածին. — Նոր ծնած :

1. Ճամբուն վրայ դոք տեսած էք անշուշտ կովեր, ոչ-  
խարներ, որը սակրեղէն կազմութիւն մը ունին, որոնց միսը  
կերած ատենննիդ՝ ձեր իսկ ձեռքովն անոնց սակորները կը  
շշափէր<sup>\*\*</sup>: Զեր ակռայներն ալ ահա՛ գրեթէ այդ սակոր-  
ներուն տեսակէն են, բայց տարբեր ձեւով և կարծրու-  
թեամբ: Ակռայները մանր և գրեթէ իրարու նման սակոր-  
ներ են, որ երկու ծնուներու<sup>\*\*</sup> վրայ կամարաձեւ շար-  
ուած են: Գիտէք, ո՞րն է ծնութ ըսուածը. — Այո՛, ամէն

մարդ<sup>(1)</sup> երկու ծնօտ ունի, աշ ծնօտ ու ձախ ծնօտ:—Յո՛յց  
քու աշ ու ձախ ծնօտներդ:—Ահաւասիկ աջս, ահաւասիկ  
ձախս:—Բայց ինչո՞ւ կամարաձեւ\* ըսինք ծնօտին<sup>(2)</sup> համար:  
— Որովհետեւ կամարի<sup>(3)</sup> մը ձեւ ունի:—Բարի, մափկ ը-  
րէք. ինչպէս աչքը տեսնելու, այսպէս ալ ակռայները ծա-  
մելու պիտանի են, անոնք ուտելիքը մանրելու և մարսողու-  
թիւնը դիւրացնելու կը ծառայեն:—Մեծ մայրս բնաւ  
ակռայ չունի, ո՛չ միս, և ոչ պտուղ կրնայ ուտել. եթէ  
ունենայ, կը նուժիրէ ինձ. խեղճ ծերունին ախորժակ շիմա-  
նար կերածէն, և շատ դժուարաւ կը մարսէ. պատճառն  
ակռայ<sup>(4)</sup> չունենալն է եղեր:—Այդպէս է. քուրիկ, ի՞նչ  
ընելու է ճաշի ատեն:—Նախ ճաշակելիքը լաւ մը ծամե-  
լու է և ապա կուլ տալու է:—Իսկ այն որ առանց ծա-  
մելու կուլ կուտայ, ի՞նչ կ'ըլլայ:—Անոր մարսողութիւնը  
կը խանդարի և ինք անկիրթ, կոշտ տղայ մը կը ճանչցուի:  
Շարունակենք մեր խօսքը: Ակռայները կը բաղկանան զլուխէ  
և արմատէ.<sup>(5)</sup> արմատը լինտերով<sup>(6)</sup> ծածկուած ըլլալուն  
չի տեսնուիր, բայց գլուխը գուրս ցցուած է, և դոք կը-  
նաք շշափել ձեր մատիկներով:<sup>(7)</sup>

2. Ակռայներուն երեւցած մասը շրջապատուած է մաս-  
նաւոր նիւթով<sup>(8)</sup> մը, որ ակռայները չմաշեցուներ:—Բայց  
իմ փոքրիկ եղբայրս<sup>(9)</sup> բնաւ ակռայ չունի:—Նորածին  
տղաք ակռայ չեն ունենար, վերջէն կը բուսնին, որ կը տեւէ  
մինչև եօթը տարեկան հասակին մէջ, այնուհետեւ «Մշտա-  
կայ կամ հասաւատուն ակռայները» կը բուսնին. նախ հաս-  
աւատուն ակռայներէն չորսը կը բուսնին\*\* և չորսն ալ տաս-

[1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9] Սոյն բառերն ի՞նչ թիւ, ի՞նչ հոլով են:

ներկու տարեկան հասակին մէջ: Զափահասութեան ժամա-  
նակ կը բուսնին «Իմաստութեան ակռայները» որ է աղօ-  
րիքը կամ սեղանատամն: Զափահասութեան\*\* ժամանակ  
ակռայները մինչեւ երեսուներկու կը հաշուտին, իսկ տղա-  
յութեան ժամանակ քսան: Աղօրիքը քսան հատ են և իւրաքանչիւր ծնօտի  
վրայ տասնական հատ շարուած են, որոնք միւս ակռայնե-  
րէն բոլորովին կը տարբերին իրենց լայնութեամբն և գլուխ-  
ներու տափակութեամբը. ասոնք են որ ուտելիքները կը  
մանրեն: Ժանիքները չորս հատ են և հատիչներուն մօտ,  
ասոնցմէ երկուքը վարի ծնօտին վրայ են, որոց գլուխը սուր,  
երկայն ըլլալուն՝ ուտելիքները\*\* կը բգլտեն: Հատիչները  
ութը հատ են, չորսը վարը և չորսը մէջտեղը, որոնց գլուխը  
խիստ բարակ ըլլալուն՝ ուտելիքները\*\* կը կարտեն և ասոր  
համար ըսուած են հատիչ: Այսպէս ակռայները իրենց պաշ-  
տօնին համեմատ այլ և այլ անուններ ունին, և կը կոչուին:  
1. Հատիչ կամ առաջնատամն: 2. Շան ակռայ կամ ժանիք:  
3. Աղօրիք կամ սեղանատամն:

**Հարցմունիք.** — Ակռայները ի՞նչ նիւթէ են: — Ինչի\* կը  
ծառայյեն: — Ո՞ւր շարուած են: — Ի՞նչ ձեւ ունի ծնօտը:—  
Քանի\* տեսակ ակռայ կայ:— Ի՞նչ կ'ընեն հատիչները, աղօ-  
րիքը, շանակռայները, և ինչո՞ւ համար այսպէս կը կոչուին:—  
Ե՞րբ կը բուսնին և քանի\* հատ են:— Ուրիշ ի՞նչ կը կոչուին:

**ՀՐԱՀԱՆԳ.** — Հականիշիք. — Լուսատու — մթին: Զօրա-  
ւոր — տկար: Հիւանդ — առողջ: Ցուրտ — տաք: Պայծառ  
— ամպոտ: Մաքուր — աղտոտ: Սուրբ — անոռուրբ:

Քերականական վարժք. Կանոն. — Հասարակ անուն  
կը կոչուին այն բառերը, որ իրենց տեսակին մէջ մէկէ ա-  
ւելի բան կը ցուցունեն. ինչպէս, ծառ, մանուկ, տուն, ծա-  
զիկ, որդի, ձիթենի, դուռ:

Հրահանգ. — Կատուն կերաւ մուկը. Որսորդը որսաց նա-  
պաստակը. Զուր տուէր ծաղիկներուն. Հնազանդ եղիք ձեր  
հօր և մօր հրամանին. Ուղարին մորթը հանեցին. Այս ծա-  
ռերուն պտուղները հասուն են. Պարտէզին դուռը բաց է.  
Ամպերը փարատեցան. Մուկը ծակը փախաւ. Եղբայրս նոր  
տուն մը կը բնակի. Այս տղան իր հայրը շատ կը միրէ<sup>(1)</sup>:

1. Գայլին գլխին Սւետարան կարդացեր են. ըսէր է.  
«Շուտ ըրէր, ոչխարը սարէն անցաւ» : 2. «Ո՛ւր որ փորդ  
չկշտանար, անօթութիւնդ մի՛ յայսներ հոն» :

Ուղղագրութիւն. — Գտնել քսան բառ որ իր մէջը ունե-  
նայ վ գերը:

Հետեւութիւն. — Բոլոր բարձր լեռ-  
ները ձիւնապատ են. արդ մեր քաղա-  
քին լեռը խիստ շատ բարձր է. ուրեմն  
մեր քաղաքին լեռն ալ բարձր լեռնե-  
րուն նման ձիւնապատ է:



Դադափարաց բացարութիւնն. — Փողոցները լեցուն էին  
ահագին բազմութեամբ. — Կրնա՞ս ըսել թէ փողոցներն ա-  
հագին բազմութիւն չկար. — Ո՛րչափ ահագին բազմութիւն  
կայ փողոցները. — Այնչափ ահագին բազմութիւն կար փո-  
ղոցները որ մարդ չէր կրնար անցնիլ:

[1] Որոշել Հասարակ անունները:

—————

Դ Ա Ս Ժ

ԲԱՐԵՍԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ - ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Գգուանք. — Փայփայանք : Ապշած . — Խիստ զարմացած :  
Կորաքամակ . — Մէջքը ծռած : Կաթնաման . — Կաթի աման :

1. Ամէն առաւօտ ծերունին Յովհաննա իր ծեր իշու-  
կին\*\* հետ գիւղէն կուգայ կաթը ծախելու համար քաղաքին  
մէջ. ինք Պօղոսին և Վիրդինիոյ նախաճաշիկին\*\* կաթը կը  
բերէր : Տղաքն աղէկ կը ճանչնային ծերունին. Երբ անոր  
դալը կը տեսնէին, շուտով կը վաղէին և բարի լոյս կ'ըսէին  
անոր :

Վերդինիա ամանը կ'երկնցնէր Յովհաննային, որ կաթը  
կը լեցնէր. իսկ Պետրոս կ'երթար կը սիրէր էշը դգուանք,  
որ հաճոյը իմանալով ականջները\*\* կը թոթուէր:

Առաւօտ մը, ծերունին Յովհաննա մինակը եկաւ. բոլո-  
րովին կորաքամակ՝ իր կաթնամաններուն\*\* վրայ ծռած .  
— Մայր Յովհաննա, ո՞ւր է իշուկդ, հարցուց Վիրդինիա .  
— Մեռաւ, փոքրիկ օրիորդ, պատասխանեց խեղճ ծերունին:

Քոյր և եղբայր սասափիկ տիրեցան տեսնելով որ ծե-  
րունին կուլար:

2. Երբ քոյր և եղբայր սեղանին բոլորտիքը նստած  
էին, Վիրդինիա, որ կը կարդար, յանկարծ գլուխը վեր ա-  
ռաւ և ըսաւ. «Պօղոսիկ, մայր Յովհաննան շատ աղքատ է.

— Ահա, այս, շատ աղքատ է. — Բան մը կը մտածեմ. — Ի՞նչ բան. — Կը մտածեմ թէ էշ մը գնենք անոր համար. — Ես ալ այդ բանին վրայ կը խորհէի, ըստ Պօղոս, բայց բաւական ստակ ունինք:

Ուրեմն համրենք, պատասխանեց Վիրդինիա. Երկուքն ալ պարզեցին\*\* քսակնին\*\* սեղանին վրայ, դրամները իրարու վրայ դրին և տեսան որ չորս հարիւր զրոշ ունին: — Բաւակա՞ն է, ըստ Պօղոս: — Զեմ գիտեր, բայց նախ և առաջ պէտք է որ հօրս հաւանութիւնը առնենք. — Այդ իրաւ է, պատասխանեց Պօղոս:

3. Երեկոյին, ճաշէն վերջը, Վիրդինիա հօրը ծունկերուն վրայ ելաւ. «Հայրիկ, ըստ, էշ մը առնելու համար չորս հարիւր զրոշը բաւական չէ: — Ինչո՞ւ համար կը հարցնես, Վիրդինիա, ըստ հայրը. Այն ատեն երկու մանուկները մայր Յովհաննային դժբաղդութիւնը պատմեցին, ինչպէս նաեւ իրենց դիտաւորութիւնը\*\*: «Կ'ուզե՞ս որ էշն առնենք, հայր»: — Գուք շատ բարի տղաքներ էք, ըստ հայրը, ձեր դիտաւորութիւնը բարի է, եթէ պակսելու ըլլայ դրամնիդ, պակսը ես պիտի լրացնեմ»:

4. Երկու օր վերջը, երբ մայր Յովհաննա նորէն կուգար, տղայոց տան դռան առջեւ տեսաւ փոքրիկ և սիրուն էշ մը, որ սանձէն կապուած\*\* էր դրան, բոլորովին ապշած կեցաւ:

Այն ատեն տղաքները, որ պատուհանէն զինքը կը դիտէին պոռացին. «Մայր Յովհաննա, ձեր էշն է, չէ մեռեր, ահա ձեզի կը սպասէ որ ձեր կաթը կրէ, ամաննիդ վրան դրէք և տարէք ձեր դիւղը»:

Յովհաննա շատ չնորհակալ եղաւ, և այս ատենէն շատ մտերիմ բարեկամներ էին իրարու:

Հարցմունիք. — Ի՞նչ կը ծախէր Յովհաննա. — Ինչո՞ւ ինք կը բերէր կաթին ամանները. — Պօղոս և Վիրդինիա ի՞նչ խորհեցան. — Հայրն ի՞նչ ըստ. — Տղայք ի՞նչ ըստն Յովհաննային:

ՀՐԱՀԱՆԳ. — Բացատրելի բառեր. — Աղաւնի, շուն, ծաղիկ, կով, բանտ, չղջիկ:

Ուղղելիք. — Եթէ «հայրիս, մայրիս» ըսեմ, քեզի կը յանդիմանեն: — «Չեռուլներդ» մարտու չեն, աղէկ մը «վուլայ»: «Ասոր» դասերդ «չդիտնաս նէ հայրիդ» պիտի ըսեմ որ քեզի պատմէ: «Հայրուր» օրէն հայրս «ինծի» պարզեւ մը «պիտոր» տայ: Պարտէզները շատ «մենծ» են:

Քերականական վարժիք. — Կանոն. — Դերանունը իրմէ առաջ դրուած բառը կը ցուցունէ. զոր օրինակ. Ես քու բարեկամդ եմ, նա իմ եղբայրս է, դու իմ ազգականս ես, նենէ դրիչ մը կը խնդրեմ:

Այս խօսքերուն մէջ ես, նա, դու, նենէ, Դերանունից են:

ՀՐԱՀԱՆԳ. — Դրացին և անոր աղգականները տեսայ: — Սաթենիկ և անոր քոյրը դպրոց դացին: — Սաթենիկին քոյրը ինձ հետ դասընկեր է (¹):

[¹] Դերանուններն որոշել. ըսել թէ ի՞նչ թիւ ու հոլով են, որոնց տեղ դրուած են:



Դ. Ա. Ս ԺԱ.

ԱՆՕԹՈՒԹԵՆՔ ՄԵՌՆՈՂ ՄԱՆՈՒԿՆԵՐ

ԴԱՍԱՀՕՍՈՒԹԻՒՆ—ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Շատեմարան .— Ամպար :

Դադաղ .— Ճաղ :

Թէ որ կարելի է .— Եթէ կրնայ

ՌԱՄ :

Թերեւու .— Կրնայ ըլլալ որ :

Բոլորովին .— Ամբողջ :

Վշտացեալ .— Յաւ ունեցող :

Տրումիլ .— Յաւիլ :

1. Զմրան ցուրտ երեկոյ մ'է. Յակոր անտառէն<sup>(1)</sup> իր խրճիթը կը գառնայ : Կ'ուղէ որ իր տղայոց<sup>(2)</sup> կտոր մը հաց<sup>\*\*</sup> չինէ, բայց ոչ ալիւր ունի, և ոչ շունմարանը հատ մը ցորեն կայ :

Իրեն երկու տղաքները դէմը կ'ելնեն. իրենց անօթութէնէն<sup>(3)</sup> երեսնին<sup>\*</sup> զոյն չկայ: «Հայրիկ, կ'ըսեն, մեղի կտոր մը հաց տուր, փորերնիս անօթի է. պղտիկ կտոր մ'ալ տաս՝ մեղի բաւական է:» — «Ո՛վ որդեակը իմ, բան մը չունիմ. Աստուած<sup>(4)</sup> մեղի ողորմի:» — «Երբ որ մայրերնիս այն սե<sup>(5)</sup> դադաղին<sup>\*\*</sup> մէջ դրած ասկէ տարին՝ ու եկեղեցւոյն<sup>\*\*</sup> քովի ձորը<sup>(6)</sup> թաղեցին, մեղի հաց մը տուիր՝ որ բոլորովին արցունքով<sup>(7)</sup> թրջած էր. ըսէ՛ մեղի, հայրիկ, այն վերջի հացն էր որ կուտայիր:» — «Ո՛հ, այո՛, որդեակը իմ, այսօր ալ ամեններն բան մը չունիմ որ ձեղի տամ. վաղը Աստ-

[1. 2. 3. 4. 5. 6. 7] Ասոնց մէջէն որոշել յատուկ, հասարակ անունները, սեռական հոլովներն և ածականները:

ուած ողորմած է, իրեն օդնութեան<sup>(1)</sup> սպասենք, ո՛հ, թէ որ կարելի է՝ դոք ալ ինձ պէս համբերեցէք, թերեւս վաղը բան մը գտնէք:» Այս ըսելով՝ պատին վրայ կախուած քնարը<sup>(2)</sup> վար կ'առնէ, որ անուշ ձայն մը ունէր, և կը սկսի նուադել. իսկ աղաքը կ'ուրախանան, քնարին ձայնը մոռցնել կուտայ անօթութիւննին և այլ ևս չեն խնդրեր հաց:

2. Հայրը՝ երեսը մէկդի կը դարձունէ որ արցունքը չտեսնան տղաքները և չտրտմին, և ուրախութեան եղանակ մը նուադէլով՝ տղաքները բոլոր իրիկունք կը խաղցունէ, մինչեւ որ յոգնած դադրած կ'եյնան, կը քնանան:

Խեղճ հայրը<sup>(3)</sup> թշուառ<sup>(4)</sup> տղայոց յարդէ անկողնոյն կը մօտենայ՝ ձեռքերը բացած. «Աստուած իմ, կը գոչ, Դու, որ վշտացելոց հայր ես, աղասէ՛ զիրենք իրենց նեղութիւններէն<sup>(5)</sup> »: Եւ Աստուած լսեց իրեն աղօթքը, մահը վրայ հասաւ ու տղաքը մէյ մ'ալ չարթնցան:

Հարցմունի. — Յակոր ուսկից կը գառնար. — Ի՞նչ ըրին տղաքն, և հայրն ի՞նչ պատասխանեց. — Ինչո՞ւ համար հայրը քնար զարկաւ. — Հայրը ի՞նչ աղօթեց Աստուծոյ :

ՀՐԱՀԱՆԳ. — Բառարանը նայելով նշանակուրինը գրել. — Դերփուկ, Դերբուկ. Փլիթ, Բլիթ. Քամել, Գամել. Քայլ, Գայլ. Բարբառ, Փարփառ. Մնդոյր, Մնդուր:

ՇՈՒՏԱՏՈՐԻՆ. — Տուր իր թոյր թուխ թիկան թեւ, ի թիռ թեթեւ թիռ թիռ թաչի ի լուրթ յեթեր զերթ թուխող թիթեռն:

[1. 2. 3. 4. 5.] Ասոնց մէջէն որոշել յատուկ, հասարակ անունները, սեռական հոլովներն և ածականները:

Քերականական վարժ. — Ածական կ'ըստի այն բառը,  
որ գոյականի մը որպիսութիւնը կը ցուցունէ . զոր օրինակ.  
Նոր մուճակ. (նորը մուճակին ինչպէս ըլլալը կը ցուցունէ) :  
Վաղուն ջուր, սիրուն տղայ, կակուղ անկողին, սուր դանակ,  
կարծր քար, դեղին մաղ (¹) :

Հրանանգ. — Մթին . . . — Խոնաւ . . . — Կաղ . . . — Օդ~  
տակար . . . — Սեւ . . . — Սպիտակ . . . — Մեծ . . . — Տը~  
կար . . . — Կակուղ . . . — Տխուր . . . (²) :

Սուրճի ճերմակ ծաղիկները անուշ հոտ կը բուրեն :  
Աղիք տղան երախտագէտ է իր ծնողաց Զուրը և տպակին  
թափանցիկ մարմիններ են: (³)

[¹] Ածականները որոշել :

[²] Սոյն ածականներուն պատշաճ գոյականներ գտնել :

[³] Ածականներն որոշել :

### Դ Ա Ս Ժ Բ.

## Ս Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն Մ Ի Շ Ն Ե Ր

ԴԱՍԱԿԱՐԱԿԱՆ ՄԱՍԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԴՐ

Քատմանելով . — Փուշ, փուշ ըլ-  
լալով :  
Անջառուած . — Զատուած :  
Խոպոս . — Անախորժ ձայն :  
Դիմադրել . — Դէմ դնել :  
Չետ . — Պոչ :

Կ'ընդոստնուր . — Կը ցատկէր :  
Սարսափեցայ . — Վախցայ :  
Աներեւութացան . — Չերեւցան :  
Սրիւնուշտ . — Սրիւնլուայ :  
Մեղանչել . — Մեղք դործել :  
Գամիու . — Ոչխարի շուն :

### Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Երեք հովիւ եղբայրներ անսառու կ'երթան, կ'որոշեն իրենց  
հօտը զատ զատ արածել այն պայմանաւ որ վտանգ ունեցած ա-  
տեննին «Գայլը», Գայլը». » պոռան : Յովսէփ պարապ մնալուն  
կը խարէ եղբայրները «Գայլը», Գայլը». » պոռալով, որոնք երկ-  
րորդ անգամուն այլ եւս չեն հաւատար Յովսէփին : Գայլը կը յար-  
ձակի Յովսէփին հօտին վրայ . կը մնասէ շան եւ իրեն, և կը յան-  
դիմանուի եղբայրներէն :

### Բ Ո Վ Ա Ն Գ Ա Ռ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. Պետրոս, Յովհաննէս և Յովսէփ՝ Երեք եղբայրներն  
ալ հովիւ էին : Ասոնցմէ ամեննէն խելացին էր Յովհաննէսը :  
Յովա (¹) օր մը անտառի (²) մը մօտ մարդ \*\* մը գացին իրենց  
հօտը \*\* արածելու\*: «Լաւադոյն պիտի ըլլայ, ըստ Պետրոս,  
Եթէ զատ զատ տեղեր երթանկը» :

«Բայց, ըստ Յովհաննէս, գայլը\* մեր վրայ յարձակած  
ատեն՝ մեծ վտանգ (³) պիտի ունենանք : » Յովսէփ պատաս-  
խանեց անոնց. «Որո՞ւ որ այդպիսի դէպը մը պատահի, թող  
նա (⁴) բարձր ձայնիւ պօռայ» . «Գայլը, Գայլը». այն ատեն  
լսողը օգնութեան թող հասնի : Ասիկա ամէնքն ալ ընդու-  
նեցին, և գացին զատ զատ արածելու իրենց հօտը : Երբ  
Յովսէփի խոտաւէտ (⁵) տեղ մը հասաւ հանգչելու, պարապ  
մնալով սասափիկ կը նեղանար, ուստի սրինգը ձեռքը առաւ  
և անով զբաղած ատեն ինքնիրեն ըստւ. «Հիմա եղբայրներս  
կը խարեմ և կը զուարճանամ : «Գայլը, Գայլը». կը պօ-  
ռամ ես, անոնք խարսելով կը վազեն կուգան քովս, և ես  
կը ծիծաղիմ վրանին . Ենչ գեղեցիկ (⁶) խորհուրդ» . ըստ

զայս և պոռաց «Գա՞յլը\*\* , գա՞յլը» : Յովհաննէս<sup>(7)</sup> և Պետրոս այս ձայնը լսելուն պէս՝ իրենց շուներուն<sup>(8)</sup> հետ մէկտեղ վազեցին Յովհէփին քով, բայց բնաւ գայլ<sup>(9)</sup> չտեսան, այլ միայն Յովհէփը<sup>(10)</sup> որ առանց պատասխանելու կը խընդար: «Ա՛հ, կը խարե՞ս մեղ, կը խարե՞ս մեղ, և բնաւ չե՞ս ամչնար և չե՞ս մտածեր թէ կը մեղանչես\*\* , ամօթ քեղ. այսուհետեւ չալտի հաւատանք քու խօսքերուդ<sup>(11)</sup>:» Հովիսք դարձան շուտով իրենց հօտին<sup>(12)</sup> քով: Յովհէփ ստախօս<sup>(13)</sup> տղայ մը ճանչցուեցաւ: Մտիկ ըրեք թէ ի՞նչ եղաւ նորա<sup>(14)</sup> վախճանը: Երբ հովինսերը աներեւութացան\*\*, Յովհէփ յանկարծ դաշանի ձայն մը լսեց, հասկցաւ թէ վտանգ մը կայ, սաստիկ վախցաւ, շունը քովը կանչեց, որ անշարժ կենալով, աչքերը գէպի ձախ կողմը տնկելով, ոնդունքը բանալով և ձեար սրունքներուն մէջ երերցնելով, մաղերը քսամնելով խոպոտ<sup>(15)</sup> ձայն մը կը հանէր:



Յովհէփ չտարակուեցաւ այլ ևս թէ գայլ մը կը մօտենար, ուստի բոլոր ուժովը պօռաց . «Գա՞յլը, գա՞յլը»: Ոչ ոք երեւցաւ: Արդարեւ գայլ մը հեռուէն տեսնուեցաւ եւ եկաւ յարձակեցաւ հօտին<sup>(17)</sup> վրայ . արիւնուուշտ<sup>(18)</sup> կրիւ մը սկսան գամփուը և գայլը, հովին ալ եր տապարով օդնեց շան. բայց շունն արիւնլուայ\*\* ինկաւ, թէպէտ գայլը վախցուց, և հովին լաթերը բղքտեցան: Միւս եղբայրները երեկոյին երբ տեսան իրենց ստախօս\* եղ-

բայրը, որ կուլար այս ցաւալի վիճակին մէջ, ըսին. «Արժանի ես այդ պատժոյն, թող սուտ չխօսէիր որ մենք քեզ օդնէինք: Ովկ որ սուտ կը խօսի, քեզ պէս վերջը կուլայ»:

Հարցմունիք.—Ի՞նչ ըսելով բամնուեցան եղբայրները: Ի՞նչպէս խարեց Յովհէփ: — Պետրոս ի՞նչ ըսաւ: — Ի՞նչո՞ւ համար Յովհէփին օդնութեան չեկան: — Եռնը ի՞նչո՞ւ անշարժ կեցած էր: — Որո՞նք վիրաւորուեցան:

ՀԲԸ.ՀԱՆԴ. — Հականիշիք. — Ծածուկ — յայտնի: Յոդնիլ — հանդշիլ: Խելօք — անառակ: Աշխատասէր — ծոյլ: Զդուշաւոր — անզդոյլ:

Դիտողութիւնն. — (Հայր մը մեռնելով կանչեց իր որդիքը և խրատ տուաւ անոնց որ միշտ բարիք գործեն):

Երբ հայր մը մեռնելով կ'ըսենք, կը հասկնանք թէ մեռած էր, ոչ թէ տակաւին պիտի մեռնի . ուստի քանի որ մեռած էր, ի՞նչպէս կարելի էր որ իր որդիքը կանչէր և խրատ խօսէր անոնց: Պէտք է ըսել, հայրը մեռնելու մօտ ժամուն կամ հայրը դեռ չմեռած, և այն:

Բառարանը նայելով նշանակութիւնը գրել. — Խորդ, Խորք. Դեւ, Թեւ. Գայու, Քայու. Գարշիլ, Քարշիլ. Յորդել, Հորդել. Հեղուլ, Յեղուլ. Յաշտ, Հաշտ. Բարդ, Փարթ:

Բաղրատելի բառեր. — Լեռը և րլուակը: Ծովը ու լիճը: Անմիտն ու խելացին:

[1—18] Ասոնց մէջ որո՞նք յատուկ, որո՞նք հասարակ են, որո՞նք ածական են. ի՞նչպէս կը հոլովուին, որո՞նք դերանուն են. ի՞նչ հոլովով դրուած են:

ԴԱՍ ԺԳ.

ՍԱԲԵՆԻԿ ԵՒ ՊԵՏՐՈՍ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ - ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Արկղիկ. — Պղտիկ մնուուկ : Խնայողութիւն . — Տնտեսագիտու-  
կափարիչ . — Խաբախ : Թիւն .  
Շաքարալաճառ : — Շաքար ծառ . Հաճոյք . — Զուարճութիւն :  
Խոզ : Կրպակ . — Խանութ :  
Հետաքրքրեց . — Ուշադրութիւնը Բարեգործութիւն . — Աղեկ  
արթիցոց : բան մը գործելն :

1. Սաթենիկ<sup>(1)</sup> և Պետրոս<sup>(2)</sup> մէրմէկ արկղիկ<sup>\*</sup> նուեր  
ընդունեցին իրենց հօրմէն<sup>(3)</sup>, որուն վրայ գրուած էր խնա-  
յողութիւն: Կափարիչին<sup>(4)</sup> վրայ ծակ մը բացուած էր, որպէս  
զի մանր<sup>(5)</sup> գրամմերը անկէց նետեն առանց զայն բանալու:  
Արկղիկին մէջ կամաց կամաց անհաւատալի կերպով գրամ-  
ները<sup>(6)</sup> շատցան :

2. Եղբայրը<sup>(7)</sup> և քոյրը<sup>(8)</sup> երբ ամէն շաբաթ երեկոյ ի-  
րենց գպլոցի բարենիշերը<sup>(9)</sup> կը բերէին, մէկ քանի գրամ  
կը ստանային իրենց ծնողքէն: Այն ատեն Սաթենիկ իր գա-  
րանին<sup>(10)</sup> առջեւ կերթար, արկղիկը կը հանէր և իրեն տըր-  
ուած գրամը մէջը կը դնէր: Բայց լաւագոյն պիտի ընէր գը-  
րամը ծակէն<sup>\*\*</sup> ներս նետելով քան թէ բանալով կափարիչը  
և համբելով գրամը. անիկա այսպէս ընելով հաճոյք մը կի-  
մանուր:

3. Պետրոս շատակեր<sup>(11)</sup> էր, ամէն շաբաթու երբ իրեն  
նուիլուած ստակը ընդունէր ուղղակի շաքարավաճառին<sup>\*\*</sup>

կրպակը կը վագէր: Ոնուշեղէնները<sup>(12)</sup> թէպէտեւ լոււ<sup>(13)</sup> բա-  
ներ են, բայց անոնց տուած հաճոյքը երկարատեւ<sup>(14)</sup> չէ: Այսպէս տարի<sup>\*\*</sup> մը անցաւ. Սաթենիկ իր գրամը միշտ կը  
պահէր. Պետրոս իր գրամովը միշտ անուշեղէններ կ'ուտէր:  
Օր մը Սաթենիկ գրավաճառի<sup>\*\*</sup> մը խանութին<sup>\*</sup> առջև պատ-  
կերազարդ<sup>(15)</sup> գիրք մը տեսաւ, որ շատ հետաքրքրեց զին-  
քը, ուստի իր մօր հաւամութիւնը առաւ, խնայողական արկ-  
ղիկը պարպեց, ուրախութեամբ գնաց անձամբ գնել նոյն  
գիրքը: Գիրքերը աւելի երկարատեւ<sup>(16)</sup> հաճոյք կուտան  
քան թէ անուշեղէնները:

4. Սաթենիկ նոյն գիրքը գնելէն վերջը: իր գրամնին<sup>(17)</sup>  
մէջ ունեցաւ տակաւին քիչ մը ստակ: Նա<sup>(18)</sup> պատահեցաւ  
աղքատ<sup>(19)</sup> կնոջ մը, որ երկու փորբիկ աղաքներ ունէր Այդ  
կինը իր գրայուհին<sup>\*</sup> էր, պարկեցով<sup>(20)</sup> գործաւորի մը կինը,  
որուն այրը հիւանդացած<sup>(21)</sup> էր: Սաթենիկ ըստ կնոջ քա-  
ղաքավախութեամբ մը. «Ճիկին, կ'ուղէ՞ք առնուլ այս դրա-  
մը, ձեր փորբիկ տղայոց<sup>(22)</sup> բան մը կը դնէք»: Կինը շատ  
ուրախացաւ և չնորհակալութեամբ Սաթենիկին նուէրն<sup>\*</sup> ա-  
ռաւ: Սաթենիկ երբ տուն գարձաւ շատ գոհ էր իր սիրուն  
գիրքով և այն բարեգործութեամբը որով միմիթարած էր  
թշուառ<sup>(23)</sup> կին մը: Ահաւասիկ հաճոյք մ'ալ, որ անուշեղէնէ  
մը աւելի լաւագոյն է:

5. Պետրոս ալ ուղեց իր քրոջ նման գիրք մը առնել.  
ուստի զնաց արկղիկը բացաւ, զոր մոռնալով գարանի մը մէջ  
գրած էր: Արկղը բոլորովին բաց և փոշիներով<sup>(24)</sup> լցուն էր,  
հոն փոխանակ գրամ գտնելու ի՞նչ գտնայ, առեղ<sup>(25)</sup> մա-

[— 25] Որո՞նք գոյական, որո՞նք ածական, որո՞նք գերանուն  
են, ի՞նչ է իրենց հոլովն և թիւը. այդ ածականներն ո՞ր գոյակա-  
նաց որպիսութիւնը կը ցոցունեն. զերանուններն որո՞նց անդ գըր-  
ուած են:

մաւկ մը, որ խաղաղութեամբ իր սստայնը՝ դրած էր այն արկղիկին մէջ, ուր զինքը ոչ ոք կը մար նեղել։ Այն ատեն Պետրոս շատ ամօթահար\* եղու և սկսաւ շատակերու թեան\*\* մոլոթիւնը կամաց կամաց վերցնել, և իր դրամը լուագոյն կերպով գործածել։

Հարցունեմ. — Տզայք ի՞նչ ընդունած էին իրենց հօրմէն։ — Սաթենիկ և Պետրոս ի՞նչ կ'ընէին իրենց դրամները։ — Սաթենիկ ինչո՞ւ համար ուրախ տուն դարձած էր։ — Պետրոս ինչո՞ւ համար տիրեցաւ։

**ՀՅԱՀԱՆԴ.** — Բառարամը մայելով նշանակուրիւնը գրել. — Հարկ, Յարկ. Կիւ, Քիւ. Յոյլ, Հոյլ. Բոք, Փոք. Հուսամ, Յուսամ. Համր, Յամր. Գմիռ, Գղիր. Փարա, Բարա։

Քերականական վարժ. — Կանոն. — Բայ կ'ըսուին այն բառերը, որ ընել, ըլլալ և ըլլուիլ կը ցուցունեն, զոր օրինակ. կատուն կը մլաւէ, շոնը կը հաչէ, մարդը կը խօսի, սոխակը կ'երգէ, եղբայրս եկեղեցի կ'երբայ, ապերախտը կը մոռնայ իր բարերարը։

Հրահանգ. — Երուանդ և կարապետ դպրոց երբալ. — Այժմ և մաքին խոտը նարակել. — Զին և եղը մեր բեռները կրել. — Ես և եղբայրս դքեզ փնտուել։ (')

Դիտողուրիւն. — (Քամին նաւը նետեց լեռան մը դադարին վրայ)։ Սխալ է. ծովուն մէջ լեռ չըլլար, ժայռեր, կղզիներ կ'ըլլան։ Պէտք է ըսել ծայոի մը վրայ։

[!] Տարբեր գրով նշանակուած բառերը ըստ իմաստին յարմարցնելով գրել։



Դ Ա Ա Ժ Պ Ի Ւ Թ Ի Ւ Ն

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ - ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Անձրեւանոց. — Անձրեւի դէմ կ'աքանչանան. — Կը զարմապատսպարուելու գործիք։ Նան։  
Թաթախուած. — Թաթիսուած։ Շփոթիլ. — Վարանիլ։

1. Հյանդ<sup>(1)</sup> դպրոց<sup>(2)</sup> երթալու ժամանակ ըստ։ «Մայրիկ, անձրեւ պիտի դայ, հայրիկիս անձրեւանոցը<sup>\*</sup> առնեմ։ — Ո՞չ, ըստ մայրը, դպրոցը<sup>\*\*</sup> մօտիկ է, շուտ վազէ, անձրեւը<sup>\*\*</sup> սկսելէն առաջ դուն կը հասնիս, չեմ ուզեր որ հայրիկիդ անձրեւանոցը առնես»։ Սակայն Հյանդ մեկնելու ատեն՝ հայրիկին գեղեցիկ<sup>(3)</sup> անձրեւանոցը առաւ ինքնիրեն ըսելով. «Ե՞հ, ո՞վ պիտի գիտնայ թէ ես առած եմ անձրեւանոցը»։ Երբ փողոց<sup>(4)</sup> ելաւ, բացաւ զայն և փոխանակ շիտակ դպրոց երթալու երկայն<sup>(5)</sup> ճամբայներէ անցնելով կը պտտէր, հպարտութեամբ<sup>(6)</sup> կը բռնէր իր անձրեւանոցը և կը մտածէր թէ ինք մեծ<sup>(7)</sup> մարդ մըն է, և թէ իր<sup>(8)</sup> ընկերները իր վրայ կ'սքանչանան։

2. Յանկարծ սաստիկ<sup>(9)</sup> հով մը ելաւ. փոքրիկ Հրանդ մէջթին վրայ դէպ առաջ ծռեցաւ և երկու ձեռքով անձրեւանոցը\*\* ուժգին կը բռնէր բոլոր ուժովը՝ հովին\*\* դէմ դնելու համար։ Հրանդ<sup>(10)</sup> կ'սկսէր շփոթիլ և կ'ըսէր ինքնիրեն։ «Կարծեմ թէ անիրաւ եմ»։ Հովի երկրորդ հարուած մ'ալ եկաւ, որ առջինէն<sup>(11)</sup> աւելի զօրաւոր էր, անձրեւանոցը կոտրեցաւ և հակառակ կողմը դարձաւ։ Հրանդ բազուկները<sup>(12)</sup> վեր վերցուցած ուժգին կը բռնէր կոթէն, գրբերը ձեռքէն տղմին<sup>(13)</sup> մէջ կ'իյնային և ընկերները, որոց առջեւ կը հպարտանար, կը ծաղրէին\*\* զինքը։ Հովը աւելի կը սաստկանար, Հրանդ այլ եւս չէր կրնար դէմ դնել, անձրեւանոցին կոթը ձեռքէն կը սահի և հովը զայն հեռուն կը թոցնէ, Հրանդ ետեւէն կը վազէ տիղմերու մէջ<sup>(14)</sup> կոխոտելով, վազած առեն գլխարկը գլխէն կը թռչի, բայց ան միշտ կը վազէ բաելով։ «Ահ, մէյ մը զայն բռնէի, ճշմարիս, կ'ըսեմ, անիրաւ եմ»։

3. Վերջապէս զայն կը բռնէ, բայց ի՞նչ վիճակի մէջ Երեկոյին տուն\*\* երթալու է, գեղեցիկ անձրեւանոցը կուպրտած և տիղմերու մէջ թաթիսուած դարձնելու է իր հօրը։ Հայրը զայն տեսնելով կը բարկանայ և կ'ըսէ. «Այդ ի՞նչ ըրեր եռ»։ Հրանդ սաստիկ ամօթահար\*\* դլուխը վար կը ծռէ և կը պատասխանէ. «Ոհ, հայրիկ, ոհ, ալ չպիտի ընեմ»։ Բայց Հրանդ պատժուեցաւ\*\* խստիւ իր հօրմէն։

[1—14] Որո՞նք ածական, որո՞նք գոյական են. որո՞նք որովհութիւն կը ցուցունեն, որո՞նք գերանուն են, ի՞նչ թիւ, և ի՞նչ հոլով են։

Հարցմունք. — Հրանդ ո՞ւր կերթար. — Անձրեւանոցը ի՞նչ եղաւ. — Հրանդ ի՞նչ կ'ըսէր վազած առեն. — Հայրը ի՞նչ ըրաւ։

ՀՐԱՆԴԱՆԴ. — Քերականական վարժ. — Տղան կը խաղայ. աշակերտը կը կարգայ. օձը կը սողայ. տէրը կը հրամայէ. մըջիւնը կ'աշխատի. հաւերը հաւկիթ կ'ածեն. արեւը կը տարցնէ. հովը կը փչէ. փայտը կ'այրի<sup>(1)</sup>։

Ուղղելիք. — Լուցգի, գատու, գանակ, տանակ, կանին, գաղամար, դետրակ, զեղան, կտրուք։

Դիտողութիւնք. — (Հայրը իր որդին մահուանէ ազատուած տեսնելով առաւ իր բազկաց մէջ և բազկատարած աղօթելով գոհութիւն տուաւ Աստուծոյ)։

Սխալ է այս. զի եթէ գրկած կամ իր բազկաց մէջ առած իր հայրը իր որդին, չէր կրնար բազկատարած աշխաթել, որովհետեւ որդին այն ժամանակ կիյնար իր բազկէն։ Պէտք է ըսել. Աչիերը երկինք բարձրացուցած գոհութիւն կուտար Աստուծոյ։

Մարդ որչափ ստացուածք ունենայ, աւելին կը ցանկայ ստանալ։ — Լաւագունին փափաքը լաւն ալ մենէ կը խլէ։ — Երբ գայլին վրայ խօսուի, պոչը կ'երեւնայ. «Կ'ըսուի, երբ մարդ վրայ հասնի այն վայրկեանին, որ ատեն իր վրայ կը խօսուի։ — Յուղայի համբոյրը. (Կեղծաւորի մը համբոյրը, որ կը շողոգորդէ աւելի դիւրաւ խարելու համար)։

[1] Որո՞նք են գոյականները. որո՞նք են բայերն։



Գ Ա Ս Ժ Ե.

Հ Ո Վ Ա Ն Ո Ց

ԴԱՍԱԿՈՍՈՒԻԹԻՒՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ,

Անարփի .— Արեւ չունեցող :	Երկնածորան .— Երկնքէն վազող :
Տարօրինակ .— Օրինակը չը տես-	Շուտ .— Արագ , չուտով :
նուած :	Ոգեւորին .— Ուժովնան :
Բարկացոտ .— Խիստ բարկացած :	Խոժուաղէմ .— Դէմքը ծռած :
Հեղու .— Կը թափէ :	Սնասուեր .— Շուք չունեցող :
Եթեր .— Օդ :	Վայրապար .— Պարապ տեղ :
Զերդ .— Նման :	Խինդ .— Խնդութիւն :
Կորչի .— Կը կորսուի :	Սնդանդաղ .— Առանց դանդա-
Մնթաց .— Չոր , չթրջած :	ղելու :

1. «Մա'լրիկ, մա'լրիկ, ըստ Շուշան,  
Տե՛ս, երկինքէն <sup>(1)</sup> անարփի  
Կաթիլ կաթիլ գետնին վըրան  
Մաքուր մի ջուր կը թափի.  
Տե՛ս, տե՛ս, ի՞նչ տարօրինակ,  
Ի՞նչ ջուր <sup>(2)</sup> անվերջանալի.  
Մեր դիմացի երկայն <sup>(3)</sup> ճամբան\*  
Շուտով մ'եղաւ ցեխով <sup>(4)</sup> լիւ

2. Հըրեշտակներն\*\* արդեօք վերէն <sup>(5)</sup>  
Կը թափեն զայն դէղ առ դէղ  
Որպէս զի շոյտ մ'ոդեւորեն  
Դըրախտայն <sup>(6)</sup> մի պարտէղ.  
Մի՛ գուցէ մանկանց չարեաց դէմ  
Երկնայն պատիժ մ'ըլլայ,  
Կամ բարկացայտ, խոժուաղէմ  
Աստուած պապան իսկ որ լայ . . . »

3. «Ո՛չ, որդեակ իմ, դու չես գիտեր,  
Ըստ մայրիկն իւր բարի,  
Թէ ի՞նչ են այն ջուրերն, որ Տէր  
Հեղու յօգուտ աշխարհիւ  
Ծովեր <sup>(7)</sup>, վճեր, գետեր ամէն  
Արեւուն տակ անըստուեր՝  
Երբոր տաքնան՝ շոգի կաղմեն  
Եւ առաքեն զայն ի վեր :  
Այն թուխ\*\* ամպերն, որք եթերեն  
Մէջ թաւալին\* անդադար՝

- Շոգւոյ\*\* կոյտեր են խաւարին,  
Անդոյն, անջօր, անշարժար<sup>(8)</sup>։  
Այլ պաղելով բարձանց վերեւ  
Ամպը\*\*, ջուր կ'ըլլան վերըստին  
Եւ զերդ կարկուտ, ձին կամ անձրև  
կը թօթափին ի գետին . . . ։
4. Մայրկ, ուրեմն, յարեց Շուշան,  
Այսօր տունն եմ, այնպէս չէ . . .  
Քանզի եթ՝ երթամ վարժարան,  
Այս ջուր զիս պիտի թրչէ . . . ։  
— «Ո՞չ, վարժարան եթէ չ'երթաս՝  
Այն ատեն ալ վայրապար  
Պիտի թրջէ, կորչի քու դաս  
Ի խաղ, ի խինդ և ի պար։  
Ես քեզ կուտամ մի հովանոց\*\*,  
Գլխուդ վրայ կը բանաս,  
Եւ կը հասնիս մինչև դպրոց\*\*.  
Անթաց, անհոգ, անվիճաս ։»
5. Քառորդ մ'յետոյ փոքրիկ<sup>(9)</sup> Շուշան  
Չեռքն համբուրեց մայրիկին<sup>(10)</sup>,  
Եւ անդանդաղ՝ երդ ի բերան  
Ճամբայ ելաւ խնդագին.  
Տեղայր\*\* անձրև\*\* երկնածորան<sup>(11)</sup>,  
Այլ նա կըրէր յաղթական՝  
Մի մետաքսեայ<sup>(12)</sup> շարժուն վրան,  
Մի հովանոց պատուական։

Ա.Դ.ԵՐՍՍ.ՆԳՐ ՓԱՌՈՍԽԱՆ

Հարցմունիք.—ի՞նչէ կը թափէր երկնքէն. — Ի՞նչպէս կը  
կաղմուի անձրեւը.—Տղան ի՞նչպէս դպրոց գնաց։

ՀԲԱՀԱՆԳ. — Դիտողութիւն. — 1. (Գիւղացին լեռան գա-  
գաթէն տեսաւ իր խրճիթը, որ բոլորովին ձիւնով ծածկուե-  
լով անհետ եղած էր անոր մէջ) — Սխալ է այս. զի եթէ  
ձիւնով ծածկուած և անհետ եղած էր խրճիթը, գիւղացին  
չը կրնար տեսնել զայն։ Պէտք է ըսել գիւղացին չտեսաւ  
իր խրճիթը, զի բոլորովին . . . եւայլն։

2. (Երբ Քրիստոս ծնաւ, Աստուած հրամայեց նոյ նա-  
հապետին, որպէս զի տապան մը շինէ ջրհեղեղէն աղատե-  
լու համար)։

Նոյ նահապետ ժամանակակից չէր Քրիստոսի, ոչ ալ  
Քրիստոսի ժամանակ ջրհեղեղ տեղի ունեցած էր. այլ Քր-  
իստոսի ծննդենէն դարեր յառաջ. ուստի սխալ է այս  
խօսքը։ Պէտք է ըսել. Քրիստոսի ծննդենէն դարեր յառաջ  
Աստուած հրամայեց . . . եւայլն։

Նմանաձայն-սարանիշ. — Գօշ (քարձ, ֆէուկ) . քօշ  
(այծ). խեչ (խաղողին չեցը). խէչ (խէչակ, սէսէֆ). թաղ-  
հար (կանանց գլխարկ). թաղար (ծաղկաման, սախի)։

Քերականական վարժ. — Զին կրնայ . . . — Յովսէփ  
կ'ուղէ . . . — Խաղամոլը չյագենար . . . — Հացադործը գի-  
տէ . . . — Միշտ պէտք է . . . — Այս տղան շատ կը սիրէ . . .  
— Ծոյլ աշակերտը չկրնար . . . (13)։

[1—12] Որո՞նք են ածականները, գոյականները, ի՞նչ թիւ,  
ի՞նչ հոլով են։

[13] Կէտերուն տեղ յարմար բառեր դնել։





Դ Ա Ս Փ Ե .

Մ Ա Յ Ր Ը

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Գգուէր . — Կը սիրէր :  
Արբենալ . — Գինովալ :  
Քաղցրիկ . — Սնուշիկ :

Գործաւոր . — Աշխատող :  
Տօնախմբութիւն . — Տարեդարձ :  
Խնամէր . — Հոգ կը սանէր :

1. Փոքրիկ Գրիգոր<sup>(1)</sup> այլ եւս ուզի<sup>(2)</sup> ելեր էր, մայրիկ թեւէն<sup>\*\*</sup> կը բռնէր և կամաց կամաց կը պտըտցնէր : Երբ լալու ըլլար, անմիջամիւս քովը կը վաղէր և գիրկը<sup>\*</sup> առնելով կը գտուէր և իրեն հասկնալի լեզուաւ կը խօսէր հետը : Եթէ յոդնելու ըլլար Գրիգոր, օրօրոցը<sup>\*\*</sup> կը դնէր՝ կ'օօրորէր երգելով քաղցրիկ<sup>(3)</sup> ձայնով մինչեւ որ քնացնէր :

2. Օր մը փոքրիկ<sup>(4)</sup> տղան հիւանդացաւ . իր մայրը անոր անկողնոյն քով նստելով կը հսկէր գիշեր ցերեկ և կը խնամէր զինքը . սենեակին մէջ լսւ պատրաստուած կրակ շինած էր հողէ կրակարանի մը մէջ, ուր կը պատրաստէր անոր<sup>(5)</sup> գեղերը որ իրեն առողջութիւն պիտի տային : Գրիգոր անոյշ անոյշ քնացաւ, և քիչ մը արթննալէն յետոյ զգաց որ իր անկողնին վրայ մայրիկին ձեռքը գրուած էր :

3. Երբ Գրիգոր բաւական ժամանակ կը քնանար, մայրիկը կը գիշերէր<sup>\*\*</sup> միայնակ, կը յոդնեցնէր իր աշքերը, ճրագին լուսով անոր լաթերը<sup>\*\*</sup> կը կարկտէր : Տղան կը հանդշէր . իսկ մայրը ամէն նեղութիւն կը կրէր՝ թեպէտ աղքատ՝ իր մանկիկին<sup>\*\*</sup> մաքուր զգեստներ հագցնելու համար : Հիմա մայրիկը ծերացած է, և Գրիգոր կտրիճ գործաւոր մը եղած . հիմա ան է որ կ'աշխատի . իսկ մայրը իր թիկնաթուին վրայ նստած գուլպայ<sup>\*\*</sup> կը հիւսէ : «Մայրիկ, ըստ Գրիգոր օր մը, մի յոդնիր, գուն բաւական աշխատած ես արգէն ինձ համար . հիմա կարգը իմս է»:

4. Կիրակի օր մը Գրիգոր իր նոր լաթերը հագաւ . «Մայրիկ, ըստ, օդը գեղեցիկ է այսօր, եկու պտըտինը»: Գրիգոր փոխանակ իր ընկերաց հետ գինետուն<sup>\*\*</sup> երթալու, մօրը կ'աւածնորդէր որպէս զի մաքուր օդ ծծէ, կամաց կը քալէ, որպէս զի չի յոդնեցնէ մայրը : Եւ մայրը շատ<sup>(6)</sup> ուրախ էր այս ըարի տղան հետը առած պտըտելուն համար :

5. Քանի մը տարիէն Գրիգոր իր դրացիկն աղջկանը<sup>\*</sup> հետ ամուսնացաւ<sup>\*\*</sup>, հիմա տուն տեղ ունի, մայրը շատ ծերացած է, բայց միշտ կը յարդուի իր տղայէն<sup>(7)</sup> և հարսէն :

Օր մը, իր մօրը անուան տօնախմբութեան օրը իր թոռը<sup>\*\*</sup> իրեն բերաւ որ անոր<sup>(8)</sup> ծաղիկ<sup>\*\*</sup> կը բերէր և կ'ըսէր. «Մեծ մայր, կը շնորհաւորեմ քու տօնախմբութիւնդ»։ Գրիգոր շատ ուրախ էր՝ իւր ծերունի<sup>(9)</sup> մայրը մեծ երջանկութեան մէջ տեսնելով։

Հարցմունք. — Մայրը ի՞նչպէս կը քալեցնէր և կը քնացնէր իր տղան. — Անոր հիւանդութեան ատեն ի՞նչ կ'ընէր. — Տղան երբ կ'աշխատէր, մայրը ի՞նչ կ'ընէր. — Մայրը որո՞ւն հետ պտոյտի կ'երթար. — Մօրը տօնախմբութեան օրը որո՞նք այցելութեան եկան։

ՀԻՄԱՆԳ. — Դիտողութիւն. — (Տան մը մէջ՝ ուր բացի ծերունի կնոջմէ մը ոչ որ կար, նրազ մը կը վառէր. ծերունին հիւանդ պառկած էր և չէր կրնար տեղէն իսկ շարժիլ. դրացիները եկան, դուռը զարկին ու ներս մտան։

Քանի որ կինն հիւանդ էր և տանը մէջ ուրիշ մարդ չկար, ո՞վ բացաւ դուռը և ո՞վ վառեց ճրագը։ Սխալ է այս. պէտք է ըսել, սենեկին մէջ լոյս չկար, դուռը բանալ տուին, ներս մտան։

Քերականական վարժ. — (Կարգադրել) Գործերս . . . որպէս զի հանդստանամ։ (Կորսնյնել) Մինաս իր ժամացոյթ . . . անցեալ օր։ (Բնարել) Պարկեշտ և կըթեալ մարդիկը քեզ բարեկամ. . . . (Դողամ) Երբ այն սոսկալի հիւանդութիւնը միտքս գայ . . . . (Դոնուիլ) Այն ժամանակ կատարեալ տպիտութեան մէջ . . . .

[<sup>1—9</sup>] Որո՞նք ածական, դոյական, դերանուն են. ի՞նչ թիւ և ի՞նչ հոլով ունին։

Դ Ա. Ա Ժ Զ.

ՔՈՒ ԸՆԿԵՐԴ ՍԻՐԷ ՔՈՒ ԱՆՁԻԴ ՊԷՍ  
ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ - ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Խարխուլ. — Փլիլած, հին։ Արձագանդ. — Զայնին անդրա-  
խուրձ. — Փայտի, ցորենի տէմէթ։ Պառնալը։  
Տըկս. — Չարըխ։ Յապալման վրայ. — Ուշանալուն  
Կիսամեռ. — Կէս մեռած։ Վրայ։  
Կը սառէին. — Սառ կը դառ։ Զահ ի ձեռին. — Զեռքերնին ձը-  
նային։ Րադ բռնած։  
Փարեցան. — Պլուեցան։ Զգաստացուցին. — Խելքը գլուխը  
Անզգայ. — Ինքզինքնին կորսըն. բերին։  
ցուցած։ Շնչառութիւն. — Շունչ առնելը։  
Խոխ. — Չոր փայտի մանր Բալսիր. — Սառի վրայ կառք ա-  
կտոր։ ռանց անփուի։

Հ Ա. Մ Ա. Ո Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Երեք եղբայ ներ ձմեռը անտառ գային փայտ կտրելու. բայց  
երեկոյին չկարողացան վերադառնալ, զի երեքն ալ ձամբան ձիւ-  
ներուն տակ թաղուած էին։ Երեք եղբայրներ իրարու օդնեցին.  
ամենքն ալ անմիտա մնացին և փրկուեցան վտանգէն։

Ը Ո Վ. Ծ Կ. Ա. Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. Զմեռուան<sup>\*\*</sup> սաստիկ<sup>(1)</sup> ցուրտ օր մը՝ Կատարինէ և  
Գարրիէլ<sup>(2)</sup>, որ շատ աղքատ էին, իրենց խարխուլ<sup>(3)</sup> տան  
մէջ նստած կը մտածէին թէ՝ ի՞նչպէս փայտ ճարեն, որ-  
պէս զի ցուրտէն չմեռնին։ Իրենց տղաքը, որ դեռ պղտիկ  
էին, կրակ<sup>\*\*</sup> չունենալուն համար իրենց չնչով կը տաքցը-

նէին զիրար<sup>(4)</sup>։ Միքայէլ, անդրանիկը՝ տասն տարեկան էր, գրիգոր, կրտսերը՝ ուժ տարեկան և Ռափայէլ կրտսերաւ գոյնը<sup>\*\*</sup> վեց աարեկան։ Տակաւ առ տակաւ ցուրտը, կը սաստկանար և առանց կրակի կարելի չպիտի ըլլար մնալ։ Փոքրիկ մանուկներն իրենց ծնողաց վրայ խորհեցան և ուշեցին զանոնք փրկել. ուստի ըսին։ «Եկէք, երթանք անտառ, չոր խոխներ<sup>\*\*</sup> ժողվենք, խորձ կապենք և տուն բերենք»։ Անմիջապէս ճամբայ ելան և անտառին մէջ մտնելով սկսան չոր փայտեր<sup>(5)</sup> ժողվել։ Հօն իրենցմէ զատ ուրիշ մէկը չկար, խորին լուսթիւն<sup>\*\*</sup> մը կը տիրէր անտառին մէջ, սակայն բնաւ չէին վախնար քաջասիրտ<sup>(6)</sup> մանուկները։ Երբ երեկոյ եղաւ, խորձերնին<sup>\*\*</sup> շալկած ճամբայ ելան. բայց ճամբան դժուարաքայլ էր, ձիւնը բարձրացած էր ամէն տեղ և հարկ կ'ըլլար անոնց վրայէն անցնիլ մեծ տառապանօք<sup>\*\*</sup>։ Զիւնը կը փակչէր իրենց տրեխներուն և զանոնք<sup>(7)</sup> կը ծանրաբեռնէր։

2. Խեղճ<sup>(8)</sup> մանուկներն այլ ևս քալելու անկարող՝ յոդնած\* ձիւներու մէջ կ'իյնան։ Ռափայէլ<sup>(9)</sup> գրեթէ շնչառապառ ու կիսամեռ։ Միքայէլի գիրկը ինկած էր. ի՞նչ ընէին խեղճ տղաքը. մինակուկ էին ընդարձակ անտառին մէջ և ոչ տեղէ մը օգնութեան յոյս ունէին, բայց միայն Աստուծմէ. իրենց բոլոր ուժովը կը պոռային։ «Օգնութիւն, օգնութիւն.» բայց երբ ոչ ոք կը լսէր, ոչ ոք կ'երեւէր, կը սկսէին լալ։ Հողմն այնչափ սաստիկ ցուրտ կը փէր անոնց երեսին որ իրենց արտաստքը կը սառէին։ Փրկութեան յոյսն իրենց մէջն էր. իրարու փարեցան որպէս զի զիրար տաքընեն. բայց Ռափայէլ խիստ պաղած և գրեթէ անզգայ

ինկած էր։ Միքայէլ չդիմացաւ Ռափայէլի վիճակին վրայ և լաւ սեպեց մերկ մնալ քան թողուլ որ կրտսերագոյն եղբայրը մեռնի. ուստի հանդերձներն հանեց, անոնցմով<sup>(10)</sup> ծածկեց զնա և ինքն ալ անոր մարմնոյն<sup>(11)</sup> վրայ հակած՝ տաքցուց շնչովը. իսկ անդին ծնողքը կասկածելով իրենց որդւոց դարձին յապաղման վրայ, երբեմն երբեմն դրան սեմը կ'ելնէին. և երբ մէկը չէին տեսներ՝ կը գոչէին. «Ռափայէլ, Գրիգորէ, Միքայէլ.» բայց ոչ ոք կը պատասխանէր, միայն իրենց ձայնին արձագանդն։ Ծնողքն և գիւղացիք ջահ ի ձեռին ճամբայ ելան վնասուելու զանոնք<sup>(12)</sup> և գտան ճամբուն վրայ, ձիւներուն մէջ, միմեանց փարած։ Այս միջոցին հարուստ մը կ'անցնէր բալիսիրով, գիւղացւոց աղաչանօք բալիսիրին մէջ դրին, ծածկեցին խեղճ մանուկներն և տուն տանելով զգաստացուցին և ուրախացուցին ծնողքը, մահուանէ փրկելով զաւակնին։

**Հարցմունիք.** — Ինչո՞ւ համար անտառ գացին տղաքը։ — Ինչո՞ւ համար երեկոյին տուն չի դարձան։ — Ո՞ւրկէ օգնութեան յոյս ունէին։ — Ի՞նչպէս տաքցան։ — Ո՞վ փրկեց զանոնք։ — Գիւղացիք ի՞նչպէս գտան տղաքը։ — Ի՞նչ ըսել է արձագանգ։

**ՀՐԱՀԱՆԳ.** — Հականիշգ. — Անզգայ զգայուն։ Անշունչ շնչաւոր։ Կենդանի մեռեալ։ Ամօթխած անամօթ։ Բարեկալաշ ամբարիշ։

[<sup>11-12]</sup>] Որո՞նք են յատուկ և հասարակ անունները, որո՞նք են դերանունները. ի՞նչ թիւ և ի՞նչ հոլով են, որո՞նք են ածականները։

Նոյնանիշ-այլատառի. — Կան բառեր ալ որ նմանաւ ձայն տարբեր գրերով կը գրուին, այլ նոյն նշանակութիւնը ունին. ինչպէս. — Ոլոր, ոլոդ, (սրունքի ոսկոր. — Թոր. թոդ. — Փափաք, փափադ. — Դարնի, դափնի. — Թրմուզ, թրմուս, (մըսրը բակլասը). — Սպայ, սպահ, (աղաս զինուոր). Մըդուզ, մըդուզ, (անպիտան)։

Քերականական վարժի. — Վիմագիրը . . . — Մշակը . . . — Դերձակը . . . — Դահիճը . . . — Դասատուն . . . — Աւտամնագործը . . . — Պատկերհանը . . . — Հիւսնը . . . — Պայտարը . . . — Ուստայնանկը . . . — Սակրիչը . . . — Երկաթագործը . . . :<sup>(1)</sup>

Դիտողուրիւն. — (Եղները կառին լծելով յառաջ վարեց)։ Այս մխալ է. որովհետեւ եղները սայլին կը լծուին, ոչ թէ կառքին, ձիերը կը լծուին կառքին. ուստի պէտք է բաել. Եղները սայլին լծելով յառաջ վարեց։

[<sup>1]</sup> Կէտերուն աեղ յարմար բառեր գիր, ինչպէս. Վիմագիրը կը գրէ, մշակը կը վարէ . . . եւայլն։

—————

Դ Ա Ա Փ Ե Բ

## Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

Դ Ա Ս Ս Խ Օ Ս Ո Ւ Ի Թ Ի Ւ Ն — Ը Ն Թ Ե Բ Ց Ա Ն Ո Ւ Ի Թ Ի Ւ Ն

Անհաւատ. — Հաւատք չու. կից. — Ոտքի հարուած: նեցով: իմաստակ. — իելացի ձեւագուած: Զդալ. — իմանալ:

## Ա. Հ Ր Ա Շ Ա Ք

Գաղղիոյ մէջ անհաւատ (<sup>1</sup>) մարդ մը, օր մը քահանայի մը կը դիմէ և կ'ըսէ.

— Հրաշքի չեմ հաւատար, այսու ամենայնիւ անոր ի՞նչ ըլլալը կուղեմ հասկնալ:

— Եատ աղէկ, կը պատասխանէ քահանան և փառաւոր (<sup>2</sup>) կից մը կը զարնէ անոր (<sup>3</sup>) կռնակին (<sup>4</sup>):

— Զդացի՞ր թէ ի՞նչ ըրի, կը հարցնէ անոր:

— Ո՞հ, ի՞նչպէս չզդամ այսպիսի սոսկալի հարուած մը: Ուրեմն, զաւակս, գիտցիր որ եթէ այս հարուածին տուած ցաւը չզգայիր, հրաշք պիտի ըլլար:

## Զ. Ո Ւ Թ Մ Ա Հ Ս Յ Ո Ւ Մ Ե Վ Ե Ր

Կիւլացի քահանայ մը, օր մը Եպիսկոպոսարանն երթաւլով կը փափաքի Սրբազն հօրը ներկայանալ: Եպիսկոպոսը դայն ներս կանչել տալով.

— Ի՞նչ կուզես, կը հարցունէ:

Առանց անոր (<sup>5</sup>) պատասխանին սպասելու կը յաւելու.

— Քու զէմքէդ (<sup>6</sup>) յայտնի կ'երեւնայ թէ գուն բոլորովին տգէտ մարդ մ'ես, և կրօնի (<sup>7</sup>) նախնական գիտելիքներուն անգամ անտեղեակ. ըսէ՝ տեսնեմ. քանի՞ են մահացու մեղքերը:

— Ութ հատ են, Սրբազն հայր, կը պատասխանէ

[<sup>1—7</sup>] Որո՞նք են դոյցական, ածական, դերանուն. ի՞նչ թիւ եւ ի՞նչ հոլով են:

քահանան . և կը համրէ միսյն եօթը մահացու մեղերը<sup>(1)</sup> :  
Հապա ուժերորդը ո՞րն է :

— Ուժերորդն ալ, Սրբազն հայր, Եպիսկոպոսաց՝  
իեղծ քահանայներուն նկատմամբ ցոյց տուած արհամար-  
հանքն է :

Հարցմունք . — Քահանան ի՞նչ պատասխանեց անհա-  
ւատին : — Քահանան ի՞նչ պատասխանեց Սրբազնին :

ՀՐԱՀԱՆԳ . — Քերականական վարժ . — Կանոն . —  
Արմատ կը կոչուին այն բառերը, որոց ոչ սկիզբն և ոչ վեր-  
ջը գիր կամ վանկ մը աւելցուած է :

Ա. ծանց կ'ըսուին այն բառերը, որոց սկիզբը կամ վերջը  
գիր կամ նոր վանկ մը աւելցուած է :

Ա. ՐՄԱ.Տ. — Մատ, ոսկի, քար, ծով, թուղթ, ծաղիկ,  
խուլ, հաճար, որբ :

Ա. ԹԱ.Յ.Ց. — Նախադաս մասնիկով . Ա. Ամիս, դժողով,  
սգէտ, ապուշ, սժուոյն :

Յետադաս մասնիկով . Ծովային, քաղցրական, մաս-  
նաւոր, ծաղկասէր, հողեղին, տասնամեայ, հանձարեղ, տ-  
ւաղուտ, խողենի, ցողուն, նախանձոս, որսորդ, որբանց,  
գոլոց, ծառաստան, գործարան, նաւակ, հայրիկ<sup>(2)</sup> :

Նոյնանիշ-այլատառ . — Դառ, թառ (թառելու ձիւղ) :  
Բէճ, Բէջ (քամակ, կռնակ) : Բ. ճիճ, Բջիջ (փեթակի խոռոշ) :  
Բանգակ, Բամպակ : Գժատ, Կճատ (շամա մոմ) :

[1] Ուսուցիչը եօթը մահացու մեղերը յիշեցնէ :

[2] Մասնիկները արմաններէն զատել :



Դ. Ա. Ա Ժ. Բ.

### ԾՈՅԼ ՕՆՆԻԿ

ԴԱՍՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Զանձրանալ . — Զգուիլ :

Զուարձանալ . — Խաղալ :

Զգաել . — Երկարել,

Յօրանջել . — Երեժակալ :

Զուարթութեամբ . — Ուրախու-

թեամբ :

4. Գէորգ իր դասերը<sup>\*</sup> կը պատրաստէր. մարդ<sup>\*</sup> աւելի  
աղէկ կ'աշխատի զով օդին<sup>\*\*</sup> իր բաց պատուհանին<sup>(1)</sup> առ-  
շեւ, ուրիշ լցու և մարուր օդ կը մտնէ : Գէորգ կ'աշխատի  
զուարթօրէն և ապա կ'երթայ իր բարեկամներուն հետ կը  
զրունու<sup>\*\*</sup>, Գէորգ կը վազէ և կը խաղայ, իր ընկերաց հետ  
թռուցիկ կը թոցունէ<sup>\*\*</sup>, և բոլորովին ուրախ որտով կը

զուարճանայ, վասն զի իր գասերը սերտած և գրերը պատրաստած էր : Ճաշէն վերջը հայրը, մայրը և քոյրերը իրեն սենեակին մէջ ժողվուեցան և սկսան խօսակցիլ : Երբ մայրը դուլպայ կը հիւսէր և փոքրիկ քոյրը կամաց կամաց կը քնաշար մայրիկին թիկնաթոռին վրայ կրթնելով՝ հայրիկը կը խօսէր Գէորգի հետ, և անոր գեղեցիկ պատմութիւններ կը պատմէր :

2. Հետեւեալ օրը Գէորգ զուարթութեամբ դպրոց գընաց և երբէք չվախցաւ դասաստուին հարցումներէն<sup>(1)</sup>, վասն զի լաւ գիտէր իր գասերը : Տախտակին առջեւ կ'ենէր և լաւ պատասխաններ կուտար և կը վարձատրուէր : Իսկ Օննիկ իր սենեկին<sup>(2)</sup> մէջ չէր ուզեր աշխատիլ, և կ'ըսէր. «Կը ձանձրանամ աշխատութենէ<sup>(3)</sup>. դասերս ետքը կը պատրաստեմ.» յետոյ չփկը քոյլը կը կանչէր անոր հետ խաղալու համար, սենեակին<sup>(4)</sup> մէջ վեր վար կը պարտէր, և այսպէս ժամանակը պարապ կ'անցունէր փոխանակ աշխատելու և սակայն պարապ կենալէն ալ կը ձանձրանար:

3. Կէս օրէն ետքը կը սկսի խաղալիկներով<sup>\*\*</sup> զրօնուլ. իր չնիկը ա՛լ չզուարճացնէր զինքը, քիչ մը ետքը խաղալիկներէն ալ կը ձանձրանայ, կը յօրանչէ, թեւերը կը ձգտէ և յանկարծ կը մտածէ թէ դասերը չէ պատրաստած, բայց աշխատելու ալ կարողութիւն չոնի : Ճաշէն ետքը հայրը կը հարցնէ անոր. «Դասերդ պատրաստած ես» . — «Ո՛չ» . կը պատասխանէ ամէնալով. — «Ե՛ ուրեմն, դնա՛ պատրաստէ քու սենեկիդ մէջ» : Եւ Օննիկ ճրագին լոյսով գլուխը ձեռու-

[<sup>1-5</sup>] Արտնք են գոյականները, և ի՞նչ թիւ և ի՞նչ հոլովանին :

քերուն մէջ առած կը ջանայ իր կորուսած ժամանակը շահիլ դասերը պատրաստելով:

4. Բայց Օննիկ կը ձանձրանայ, դասերը իրեն անտանելի կուգան, և գէշ կերպով կը պատրաստէ և յետոյ կը խորհի թէ իր ծնողքը զուարթութեամբ խօսակցելու զբաղած են, մինչդեռ ինք կ'աշխատի մինակուկ իր սենեակին մէջ: Օննիկին քունը կուգայ և կ'երթայ կը պառկի առանց դասերը պատրաստելու: Հետեւեալ օրը գպրոց<sup>\*</sup> կ'երթայ, բայց անհանգիստ է, կը վախնայ որ դասաստուն<sup>\*\*</sup> բան մը կը հարցնէ, իր ընկերներուն ետեւը կը պահուըտի, բայց ուսուցիչը զայն կը նշմարէ և կուղէ որ դասերը ըսէ: Ան կը պատրաստուի պատասխաննել անոր հարցումներուն՝ տախտակին վրայ դրելով. բայց գլուխը կը քերէ, բան մը պատասխաննել կը խորհի, սակայն չէ կարող, զի դասերը չդիտեր: Օննիկ կը յանդիմանուի և կը պատժուի:

Հարցմունիք. — Գէորգ ի՞նչ կ'ընէր իր սենեկին մէջ: — Աշխատութենէն վերջը ի՞նչ կ'ընէր: — Երեկոյին հայրը ի՞նչ կը պատմէր: — Դպրոցին մէջ ինչո՞ւ զուարթ էր Գէորգ: — Օննիկ ի՞նչ կ'ընէր իր սենեակին մէջ: — Իր զրադումը ի՞նչ էր մինչեւ կէս օր: — Երեկոյին ի՞նչ ըստ հայրը: — Ինչո՞ւ համար տխտը էր Օննիկ դպրոցին մէջ:

ՀՐԱՀԱՆԴԻ. — Քերականական վարժք. — (Հրաման տալ) Տէր . . . որ դուրս ելլեմ: (Մահիկ ընել) Դասաստուիդ խօսքերն ուշադրութեամբ . . . : (Կարգադրել) Տետրակներդ խնամով. . . : (Վասահիլ) Մէկուն վրայ մի . . . առանց լսումը ճանհնալու<sup>(1)</sup>:

[<sup>1</sup>] Կէտերուն տեղ խօսքին գլուխը դրուած բառերը յարմարցնելով դիր:



կը մեռցնէ զայն։ Այս պատահարէն<sup>(3)</sup> շատեր մեռած են  
գրեթէ ամէն երկրի մէջ։

2. Խոհանոցի մէջ աշխատող մարդիկ նմանօրինակ պա-  
տահարներու ենթակայ են, զի մուխին երկար և յամր աղ-  
դեցութիւնը կը խանգարէ առողջութիւնն և կը հիւանդա-  
ցընէ։ Զերմոցներէն ալ չնչասպառութիւն կրնայ պատահիլ-  
երբ մէջը չափազանց հանքածուխ լեցուած է, և կամ ա-  
ծուխը բոլորովին չմարած\* խողովակին բանալին գոյցուած է։  
Ածուխէն ելած կազերը, որ մահ կը պատճառեն, մինչեւ  
հեռուն կ'ազդեն։ Մտի՛կ ըրէք։ Գաղղիոյ Բա-տը-Բալէ ա-  
նուն նահանդին մէջ հացագործ մը կար, որ միշտ փուռէն  
ելած ածուխներն ստորերկրեայ մառանի մը մէջ կը պահէր։  
Գիշեր մը այդ ածուխներն յանկարծ բռնկելով, ածխային  
հիւթ մը կ'արտադրեն, որ կը տարածուի մինչեւ այն հե-  
ռուն գտնուած սենեակը, ուր պառկած էին իր ընտանիքը։  
Այդ ընտանիքէն մեռան հայրը, մայրը, հանին ու փոքր  
աղջիկ մը այդ ածուխին արտադրած կազէն։

Հարցմունիք. — Կրակը ի՞նչպէս պատրաստելու է որ շնչ-  
չասպառութիւն տեղի չունենայ։ — Ի՞նչ զգուշութեան մի-  
ջոցներ գործածելու է։ — Լսա՞ծ էք մուխէն մարդ մե-  
ռած ըլլայ։ — Որո՞նք աւելի մուխի ենթարկուած են։ —  
Պատմէ՛ Բա-տը-Բալէի պատահարը։

ՀՐԱՀԱՆՔ. — Դիտողուրինն. — 1. Գիլքս բացի, որպէս զի  
բնանամ։

Սխալ է այս. որովհետեւ եթէ գիրքս բանամ, կար-  
դալու համար է, չէ թէ քնանալու. ուստի պէտք է ըսել.  
որպէս զի կարդամ։

[<sup>1—3</sup>] Որո՞նք գոյական են, ի՞նչ թիւ, ի՞նչ հոլով ունին։

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ

—••••—

Դ Ա Ս Ա.

## Շ Ն Չ Ա Ս Պ Ա Ռ ՈՒ Թ Ի Ւ Ն

ԴԱՍԱԿԱՐԱՎՈՐԻ ԹԻՒՆ — ՀԱՅԵՐՑԱՑԱՆՈՒԹԻՒՆ

Տեղի կ'ունենայ. — կը պա-	Եղեւին. — Զամ աղաճը:
տահի:	Պատահար. — Դիպուած :
Խոհանոց. — Կերակուր եփելու	Արտաքուստ. — Դուրսէն :
տեղ :	Ցամր. — Ծանր :
Խոհարար. — Կերակուր եփող :	Զափազանց. — Խիստ շատ :
Ածխային. — Ածուխի վերաբեր-	Խողովակ. — Օլուխ :
եալ :	Ստորերկրեայ. — Գեւանի տակ :
Մառան. — Մախսէն, քիլէր :	Կրակարան. — Կրակ դնելու
Նոճի. — Սէլզի :	աման :

Օգսէն կ'ըսէր. չնչասպառութիւնը տեղի կ'ունենայ շատ  
անգամ այն տեղերը, ուր չայրած ածուխը կրակարաններու  
մէջ կ'այրի մխալով, և մահ կը պատճառէ։ Այս մահառիթ  
վասնգէն<sup>(1)</sup> ազատելու համար նախ պէտք է դնել ածուխը\*  
բաց և ընդարձակ տեղ մը, որպէս զի լաւ մը այրի։ Ածու-  
խը բոլորովին կրակ\* գառնալէն վերջը՝ վրան մոխիր յանե-  
լու է և ապա բերելու է սենեակը\*։ Իսկ լաւ չայրած ա-  
ծուխն, որ սենեկի կրակարանին\*\* մէջ գրուած է, կ'այրի տա-  
կաւ, որպէս յառաջ կուգայ տեսակ մը կազ, որ կը տարած-  
ուի սենեկին մէջ<sup>(2)</sup>, և եթէ քնացող մարդ մը գտնուի հոն,

2. Տաք բաղնիք դացի, որպէս զի լողամ։  
Սխալ է. որովհետեւ տաք բաղնիքին մէջ չըղացուիր.  
պէտք է ըսել. որպէս զի լուացուիմ։  
Նոյնանիշ-այլատափ.—Զեռնատ. Զեռնհատ. — Ժանդ.  
Ժանկ. — Բնտել. Բնդել. — Օճառ. Աճառ. — Չուար. Չոհար.  
(Գոհար)։

Քերականական վարժ. — Կանոն. — Բարդ կ'ըսուին այն  
բառերը, որ երկու արմատական բառերէ շնուռած են. ինչ-  
պէս. Լուսատու (լոյս և տալ բառերէն). Եղբայրասէր (եղ-  
բայր և սէր բառերէ). Հայկանոյշ (Հայկ և անոյշ բառերէ).  
Զօրապետ (զօրք և պետ բառերէ). Մարդասապան (մարդ և  
սպան բառերէն)։

Օրինակ. — Թերեհաւատ, քաջասիրտ, վատասիրտ, մե-  
ծազօր, արագոտն, ծանրաբեռն, թուլամորթ (¹)։

[¹] Սոյն բարդ բառերուն արմատները գատել։



### Դ Ա Ս Բ

#### Մ Օ Ր Մ Ը Ս Ի Ր Տ Ը

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ — ԲՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Խոժոռադէմ. — Դէմքը իսու-  
ժոռ։

Այդ. — Առաւօտ։

Առթել. — Պատճառել։

Հեծեծագին. — Տրտմագին։  
Սեւազգեցիկ. — Սեւ հագած։

Հէք. — Խեղձ։

Կոծ. — Ռղբ։

1. «Մայրըդ հիւանդ է, կամաց, Սիրուն որդիս, աղմուկ մ'ըներ,  
Մի՛ հաներ ձայն, մի՛ ցատկեր վեր.  
Այսպէս բժիշկն՝\* է պատուիրած»։

Լըռեց մանկիկն, և տան սեմէն  
Խոժոռադէմ՝\* մահըն մըտաւ,  
Մութ գիշեր էր, կ'ըսեմ իրաւ,  
Երբ ննջէին\* մարդիկ ամէն։

2. Իսկ երբ երկինքը լուսացաւ,  
Լաց ու կոծի կը լսուէր ձայն,  
Դրացիներն՝\* ալ արթընցան,  
Մահըն իրենց ալ կ'առթէր ցաւ։

Մանկիկն նոյնպէս շուտ մ'անկողնէն՝\*  
Ցատկեց երաւ, ունէր մի վիշտ.  
Դառնայր կ'ըսէր հայրիկն միշտ.  
— «Հիմա՞յ Հայրիկ, աղմուկ հանեմ»։

3. Հեծեծագին՝\* գէմքըն յետ կոյս  
Դարցընելով կուլար հայրիկն,  
Մինչ մանուկըն սեւազգեցիկ՝\*  
Խնդրէր ծաղիկ գալար կամ բոյս։

Եւ էր ուրախ լաֆերուն՝ հէրն  
Երբ կը նայէր դուարթօրէն.  
«Ա՞ն, ինչ աղուոր եղայ նորէն.  
Արդ մօրս կ'երթամ, հոն զիս տարէք»։

4. «Ե՛կ, աե՛ս մայրիկդ, կ'ըսէ անոր  
Եւ բազկացն<sup>\*\*</sup> մէջ առնու տանի  
Մինչեւ սենեակն<sup>\*\*</sup> մեռած իր մօր.  
—«Մայրիկ . . . մայրիկս ալ չի շարժի:

«Անկողնոյն մէջ գիր զիս, հայրիկ»:  
Իսկ հայրն տրառում, տխուր կուլայ,  
Դընէ զայն մօր սըրտին վերայ,  
Ուր կը հանդչի մանուկն փոքրիկ:

5. —«Ահա՝ մայրդ, որուն գութ, սէր  
Մոյց ըզքեզ, լաւ գիտէ զայն.  
Ալ չոնիս դու գըդուանկը<sup>\*</sup> մօրկան.  
Ալ մեռած է, մեղ չը լսեր»:

Հայրն խարուէր . . . սիրաը մեռած  
Կը բարախէր<sup>\*\*</sup>, երբ իր որդին  
Դրաւ անոր վերայ կուրծքին.  
Մայրն կ'արթնար<sup>\*</sup> . . . նա չէր մեռած . . . :

Հարցնունք. — Բժիշկն ի՞նչ պատասխանեց. — Մանուկն  
ի՞նչ կըսէր հօրը. — Մայրը ինչպէ՞ս արթնցաւ:

ՀՅԱՀԱՆՔ. — Քերականական վարժք. — Դպրոցը սի-  
րող, անձրեւ բերող, փոխ տուող, տէրը սիրող, պատմու-  
թին գրող, խոր բաներ գիտող. (դպրոցակար, ևայլն):

Բացատրելի բառեր. — Ագռաւ, հողմացոյց, աշտարակ,  
թիկնաթոռ, խորան, լրագիր, անկողին:

—————♦♦♦♦—————♦♦♦♦————



Դ Ա Ս Գ.

### ԾԱՂԻԿ

ԴԱՍՏԱԿԵՐՈՒԹԻՒՆ - ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Հանդիպակաց . — Իրարու դէմ:	Բաժակ. — Ծաղիկին ասորին
Յօղուն . — Բոյսի կոթ :	թերթը :
Կոկոն . — Խոնչա :	Պասկ. — Մէջի ամբողջ մասը :
Զղանման . — Զղի պէս :	Սերմնափակ. — Սերմը գոցող
Զճառագայթեր . — Զճագիր :	մասը :
Բնոյթ . — Բնութիւն :	Առէջք . — Թել :
Հաւկիթաձեւ . — Հաւկիթի ձեւ :	Ծնչերակ. — Ծնչառութեան ե-
Տերեւապատ . — Տերեւով ձած .	րակ :
կուած :	Կը նպաստէ . — Կ'օգնէ :
Ծակոտկն . — Ծակ ձակ :	Դուար . — Կով, եղ :
Հասկ. — Ցորենի գլուխ :	Կցորդ . — Միացած :
Չուակ . — Սերմի տեղը :	Կը թառամին . — Կը չորնան :

Ի՞նչ ձաղիկ է այս, Փափկանուշ: — Ծաղիկ մը որ կար-  
միր<sup>(1)</sup> թերթեր և անուշ հոտ մը ունի. բայց երբ ձեռքս  
առնելու ըլլամ, կոթին վրայ կը տեսնեմ փշիկներ<sup>(2)</sup>: Եթէ

սեղմեմ, մատս կը խրի. բայց ի՞նչ սիրուն, ի՞նչ անուշ հոտ:  
— լաւ. ի՞նչ է այս քովը բուսածը : — Հաւկթաձեւ\*\*  
տերեւապատ\*\* բան մը, տեսնեմ. ա՞հ, մէջն ալ կարծես թէ  
այդ ծաղիկն կարմիր թերթերը<sup>(3)</sup> կը նշմարուին: — Ա.յո',  
այդպէս է, մտիկ ըրե՛ք . սոյն ծաղիկը կը կոչուի վարդ\*\*:  
իսկ այս երկրորդը՝ այդ վարդին կոկոնն\*\* է . որ քիչ ժա-  
մանակէն՝ զինքը ծածկող տերեւները<sup>(4)</sup> ճեղքելով պիտի  
բացուի և պիտի ունենայ վարդին պէս անուշ հօտ և անուշ  
գոյն: — Բայց ի՞նչպէս կը բուսնի այդ վարդը: Պարտիզպա-  
նը\*\* հողը փորելով կը անկէ վարդի տունկը, կը ջրէ, որով  
կ'աճի, և կը ծաղկի: Վարդենին կը բաղկանայ արմատէ,  
ցողունէ, տերեւէ, ոստէ, կոկոնէ, ծաղիկէ. արմատը\*\* կը  
գտնուի հողին մէջ. ցողունը արմատէն<sup>(5)</sup> մինչեւ ոստերուն  
բաժնուած մասը, որ եթէ ծառոց\*\* համար ըսուի, կը կոչ-  
ուի բուն. ոստը՝ տերեւները կրող մասն է. կոկոնն ոստերուն  
վրայ՝ ծաղիկը պարունակող\*\* մասն է. իսկ ծաղիկն այն մասն  
է, զոր կը տեսնէք ահա: Տերեւը բոյսին նշառութեան\* կը  
նպաստէ և չորս գլխաւոր մասերէ կը բաղկանայ. 1. Ա.յն  
մասը, որ կ'ելնէ կոթէն և կ'երթայ մինչեւ գագաթն\*: 2.  
Կոթը. 3. Տերեւին՝ թերթին մէջ բաժնուած փորդիկ ջղա-  
նման\*\* երակները. 4. Տերեւին թերթը: Տերեւներն երենց  
տեսակն մէջ շատ մասերու կը բաժնուին. ի՞նչպէս. հաւկթ-  
աձեւ\*\*, կցորդ\*\*, սրտաձեւ\*\*, ծակոտկէն\*\*, փետրաձեւ\*\*,  
վահանաձեւ\*\*. կան նաեւ տերեւներ, որ դէմ առ դէմ  
բուսներով կը կոչուին հանդիպակաց տերեւ: կան ալ որ  
առանձնաձեւ են վարդի տերեւի նման: կան որ բաղադրեալ  
են, այսինքն մէկ տերեւը շատ մը մասերու բաժնուած, ի՞նչ-  
պէս է սիսուան տերեւը:

Մաղիկը կը բաղկանայ բաժակէ, պսակէ, ձուարանէ,  
սերմնափակէ և առէշքներէ: Առէշք կը գտնուին ծաղիկին  
մէջը: Բոյսերը կ'աճին օդով, ջուրով, հողով. ուստի եթէ  
բոյս մը առանց օդի տեղ մը դնելու ըլլանք, շունչ չառնե-  
լուն համար կը թառամի. ի՞նչպէս երբ մարդս շունչ չառ-  
նելու ըլլայ չկրնար ապրիլը: Բոյսը այն բոյսերը, որ գործա-  
րաններ ունին, նշառութեան կարօտ են. բուսոյ<sup>(6)</sup> գործա-  
րաններն են, տերեւները, արմատը ևայն: Առանց ջուրի  
բոյս մը չկրնար աճիլ, զի ջուրը բոյսին արմատը թրջելով,  
անոր ջիղերէն կ'անցնի մինչեւ գագաթը և կը տարածուի  
ամբողջ մարմնոյն մէջ, ճիշդ այնպէս, ի՞նչպէս կ'ըլլայ ջուրն  
հողով<sup>(7)</sup> լի ամանի մը մէջ, կամ ի՞նչպէս արիւնը կը շջի  
մարդուն ամբողջ մարմնոյն մէջ ջիղերու, երակներու, նշե-  
րակներու<sup>(8)</sup> միջոցաւ: Նոյնպէս հողը բոյսին աճեցման գըլ-  
խաւոր պատճառներէն մին է. բոյսի մը աճեցման վրայ կը  
տեսնուին ծծումն, շրջան, քիրան, նշառութիւն: Բոյսին մէջ  
մասող ջուրն օդի նշառութեամբ կը մաքրուի. մաքրու ջու-  
րը՝ մոռնդ տուող ջուրն է, իսկ մնացեալը՝ քիրան է, որ  
տերեւներուն ծակերէն քրախնքի նման դուրս կ'ելնէ:

Հարցմունիք.—Ի՞նչ գիտես վարդին վրայ: — Ի՞նչպէս է  
կոկոնը: — Տոնկերն ի՞նչ մասերէ կը բաղկանան: — Ո՞րն է  
արմատը, ցողունը, տերեւը, ոստը, կոկոնը, ծաղիկը: — Տե-  
րեւներն ի՞նչ մասերէ կը բաղկանան: — Ի՞նչպէս կ'աճին  
բոյսերը: — Ջուրն ի՞նչպէս կ'անցնի տունկին մէջ:

[<sup>1-8</sup>] Որո՞նք են գոյական, ածական, ի՞նչ թիւ ու հոլով  
ունին:

**ՀՐԱՀԱՆՔ.** — Նոյնատառ-սարաւանիք. — Նոյնատառ-սարաւանիք կ'ըսուին այն բառերը, որ ճիշդ մի և նոյն գիրելով կը գրուին, սակայն տարբեր նշանակութիւն ունին. կան որ հողման կամ եզակի կամ յոդնակի մէջ կը տարբերին իրենց նշանակութեամբ. ինչպէս. սուտակ, . (ստախօս), սուտակ, (կարկեհան): Սպանդ, (զոհ), սպանդ, (տեսակ մը խոտ կամ ծաղիկ): Դար (հարիւր տարւոյ ժամանակ), Դար (զառիվայր տեղ):

**Ածանց բառեր.** — Անմարմին, անպիտան, անփոյթ, անհոգ, անշարժ, (մանիկները զատէ):

Դ Ա Ա Դ.

### ՄԱՐՄՈՅ ԽՆԱՄՔ

ԴԱՍՏԱԿԵՐՊԻՒԹԻՒՆ - ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Վեցոտանի.	— Վեց սոտքով:	Բաղնիւպան.	— Բաղնիքի ծառութունեայ:
Գործունեայ.	— Գործող:	Զովանալ.	— Հովահրիւ:
Պարարա.	— Պէր:	Զիարշաւ.	— Զի վաղցներու հանդէս:
Գաղջ.	— Քիչ տաք:	Զիարշաւ.	— Զի վաղցներու հանդէս:
Պիծակ.	Վայրի մեղու:	Ծակուլ.	— Ծակուլ:
Նունենի.	— Նուռփ ծառ:	Ծակուլք.	— Ծակուլք:
Չուլածոյ.	— Թափծու:	Նարնջենի.	— Նարնջի ծառ:
Խճ.	— Մանր քար:	Զիթենի.	— Զէթինի ծառ:
Շոգիանալ.	— Շողի դուրս տալ:	Թղենի.	— Թուզի ծառ:
Ոսկեղօծ.	— Ոսկի պատած:	Թափանցել.	— Մէջէն անցնիլ:
		Յունապի.	— Յունապի ծառ:

1. Մարմոյն առողջութիւնն (<sup>(1)</sup>) ամէնէն պիտանի բանն է մարդուս համար. մարմինը միշտ մաքրութեան կը կարօտի, որպէս զի մորթին\* ծակտիքը գործունեայ մնան: Մորթը պարարտ նիւթ մըն է, քրախնը և թեփեր դուրս կ'ուտայ, որը ներքին գործարաններն աղտոտ կը պահեն իրենց պաշտօններուն մէջ. ուստի պէտք է մաքրութեան (<sup>(2)</sup>) խնամներով, այսինքն լուացուելով, թաց լաթով սրբուելով, բաղնկա երթալով մարմինը մաքրու պահել:

Բաղնիքը երեք տեսակ է. ծովային (<sup>(3)</sup>), տաք և ուռսական բաղնիք: Ծովային բաղնիքները կը գտնուին ծովերու մէջ, որոնց ջուրն աղի է և պաղ. տաք բաղնիքը քաղաքներու մինչեւ իսկ գիւղերու մէջ կ'ըլլայ, դաղջ կամ տաք. ուռսական բաղնիքը կ'ըլլայ սրահի մը մէջ, ուր խիճերով լի ձուլածոյ հնոց մը կը գնեն. այդ խճալի հնոցը կարմրնալու չափ կը տաքցնեն, յետոյ վրան ջուր կը լցնեն և կը թողուն որ շոգի դուրս տայ. այդ շոգին սրահին մէջ կը տարածուի և կը տաքցնէ օդը: Սենեակին կամ սրահին մէջ դրուած կան խոտէ անկողիններ, որոնց վրայ կը հանգչին լուացուողները. հոն նախ աղէկ մը կը քրանին, ապա կը շվոտին ու պաղ (<sup>(4)</sup>) ջրով կը լուացուին:

Բաղնիքին մէջ կան ծառայող (<sup>(5)</sup>) մարդիկ, որ կը կոչուին բաղնեպանն:

2. Մարմոյ խնամքը կը պահանջէ յաճախ մարմինը պաղ ջրով սրբել, ձեռքերը, ոսքերն ու դէմքը լուալ: Եատ տաք եղած ատեն զովանալու համար ամէն երկու օրն անդամ մը կամ ամէն օր պաղ ջրով լուացուելու է: Այսպէս ահաւասիկ կարելի կ'ըլլայ մարմինը մաքրու պահել:

ԵՐԲ Մորթին ծակտիքն աղտերով գոցուած ըլլան, մարդ  
իր առողջութիւնը կը կորսնցունէ : Ֆուլքովթ անուն երեւե-  
լի գիտուն Գաղղիացի մը կը պատմէ թէ իտալիոյ քաղաքնե-  
րէն միոյն մէջ ձիարշաւ մը պատրաստած էին : Բազմաթիւ  
էին հանդիսականք, որոց առջեւէն կ'երթար կառք մը, ո-  
րուն վրայ ոսկեղօծ տղայ մը դնելու սովորութիւն ունէին.  
ասոր համար տաներէու տարեկան՝ մորթին ոսկեղօծ թըլ-  
թով<sup>(6)</sup> պատած մանուկ մը գրած էին հոն :

Վեց ժամ կ'առը չորս դին պարտցնելէն վերջը, ուղե-  
ցին թող տալ մանուկը . բայց խեղճը մեռած էր, որովհե-  
տեւ պատած ոսկեղօծ թղթին<sup>(7)</sup> պատճառաւ մորթին ծակ-  
տիքը չնչառութենէ զրուած էին :

Հարցմունք. — Ի՞նչ է մորթը : — Ամէն կենդանիք մորթ  
ունին : — Մորթին մաքրութեան ի՞նչ խնամքներ պէտք են :  
— Մորթին ծակտիքն ի՞նչ բանի կը ծառայեն : — Եթէ  
ուղոցուին, ի՞նչ կ'ըլլան : Քանի՞ տեսակ բաղնիք կ'այ : — Ոս-  
կեղօծ տղան ի՞նչպէս մեռաւ :

ՀՐԱՀԱՆԴԻ. — Ածանց բառեր. — Ծպուն, փառաւոր,  
խնձորենի, փայտեայ, քարուտ, որտրդ, վարժարան, ած-  
խանոց, ոսկեղէն, թորդուեան, քոսոտ, փայլակ, հայրիկ:  
Նոյնանիշ-այլատառ. — Բնբոնեմ, ըմբոնեմ (հասկը-  
նամ) : Շահեկան, շայեկան (օդտակար) : Բաշ, փաշ (կարծր  
մազ) : Շեկ, չէկ (կարմիր) : Շնյարկ, չնչարք (շան բնակա-  
րան) : Խարբուխ, հարբուխ : Թակարդ, թակարդ, Առէչ,  
առէչք (թել) : Պարէտ, պարետ (վերակացու) :

[1—7] Որո՞նք են գոյական, ածական. ի՞նչ թիւ եւ ի՞նչ հո-  
լով ունին եւ որո՞ց որպիսութիւնը կը ցուցնեն :

Դ Ա Ս Ա Յ Ե

Յ Ա Պ Ա Ղ Կ Ո Տ Ը

ԴԱՍԱԿՈՍՈՒԹԻՒՆ - ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Կատամբել. — Յանդիմանել : Շողեկառք. — Շողեով կառք:  
Յապաղել. — Ուշանալ : Կարգել. — Մէկը դնել :

1. Յովհաննէսին մայրը սենեկին դուռը բանալով գլու-  
խը կ'երերյնէ և կ'ըսէ. «Յովհաննէս, ժամը երեքն է. շուտ  
ըրէ, արթնցիր»: Յովհաննէս բազուկները կը սարածէ և կը  
յօրանջէ ըսելով. «Տակաւին ժամը երեքը չի կայ»: Իր մայրը  
կը մեկնի, իսկ Յովհաննէս կը տարածուի իր անկողնին վրայ  
և կէս մը կը քննանոյ, բայց վերջոալէս կ'արթնայ, կը հագ-  
ուի շուտով, կը սանարէ գլուխը աճապարանօք, գիրքերը  
կ'առնէ և վաղելով կ'երթայ գալուց: Երբ գպրոց կը հաս-  
նի, գասերը սկսած էին, և արդէն իր ընկերները բռնած  
էին իրենց տեղերը, և վարժապետը անոնց արտասանու-  
թեան գասերը կը նայէր: Յովհաննէս յանցաւորի մը կ'եր-  
պարանքով ներս կը մտնէ և կ'ըսէ ինքնիրեն. «Այսօր նորէն  
պիտի կշտամբուիմ»: Իսկ գասատուն Յովհաննէսը տեսնելով  
բարկացայտ գէմքով մը կ'ըսէ. «Նորէն ուշ մնացեր ես, ամէն  
օր այսպէս կ'ընես. պիտի պատժուիս»:

2. Յովհաննէս շատ կը փափաքէր իր ուսման վկայա-  
կանը առնել, բայց գժբաղդաբար չէր աշխատեր: Քննու-  
թիւնը մօտեցաւ, բայց Յովհաննէս կ'ըսէր. «Ժամանակ ու-  
նիմ, գեռ ամիս մը կայ». Փոխանակ աշխատելու կը խաղար  
իր սենեակին մէջ, կռնակը կը գարձնէր այն գըասեղանին,  
ուր գրքերը բաց կ'սպասէին իրեն, և կը խաղար իր չնիկին

հետ։ Քննութենէն յետոյ Յովիաննէս տրտում ախուր տուն կը դառնար։ Խեղճ ծնողք, ո՞րչափ անհանդիսա են։ Կ'ըսպասեն Յովիաննէսին վերտղարձին։ ահա յանկարծ կը տեսնեն հեռուէն անոր գալը, պատուհանին առջեւ կը վազեն և կ'ուղեն իմանալ ժամ մը առաջ իր քննութեան արդիւնքը։ «Յովիաննէս, կը հարցունեն պատուհանէն, աղէկ թիւեր ընդունեցի՞ր քննութեան մէջ։ իսկ Յովիաննէս բան մը չի պատասխաներ, դրւիսը կը ծռէ և ամօթահար գետինը կը նայի։ Ծնողքը կը հասկնան ամէն բան։»

3. Յովիաննէս քսան տարեկան կ'ըլլայ, օր մը կը հագուի շոգեկառքով ճամբորդութիւն մը ընելու, մայրը կ'ըսէ անոր։ «Ճուտ ըրէ, Յովիաննէս, շոգեկառքին չպիտի հասնիս։ — Ո՛չ, ստիպուած չեմ աճապարելու, դեռ ժամանակ ունիմ։ շոգեկառքը տասն և մէկը տասը անցած կ'ելնէ։ և կը կանգնի հայելոյն առջեւ և իր արդուղարդին զբաղելով ժամանակը կը կորնցունէ։ Վերջապէս տունէն դուրս կ'ելնէ, նաւամատոյցին կը մօտենայ, ժամացոյցը կը նայի, ժամը տասն և մէկը հինգ անցած էր։ Կ'սկսի վազել արագաբար հօվանոցը իր բաղկին տակը առած, և պայուսակը մէկ ձեռքը և միւս ձեռքը դիխարկը։ Երբ կայարանին կը հասնի, ժամը ճիշդ տասն և մէկը տասը անցած էր։ Յովիաննէս կ'ըստիպուի վազել իր տոմսակը առնելու համար, խենդի պէս ուղեւորաց որահէն դուրս կ'ելնէ և շնչասպառ կը հասնի իր գլխարկը ձեռքէն ձգելով։ հոն պաշտօնեայներէն մէկուն կը հարցնէ։ «Կը խնդրեմ, ըսէք ինձ թէ տասն և մէկը տասն անցած շոգեկառքը ելած է։ — Ահաւասիկ կ'երթայ, պարոն, դեռ նոր ելաւ։»

4. Յովիաննէս քսան և հինգ տարեկան կ'ըլլայ, դործ մը կը փնտուէ։ իր հայրը անոր յարմար դործ մը դտած էր

մեծ գրատան մը մէջ։ «Ես գրավաճառին հետ խօսած եմ, կ'ըսէ անոր հայրը, զքեզ տեսնել կ'ուղէ, այսօր քեղ կ'սպասէ։ բայց ջանայ որ ու չերթաս, ինչպէս կ'ընես դու սովորաբար։ Յովիաննէս ճամբայ կ'ելնէ, բարեկամներուն կը հանդիպի և գրատուն երթալը վաղուան կը թողու ըսելով։ «Դեռ ժամանակ կայ, վաղը կ'երթամ։ Հետեւեալ օրը գրավաճառին սենեակը կ'երթայ և կ'ըսէ։ «Պարոն, ես Յովիաննէսն եմ, հայրս քեզի հետ խօսեր է իմ մասիս»— «Ճատ ազէկ, սիրելի պարոն։ ուրեմն այդ դործին համար եկած ես։» — «Այո՛, պարոն, այդ դործին համար» կը պատասխանէ Յովիաննէս զուարթ դէմքով մը։ — Պարոն, կը պատասխանէ գրավաճառը, երէկ իրիկուն մէկը կարգեցի այդ պաշտօնին համար։

Հարցնելում։ — Յովիաննէս ի՞նչպէս կ'երթար վարժարան։ — Ուսուցիչը ի՞նչ կը պատասխանէր։ — Ի՞նչպէս դարձաւ քննութենէն Յովիաննէս։ — Ի՞նչ պատահեցաւ իրեն, երբ քսան տարեկան էր։ — Ի՞նչ պատահեցաւ իրեն, երբ քսանեհինգ տարեկան էր։

ՀԻԱՆԱԳ. — Նոյնատառ-տարանիշ. — Հոլովերուն մէջ կը տարբերին իրենց նշանակութեամբ մէկ քանի բառեր. ինչպէս։ այր (սեռական, այրի), կը նշանակէ քարայր։ — Գայլ (սեռական, գայլի), կը նշանակէ տանջանաց դործիք, գելոց։ — Գայլ (սեռական, գայլոց), կը նշանակէ գաղան մը։

իսկ եղակիի և յոզնակիի մէջ իրենց նշանակութիւններով կը տարբերին նաև մէկ քանի բառեր. ինչպէս. աղուն, (կը նշանակէ աղացած բան). աղունք, (կը նշանակէ թշուառթիւնք, չարիք, վտանգ). երախան, (կը նշանակէ սեղան, խումբ). երախանք, (կը նշանակէ շրմունք, բերան)։

ՄԱԳԼՅՈՂՔ ԿԱՄ ԿՐԾՈՂՔ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ - ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Սկիւր. - Մնձապ:

Ծառի. - Անոյշ (աչք):

Տաղախ. - Կիրով խառնած  
չամուր:

Կ'ամբարէ. - Կը զիզէ:

Բալուտ. - Վայրի կաղին:

Կ'որսան. - Կը բանեն:

Կուղբ. - Գումսուղ:

Ճարտարապետ. - Գալֆայ:

Բնափայտ. - Ծառի բուն:

Մոշտակ. - Քիւրք:

Զրկիր. - Զուր կրող:

Յարկ. - Սենեալ, տան խաթ,

տուն:

1. Սկիւրը, որ կրծող կամ մագլցող կենդանիներէն է, ունի առաջնատամներ, երկար և սուր, որոցմով ամուր մարմիններ կը ծամէ: Սոյն ակռայներն որչափ որ կտրեն մարմիններ, այնչափ կը մաշին և որչափ մաշին այնչափ ալ կահին: Սկիւրն ունի երկար և ստուար պոչ մը, որուն հովանոյն տակ կը հանդչի արեւ ատեն, ինչպէս նաեւ ունի երկու ծափ աչքեր: Իր կերակորսն է պտուղ, ինչպէս. ընկոյզ, կաղին և ծառի ոստեր, սերմեր եւայլն: Սա սիրուն, ճարպիկ, արագաշարժ և սաստիկ երկչոտ անասուն մըն է, ծառերէն վեր կը մագլցէ և զարմանալի արագութեամբ մէկ ճիւղէն միւսը կը ցատիէ: Յմեռը խոռոչներու մէջ կամ հողին տակ կը բնակի և հոն կ'ամբարէ իր պաշարը՝ կաղին, ընկոյզ, չոր սերմեր, բալուտ: Իր առջի թաթիկներով պտուղը կը բռնէ. պտուղն ուտելու համար ետեւի ոտքերուն վրայ կը

նստի: Սկիւրը կ'որսան իր փափուկ և աղնիւ մորթին համար: Կ'ապրի չորաէն մինչեւ վեց տարի:

2. Ալպեան մկան կամ արջամկան ստորին շանակուայները կարծ են, աղօրիքը խողովակաւոր, տասը վերի կղակին և վեցը վարի կղակին վրայ շարուած են: Ոտներն ու թաթիկները կարծ են, պոչն ալ կարծ, իսկ գլուխը լայն և տափակ է, և մարմինն ալ մազոտ: Սա բարձր լերանց վրայ կը բնակի. պտուղներով ու ծառերու արմատներով կ'ապրի ընդհանրապէս:

3. Կուղբը կրծող կենդանեաց ամենամեծն է. կը դրտնուի ընդհանրապէս Քանատայի և Ասիոյ հարաւակողմերն, իսկ եւրոպիոյ մէջ շատ քիչ: Կուղբերն Յունիս կամ Յուլիս ամսոյ մէջ կը ժողվուին երեք հարիւրի չափ և խմբովին կը բնակին գետի եղերք մը. և մէկ եղերքէն միւսն անցնելու համար հարիւր ոտք երկայնութիւն ունեցող շէնք մը կը շինեն իրենք իրենց. իրենց մէջ կան գործաւորներ, ճարտարապետներ, հիւսներ, ջրկիրներ, տաղախ շինողներ և այլն. գորափ նման երկակենցաղ են, գլուխնին կոր, ականջնին կարծ, մատներնին սեղմուած է և մաշկաւոր-բագին նըման, իրենց մորթէն խիստ թանկագին մուշտակ կ'ենէ. կուղբն առջեւի և ետեւի անդամներուն վրայ լողացողական թաղանթ ունենալուն համար խիստ լաւ կը լողայ. մատաղ ծառի արմատներով կ'ապրի, և իր ամուր կտրողներով, որք սղոցի տեղ կը ծառայեն, կարող է մինչեւ իսկ բնափայտ մը աղոցել ու կտրել քիչ ժամանակի մէջ: Գետեղերքը դրանուած ծառերը վար ձգելէն ետքը իր ակռաներով կտոր կտոր կ'ընէ զանոնք, յետոյ ուրիշ կուղբեր կուղան խմբովին,

անօնց վրայի ոստերն և տերեւները կը կտրեն, կը մաքրեն, ուրկէ վերջը նոյն կուղբն առջեւի թաթերով այդ մաքրած ծառերը մէկիկ մէկիկ բռնելով կը ցցէ եղերքը, կը հիսէ ոստերով, այլք ցիցերուն մէջտեղ կը լեցնեն հող կամ կաւ, որ իրենք կը շաղուեն իրենց ոսքովն և կը շինեն շաղախ. այդ շաղախը կը ծեփեն իրենց պոչովն։ Այլք շաղախ կը բերեն մեծ քանակութեամբ իրենց կոկորդովն կամ առջեւի ոսքերովն. այսպէս միմեանց օգնութեամբ պատուար մը կը շինեն։ Կուղբն իր բնակարանը շինելէն վերջը, ինքը կ'ապաստանի մէջը։ Բնակարանն ունի սենեակներ և յարկեր, վերինը՝ ջուրէն վեր, խակ վարինը՝ ջուրէն վար, ուր կը պահուըտի որսորդներուն ձեռքէն աղատելու համար. վերի յարկին մէջ կը քնանայ. մուտքը միշտ վարի յարկէն կ'ըլլայ։

4. Առնէտն երկայն ու բարակ պոչ մը ունի, և իւրաքանչիւր կզակին վրայ վեց աղօրիք։ Պատառատող և ֆասակար կենդանի մըն է, մինչեւ խակ հաւերն ու վառեակները կը խեղդէ և կատուին հետ կը կոռուի։ Առնէտը կը բնակի տուներու մէջ։ Մուկերը շատ տեսակներու կը բաժնուին. 1. Սեւ մուկ, 2. Կարմիր մուկ, որ խիստ խոշոր է. 3. Պարզ մուկ։

5. Կասփիկը կը բնակի ընկերակցութեամբ, մաղլցելով ծառերը՝ պտուղներ և խաւարծի ծիլեր կ'ուտէ։ Իր ձեռքերը ու ոսքերը երկայն են և մաղու։ Մատներն ու դէմքը քիչ շատ նմանութիւն ունին մարդու դէմքին ու մատներուն։ Կապիկներն եթէ վտանգի մը պատահելու ըլլան, միմեանց կ'օգնեն։

*Հարցմանմէ.* — Որո՞ւ կ'ըստու մադլցող. — Ի՞նչ դիտես

մկիւրին վրայ. — Ի՞նչ դիտես մկնարջին վրայ. — Ի՞նչ դիտես կուղբին վրայ. — Ի՞նչ դիտես առնէտին և կապիկին վրայ։

*ՀՐԱՀԱՆԳ.* — Նոյնատառ-սարանիշ. — Նուադ (բաժակ). Նուադ (երդ)։ Շառաւիզ (ճառագայթ)։ Շառաւիզ (ճիւզ, զաւակ)։ Շուշտակ (թաշկինակ)։ Շուշտակ (մաղկապ)։ Շուշտակ (քահանայ, որուն երէցինը մեռած՝ և ինք եղած է վարդապետ)։ Շառաւն (ուղտ)։ Շառաւն (նետ)։ Սին (փուծ)։ Սին (պտուղ մը, խւկէզ)։ Բալ (մշուշ, մոթ)։ Բալ (Քիշնէ)։ Սարդ (մամուկ)։ Սարդ (թռչուն մը, ալասրդորնը)։ Շառաշուկ (շնկոց)։ Շառաշուկ (անձրեւ)։

*Բարդ բառեր.* — Հողմացոյց, թիկնաթու, բարեկամ, դռնապան, խորամաննկ, լրագիր, վիմաղիր, դաստառ, պատկերհան, երկաթադործ, եղնավար, ջանասէր. (բառերը զատէ)։

*Ծարադրութիւն.* — Տաղաւար (չատըր), տաղար, դող, քահանայ, վարժապետ<sup>(1)</sup>։

*Ուղղելի.* — Ընտո՞ր պիտի ըսեմ։ — Խովայով ջուր ուեր։ — Կողը բանտ գրին։ — Փատը վար ձգէ։ — Ախատար առւն էկաւ։ — Հարը մարը թող չտուին։ — Պախճան կացինք ծաղիկ ժողվեցինք։ — Եառին եափրախները թափեցան։ — Օտկին ցաւը պոնեց։

(1) Իւրաքանչիւր բառերով նախաղասութիւններ շնոր 3-6 բառերով։



Դ Ա Ս Ե.

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ—ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Զոյդ. — Զուխտ, երկու:	Սափրիչ. — Մաղ կտրող:
Վանդակ. — Թռչուն պահե-	Զինավաճառ. — Զուկ ծախող:
լու պահարան:	Օ՛ն. — Հայտէ:
Աճիւլ. — Մօրուքը, մազերը	Ագահ. Կծծի:
կտրել:	Բացակայ. — Պակաս:

1. Ա. Գ. Ա. Հ Ի Ն Ռ Ա. Ռ Ա. Ն

Աղահ հարուստ մարդ մը Ա. Զատկի տօնին իր սպասաւորին կը հարցնէ թէ ի՞նչու զոյդ մը կօշիկ չէր գնած: Սպասաւորը կը պատասխանէ թէ՝ ամէն տարի Ա. Ծննդեան և Ա. Զատկի տօներուն սովորութիւն է որ տէրը գոնէ զոյդ մը կօշիկ կը նուիրէ իր ծառային:

Այս պատասխանին վրայ տէրը, «Իրաւոնք ունիս, աղնիւ ծառայ», ըսելով պատին վրայ կաւիճով զոյդ մը կօշիկ կը գծէ, և կը յաւելու. «Ահա ուզածդ, ա՛ռ, բարով վայելես»:

Տէրը տունէն դուրս ելնելուն պէս ծառան ալ՝ պատին վրայ դժուած զոյդ մը կօշիկին քով ծառայի մը պատկերը կը գծէ և ինքն ալ կը թողու տունն ու կը մեկնի:

Ֆիչ մը ժամանակ անցնելէն յետոյ տէրն իր ծառային կը հանդիպի շուկային մէջ և կը հարցնէ. «Ի՞նչ կայ, այս տեղ ի՞նչ գործ ունիս»: — «Տէր իմ, ես քաղաք պիտի եր-

թամ, մէկ երկու ամիս բացակայ պիտի ըլլամ. այս պատճուաւ թողուցի ծառայութեան գործս, սակայն դքեզ ալ առանց ծառայի չի ձգեցի, իմ տեղ ուրիշ մը դրի»: — «Ո՛չ, այդ բանը կարելի չէ, որովհետեւ դուք իրաւոնք չունիք իմ տանս մէջ ձեր ուզած մարդը բերելու իրը ծառայ. ի՞նչպէս գիտնամ թէ ան քեզի պէս հաւատարմութեամբ պիտի ծառայէ»: — «Ճշմարիտ կ'ըսեմ որ այնպիսի ծառայ մըն է որ ինձ նման չի պիտի կարենայ տունէն դուրս ելնել. շարունակ տանդ մէջ պիտի մնայ անշարժ և անխախտ»:

Տէրը մեծ դժուարութեամբ կը յաջողի համոզել և տուն դարձնել իր ծառայն՝ որ պատին վրայ գծած ծառայի պատկերը ցոյց տալով կ'ըսէ. «Տէ՛ր, գծած կօշիկիդ պէս այս ալ շատ աղէկ ծառայ մըն է»:

2. ՎԱՄԱԿԻՆ ՄԻՋ ԹՈՉՈՒՆԵՐ

Հարուստ մարդ մը իր բարեկամներէն մէկուն վանդակով տասն և երկու հատ թռչուն կը դրիէ իր ծառաներէն մէկուն հետ: Ծառան վանդակն ուսն առած բարեկամին տանելու ատեն թռչունները վանդակին մէջ ա՛յնքան կը թռչուին, ա՛յնքան կը ծեծկուին, և իրեն ա՛յնքան նեղութիւն կը պատճառեն որ վանդակն ուսէն վար կ'առնէ, գետինը կը գնէ և կուղէ թռչունները բռնելով լաւ մը պատճել, որպէս զի այլ եւս չի նեղեն զինքը: Բայց վանդակին դուռը բանալուն պէս ամէնքն ալ փախելով կը թռչին հեռուն: «Է՛հ, կ'ըսէ ծառայն, եթէ դուք թռաք, գոնէ ես ալ ձեր ձեռքէն ազատեցայ, շատ աղէկ եղաւ»: Բայց երբ բարեկամին տունը հասաւ, դործին դժուարութիւնն երե-

ւան ելաւ, վասն զի երբ իր տիրոջ բարեկամը՝ բերած նաւակը կարդաց՝ ըստաւ. «Ո՞ւր է, ծառայ, նամակին մէջ տասն երկու հատ թռչուն կը գտնեմ»: — «Տէր իմ, վարձքը Աստուծմէ առնես. այդ թռչունները նամակին մէջ գտած ըլլախուղ համար շատ գոհ եմ, վասն զի անոնք ամէնքն ալ վանդակին մէջէն թռչելով փախան, ես ալ մինչեւ հիմա հոգ կ'ընէի մտածելով թէ արդեօք ո՛ւր թըռան դացին»:

### 3. Ա. ՎԻԼԱԿԱԾ ՄՕՐՈՒՅՑ

Զկնավաճառ մը սափրիչի մը խանութը գնաց որ մօռուքն ածիլել տայ: Սափրիչը գեն գործի չ'սկած օխա մը ձուկ առաւ այն ձկնավաճառէն առանց սակարկութիւն մը ընելու: Ածիլելէն յետոյ սափրիչը ձկան դինն հարցուց: — Երեք զրուշ, ըստ ձկնավաճառը. — Ո՛չ, երեք զրուշ շատ է, երկու զրուշ կուտամ, եթէ չես կրնար այդ դինով տուլ, ձուկդ ետ առ: — Տո՛ւր ինձ, ես այդ դինով ձուկ չեմ կրնար ծախսել. հիմա գանք մեր պարագին. ի՞նչ պիտի վըճարեմքեղ: — Երկու զրուշ: — Ո՛չ, երկու զրուշը շատ է, քովս մէկ հատիկ զրուշ մը ունիմ, եթէ չես կրնար ընդունիլ այդ գրամը, դուն ալ գարձեալ մօրուքս իր տեղը դիր:

### 4. Մ. Ա. ՐԴՈՒ ՍՏՈՒԵՐ

Բարեկամ, բան մը տեսայ, ո՛ր ատեն որ միտքս գայ այն՝ սաստիկ կը գողամ վախէս: — Ի՞նչ կայ, ի՞նչ տեսար որ այդչափ կը վախնաս: — Սատանայ մը տեսայ, ահա ըսի, մարդու մի ըսեր: — Այդ սատանան Ե՞րբ տեսար: — Երեկ

գիշեր երբ գպրոցին քովէն կ'անցնէի, տեսայ որ պատին վըրայ սատանայ մը կեցեր էր, ո՛ւր որ կ'երթայի հետո մէկտեղ կը քալէր, կեցած ատենս ալ կը կենար: — Ըսած սատանադ ի՞նչ կերպարանքով կ'երեւնար քեզի: — Կարծեմ թէ էշու կերպարանքով: — Քանի որ այդ է տեսածդ, մի վախնար, մարդու ալ բան մի ըսեր, դուն շատ վախկոտ ես, քու ստուերդ տեսեր ու վախցեր ես:


### 5. ԾԵՐՈՒՆԻՈՑ ՄԸ ՓԱ.ՓԱ.ՎԸ

Ուժառն տարեկան ծերունի կին մը իմանալով որ ագռաւն հարիւր յիսուն տարի կ'ապրի, կը փափաքի գնել զայն փորձելու համար թէ ստո՞յդ է իր լսածը:

Ուստի զայն գնելով տուն կը բերէ և իր թոռան կուտայ, որպէս զի վանդակի մը մէջ դնէ: Թոռը կը հարցնէ. «Ինչո՞ւ համար դնած էր այն տգեղ թռչունը», որուն կը պատասխանէ թէ կուզէ գիտնալ փորձով թէ արդարեւ հարիւր յիսուն տարի կ'ապրի՝ ագռաւը:

**ՀՐԱՀԱՆԴ.** — Նոյնատառ-տարանիշ. — Շիւ (խաղողին գարտը). Շիւ (զուհակին ձեռքի քովի փայտը). Մորի (գաղանի որջ). Մորի (մորենի). Հմայեակ (քըլըսըմ). Հմայեակ (տեղեակ). Գրաստ (զինուորական զգեստ). Թել (սեռական թլոյ. թըլացք). (քըլըսըմ). Թել (սեռական թելի, հողաբլուր). Երաշխ (գրաւ). Երաշխ (կարմիր՝ դեղին դոյն):





† Ա Ս Ը

### Ա Խ Ա Գ Շ Ա Բ Ա Թ

ԴԱՄԱԿՈՍՈՒԹԻՒՆ ԲՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Աղէխորով .— Սրտաձմբիկ :	Մելամադիկ .— Տիսուր :
Յաղօթս կալ .— Աղօթել :	Անգիտակ .— Տգէտ :
Սրծագանդ .— Զայնի կրկնում :	Շնորհապարտ .— Երախտագէտ :
Հեծէ .— Կուլայ :	Սաղմոս .— Երգ :
Վէս .— Ինքնահաւան , պինդ գլուխ :	Կոծել .— Լալ :
	Ճոխ .— Հարուստ :
Աւաչ .— Զայն , երգ :	Ի կախ .— Կախուած :
Ի ծունը իջած .— Ծունը դրած :	Աւազ .— Մեզգք :
Զերմ .— Տաք :	Զերմեւանդն .— Բարեպաշտ :
Հանճարեղ .— Խելացի :	Թախիժ .— Տրտմութիւն :

1. Աւադ\*\* շաբաթն ահա հասաւ,  
Խաչի պատկերն սեւեր հագաւ.  
Տիսուր է արդ ամենայն մարդ,  
Տիսուր նաեւ մայրիկս զլւարթ:

Սեւ , սեւ մօրուօք\* , սեւ լաթերով  
Կարդան քարոզ աղէխորով  
Քահանայներն՝ սրտով տրտմած ,  
Մեծ պատկերի մ'առջեւ կանգնած :

Եկեղեցին\* , ուր ամէն ժամ  
Ի ծունը իջած յաղօթս կամ ,  
Սուդ է պատեր , սեւ ամէն տեղ ,  
Զերմ արտասուաց թափին հեղեղ :

2. Հո՞ն մայրիկս ալ արցունք\*\* թափէ ,  
Զեռքերն բանայ , հառաչ հանէ  
Սրախն խորէն , և դէպ յերկին  
Արձագանդըն\*\* թըռչի լըռին :

Աւագերէցն այն հանճարեղ  
Եկեղեցւոյն կանգնած մէջտեղ՝  
Մելամաղձիկ\*\* ձայնով տրխուր  
Կարդայ սաղմոս մարդկան ի լուր :

— Ա՛հ , խեղճ մանկիկ , ես անգիտակ\*\*  
Խնչու համար գոչեմք աւագ  
Եաբաթն այս՝ լեցուն յաւաչ ,  
Որ իրեն հետ բերէ մեղ խաչ :

3. Ճոխ\* խորանին\*\* մէջտեղ ի կախ  
Պատկեր մը կայ, տեսէ՛ք, աւա՛դ.  
Հո՞ն կերեւի մարդ մ'աղքատին,  
Չեռքերն, ոտքերն գամուած խաչին։

Աւագ շարաթ նըշանաւոր\*  
Քրիստոնէից սրբազն օր.  
Ուստի դու ալ այդ պատկերին  
Առաջ հեծէ՛, լա՛ց դառնադին։

Հո՞ն ջերմեռանդն\*\* բոլոր սրտէ  
Բազկատարած\*\*, օ՞ն, աղօթէ՛,  
Եւ անմոռայ\* յիշէ՛, զթիսուս  
Ծանրակիր խաչն առած ի յուս։

Հարցմունք. — Մայրիկը եկեղեցւոյ մէջ ի՞նչ կընէ։ —  
Խորանին վրայ ի՞նչ կախուած է։

ՀԻՄ. ՀԱՆԳ. — Քերականական վարժք. — Կանոն. — Յա-  
տուկ անուն կ'ըստին այն բառերը, որ իրենց տեսակին մէջ  
մէկ հատ կը ցուցունեն։

ՕՐԻՆԱԿ. — Յովսէփի, Մակար, Եփրատ, Աստուած, Փա-  
րիզ, Մասիս, Նեղոս, որ անձի և տեղւոյ անուններ են։  
Յատուկ անուն են այն բառերը, որ անձ կամ տեղ և կամ  
այնպիսի անուններ կը ցուցունեն, որ մէկ հատ են բնու-  
թեան մէջ. ինչպէս. Աստուած, Լուսին, Երկիր, ևայլն։

ՀՐԱԽԱՆԳ. — Սաթենիկ կը խաղայ. — Արեւը կը փայլի.  
— Արշակ աշխայժ է. — Դաւիթ յարձակեցաւ Գողիաթին վրայ.

— Պէտք է որ սիրենք զԱստուած. — Երկիրս լի է Աստուածոյ  
բարիքներով. — Նոյ՝ Սեմ, Գամ և Յաբեթ անունով երեք  
զաւակ ունէր։<sup>(1)</sup>

Շարադրութիւն. — Նկարագրեցէք Յիսուսը, որուն ուսք  
տուած են խաչը, Գողդոթայի լեռը, Յիսուսի խաչելու-  
թիւնը, մահը։

[1] Յատուկ անունները որոշել։

### Դ Ա Ս Թ.

ՏԶՐՈՒԿ, ՈՒՏԻՃ, ԿԱՐԻՃ, ՄԱՐԱԽ

ԴԱՍՍԽՈՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՏՎՐՈՒԿ. — ՍԻԿԼԻԿ:

Կարիճ. — Ագրէպ:

Ուտիճ. — Կրծող ճճի:

Դիւրաթեք. — Դիւրաւ ծռող:

Սողուն. — Փորովը գետնին  
վրայ սողացող:

Ճահիճ. — Յեխոս տեղ:

Գորշագոյն. — Մութ մոխրա-  
գոյն:

Շագանակագոյն. — Շագա-  
նակագոյն:

Պիսակ. — Նշան, բիծ:

Մնանին. — Կը կշտանան:

Գոյանան. — Կը գանուին:

Խափանել. — Զթողուլ, գոցել,

արգելք ըլլալ:

Վերջաւորութիւն. — Ծայր:

Խայթիչ. — Կծող գործիք:

Յարատեւ. — Միշտ տեւող:

Կիսաբոլոր. — Կէս կլոր:

Ունելի. — Մախաս, մաշա:

Մանրադէտ. — Մանր բաները  
դիտող գործիք:

Երկարաձգուած. — Երկայն ձրգ-  
ձուած:

Հատու. — Կարող:

Կաթնառ. — Կաթ տուող:

Խափանեն. — Կը գոցեն:



S 2 P A R 4

1. Տղրուկներն\*\* անդամներէ զուրկ կալուզ, թիւրա-  
թեր և սողուն որդեր են. ունին երչու հատու ա՛ռայներ\*:  
Ամէն տղրուկ մի և նոյն կերպով չապրեր. ոմանք միայուն  
ջուրերու և խոնաւ ամաններու մէջ կը սիրեն բնակիլ, ոմանք  
որդուկներ ուտելով կը մնանին, ոմանք արիւն ծծելով, մա-  
նաւանդ կաթնտու\*\* կենդանեացը: Սրինարբունելը մար-  
դոց հիւանդութեանց համար օգտահար են: Տղրուկներն  
ընդհանրապէս լճակներու և ճահիճներու\*\* մէջ կը դոյա-  
կան նաեւ սեւ տղրուկներ, որոնք կենդանեաց մա-  
հացու են, որովհետեւ անսնյ՝ լճակն ջուր խմած ժամա-  
նակ կոկորդնուն\* կը փաշին և ուժով արիւնին կը ծծեն,  
նաև կոկորդնուն, չնչառութիւնը\*\* կը խափանեն և կենդանին կը  
կ'ուռին, չնչառութիւնը երեք արդի կը բաժնուին. առա-  
մեռցունեն: Տղրուկներն երեք արդի կը բաժնուին. առա-  
ջինները վեց օղակներ և մէկ կողմը թիսագոյն երչու օղակ-  
ներ\* ալ ունին. երկրորդները կանաչ և փափր են պիսանե-  
րով խառն են, և իրենց եղերքները կարմրագոյն:

4 8. F B 2

2. Կարիճը՝ թունաւոր\*\* է. մարմինը երկարաձղուած.  
Եր վերջաւորութիւնը\*\* լը ձեւացնէ օրաներ, որոց ծայրը  
կը դանուի խայթիչ ասեղ մը։ Կարիճներն այդ ասեղով լը

իսայթեն և կը թունաւորեն, զի իրենց ստորին մասին մէջ կը պարունակեն թոյն։ Առաջակողմը կը գտնուին կզակները, եղիւրները, որ կիսաբոլոր մը էալմած՝ կը վերջաւորին թունաւոր ունելիներով։ Այդ ունելիներն\*\* իրրեւ ձեռք կը ծառայեն և ուզած բաները կը բռնեն։ Եւրոպիոյ կարիճները երեք սանթիսէթրօ են, ողոյք չհաշուելով։ Սպանիոյ և Ալճերիոյ կարիճը հինգ, վեց սանթիսէթրօ է։ Հնդկաստանի և Ավրիկէի կարիճն ութը սանթիսէթրօ։ որ խիստ ահարկու է, և կը կոչուի Ավրիկեան կարիճ։ գոյնն է փայլուն գորշագոյն կամ շագանակագոյն։ Կարիճն իր ձագերը ետին կը կրէ։ Այս տեղի կարիճները թունաւոր չեն։

W. W. E. W. K.



## ՈՒՍՏԱ

3. Ուտիճներն\* այլ և այլ տեսակներու կը բաժնուին. շատերը միայն մանրագէտով կը տեսնուին։ Ուտիճը կը գըտնուի բուսոց, ծառոց, տերևոց, կաթնտու կենդանեաց, թոշնոց վրայ, և մեծ վնաս կուտայ անոնց. կը տեսնուի նաև շջագայող\*\* մարդոց զգեստուց վրայ, պանիրներու մէջ, վերքերու\*\* բերանը կամ խորը։

Հարցմունք. — Տղոռւկին վրայ ի՞նչ գիտես: — Քանի՞ տեսակ տղոռոկ կայ. — Ի՞նչ զիտես կարիճին վրայ. — Ի՞նչ տեսակ կարիճներ կան. — Ի՞նչ գիտես ուտիճին վրայ. — Ի՞նչու մարախներէն ումանք «քրի-քրի» կ'ըսուին։



## Դ Ա Ս Փ.

## Ո Ր Ո Ճ Ա Ց Ո Ղ Ք

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ - ԲՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Ամրէ. — Այծու ձագ:	Կճղակաւոր. — Ճեղքուած եղունգ
Բնշուղ. — Երինչ մեծ հորթ:	ունեցող անասուն:
Կուտիճն. — Կուզ ուղարի:	Փարսախ. — Մղոն:
Միասապատ. — Մէկ կուզ ու-	Մուշկ. — Միսկ:
նեցող:	Մշկապորտ այծեամ. — Մուշկ
Այծուղտ. — Լամա:	ունեցող եղնիկ:
Սառնապատ. — Սառով գոց:	Գրաստ. — Բեռ կրող անասուն:
Ճարակել. — Ուտել:	Այժմ. — Հիմակ:



1. Այժմ ձեզ սիրուն գասեր պիտի աւանդեմ, որք կը նան կրթական զրօսանք մը համարուիլ, որիէ ետքը պիտի խաղաք ի՞նչ որ համերստ\*\* և անվնաս է: Դէպի լեռան զառիվայրին վրայ նայեցէք կամ սա՛ գաշտին\* մէջ, պիտի տեսնէք հոն որոճայող կենդանիներ: — Ի՞նչ սիրուն այծեր կարածին հոն. ամիկներ իրենց մօր կաթը կը ծծեն, իսկ ասդին, ի՞նչ գեղեցիկ տեսարան. ոչխարներ, կոմեր, եղներ կ'արածին, անոնց քովին կը պարտին ընծուղներ, դառնուկներ. շատ հաճելի է այս տեսարանը: — Ասոնք կենդանիներ կ'ըսուին, այնպէս չէ. ամենքն ալ կորոճան\*\*\* այսինքն իրենց շրթամբ կը փրցնեն խոտն և կրկին կրկին ծամելէն յետոյ կը կըլլեն. այս տեսակ կենդանեաց կ'ըսուին Որոնացող կենդանիի: Հրանտ, ի՞նչ ըսել է որոճացող: — Այն կենդանիները, որ գլուխնին ծռած կը ճարակեն խոտն իրենց շրթամբ\*\* և կրկին կրկին ծամելով կը կըլլեն, կ'ըսուին որոճացող: — Մտի՛կ ըրէք. հիմա պիտի ըսեմ թէ այդ տեսակ կենդանեաց կարգէն դեռ որո՞նք կան:

2. Ուզար, որոյ գլուխն և վիզն երկայն է, կոնակն ոնի կոտեկէն\*\* մը, որ ամբողջ խղէ կազմուած է: Ուզերը վափուկ լինելուն կարելի չէ պայտել\*\*, ասոր համար քարի կամ կարծր հողի վրայ ճամբորդելը դժուարին է իրեն. իւր տեղն է անապատները, ուր շատ երկար և առանց դժուարութեան կրնայ ճամբորդել: Ուզար շատ քիչ բանով կ'ապրի, անօթի եղած ատեն իւր կուտեկնին իւղովը կը մնանի: Անապատին (<sup>1</sup>) մէջ կը գոհանայ չոր խոտեր ճարակելով և

[1] Անապատին մէջ խոտ չբումիք, խոտն ուր կ'ուտէ: — Բայց հոն խոտ բումնող տեղեր չկան:

մինչեւ ի հարկին մէկ շաբաթ առանց ջրի կրնայ մնալ. զի իւր որովայնին մէջ միշտ աւելորդ ջուրը կը պահէ պատրաստ։ Ծարաւի եղած ժամանակ այդ ջուրը կը դործածէ։ Ուղար մեծ, ուժեղ և արագաքայլ է. կան ուղտեր, որ մինչեւ երեք հարիւր օխա բեռ կը վերցնեն և օրը հարիւր հազարա մէթր<sup>(1)</sup> տեղ կ'երթան։ Սա շատ կը գտնուի Ասիոյ և Ափրիկէի մէջ։ Ուղտերն երկու տեսակ են. միասապատ և երկասապատ ուղտ։



Ա. Յ. Ռ Ա Կ Դ Տ

3. Այծուղտն՝ ուղտէն շատ փոքր է. կուտկէն չունի, Ամերիկայի հարաւային լեռները<sup>\*\*</sup> կը բնակի. միար շատ փափուկ է և կ'ուստուի, մազը շատ յարգի է, որովհետև անով ընտիր կերպաս<sup>\*\*\*</sup> կը շննեն. սա ուղտի նման թէպէտ կուտկէն չունի, բայց կաշին տակ մննդարար հիւթ<sup>\*\*</sup> մ'ունի,

[1] Զափով կամ տեղւոյ տարածութեամբ բացատրէ ուսուցիչն։

որով անօթի եղած ատեն կը մնանի. զրոյը կարճ է, ծունկերն և կուրծքը բուրդով ծածկուած, մազերն երկայն և գորշ<sup>\*\*</sup> են. այս կենդանին իբր գրաստ կը դործածեն տաք երկիրներու մէջ. օրը վեց, ութ փարսախ ճամբայ կ'երթայ, շատ բեռ չկրնար վերցնել, այլ միայն հարիւր լիսպէ։ Ամերիկայի մէջ իբրև եղն կամ երինջ երկիրը հերկելու կը դործածեն. այծուղար դանդաղ է, եթէ ստիպես որ շուտ քայլէ, իսկոյն կ'ինայ և կը պառկի դետինը և հնար ըլլար վերցնելու, ուստի տէրը շուտով մը կը մորթէ և կաշին կ'առնէ։ Եթէ բարկանալու ըլլայ մէկուն դէմ, անոր երեսը կը թքնէ. կ'ըսեն թէ իր թուրն<sup>\*</sup> այրող զօրութիւն մ'ունի, դպած տեղը կ'ուսեցնէ։ Ասոնց վալրենիներն<sup>\*\*</sup> երբ մէկը տեսնեն, առաջ զարմանալով վրան կը նային, և եադը կը ձգեն կը փախչին լեռները։



ԵՊ.ԶԵՐԱԿ ԵՒ ՄՇԿԱՊԱՐՏ Ա.Յ.ՆԵՍՈՒՐԿ

4. Եղերուն կճղակաւոր կենդանի մ'է. սառնապատ երկիրներու մէջ բալխիրներու կը լծուի<sup>\*</sup> և ձիու<sup>\*</sup> տեղ կը դործածուի, կճղակները լայն և տափակ ըլլալուն ո'չ ձինին

մէջ կը թաղուին և ո՛չ կը սահին . կաթը շատ ընալիր է ,  
յորմէ աղջկ պանիր կը շնեն . միսը շատ համով է , որ կ'ուտա-  
ռի . եղջիւներն\*\* ալ կը գործածեն դանակ , պատառա-  
քաղ , ևն . շնելու :

5. Մշկապորտ այծեամն եղջերուի\*\* կը նմանի . արուն  
շան ակուայներ ունի , որ բերնէն գուրս ցցուած են : Սա Զի-  
նաստանի լեռները \* կը բնակի , և մինակութիւնը կը սիրէ .  
ասոր համար եթէ բոնուերու ըլլայ , կը մեռնի շուտով : Նատ  
երկոտ է սոյն այծեամը . զայն կ'որսան մուշին առնելու  
համար , որ կը գտնուի իր փորին տակի փարիկ պարկին  
մէջ : Թոնքինի մուշկը շատ թանկագին է : Մշկապորտ այծ-  
եամն պոչ\* խիստ կարճ է : Մուշկի հոտն այնչափ զօրաւոր  
է որ մինչեւ հեռու տեղեր կը բուրէ : Յորենի չափ մուշկի  
կտորը սենեկին մէջ քսան տարի կենալէն ետքը դարձեալ  
անուշ հոտը կը պահէ :

Հարցմունիք . — Որո՞նք են որոճացողք . — Բաէ՛ ուղարին  
նկարագիրը : — Բաէ՛ այծուղտինը : — Բաէ՛ եղջերուինը : —  
Բաէ՛ մշկապորտ այծեամինը :

ՀՐԱՀԱՆՔ . — Ուղիելիք . — «Ծառքը պազնելով» մէկ  
քովլ նստայ : — «Տուռը պացի» ներս մտայ : — «Երկրթէ խա-  
լմը» ի՞նչ ըրաւ : — «Խաբախը» վերցուց , տեսաւ որ կերա-  
կուրը «Խախամիշ» կ'ըլլայ «կոր» :

Հետեւեալները բարդ շիմէ . — Մեծ-գործ . — Տկար-միտ .  
— Հնարք-գէտ . — Զոր-մէջ . — Ոխ-կալ . — Յարդ-ծածուկ . —  
Սին-մէջ . — Պարզ-միտ . — Երկիր-գործ :



ԴԱՍ

ԽՂՃԱՀԱՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Յախճապակի . — Զինի :

Բեկոր . — Կտոր :

Յանդիմանել . — Զեխել :

Մանրապէս . — Ծանր կերպով :

1. Գեղանոյշ և Պօղոս երկուքն ալ սենեավի մը մէջ  
էին , քոյրը կար կը կարէր . խակ եղբայրը կը պարտէր սե-  
նեկին մէջ և ամէն բան կը խառնէր սրտին նեղութենէն :  
Անդամ մը մօտեցաւ սեղանին , որուն վրայ մայրն յախճա-  
պակէ գեղեցիկ աման մը դրած էր , զրո նոր գնած էր :  
Գեղանոյշ գլուխը վեր վերցուց ու ըստաւ . «Պօղոս , ատոր մի՛  
դպիք , մայրս արդիեց : » — «Է՛հ , ի՞նչ կ'ընեմ , ի՞նչ վնաս  
տուի , միայն կ'ուղեմ իմանալ թէ ի՞նչ կայ մէջը . » և ոտ-  
քին մատներուն վրայ կանգնելով գլուխը կ'երկնցնէ , ամանը  
կը ծռէ\*\* և կը ջանայ մէջը նայիլ :

Բայց ամանը ձեռքէն կը սահի , և ահաւոր ճայթիւնով  
գետինը կ'ինայ , որ վեց կտորներու կը բաժնուի : Գեղանոյշ  
կը վազէ և կ'ըսէ . «Ասառա՛ծ իմ . այս ի՞նչ ըրիք » : Պօղոս  
գլուխը կը կախէ , բեկորները կը դիտէ : — Մայրիկը երբ դայ ,  
ի՞նչ պիտի ըսես : — Գեղանոյշ , ըսէ որ ես չի կոտրովլ :

2. Վայրկեան մը վերջը մայրը ներս կը մտնէ , ամանին  
բեկորները կը տեսնէ : «Ո՞վ ըրաւ այս , կը հարցնէ բար-  
կացու ձայնով մը և կը դիտէ տղան» : Գեղանոյշ բան շը-  
սեր , որպէս զի ոչ ամբաստանէ Պօղոսը և ոչ ալ սուտ խօսի :

Այն ատեն Պօղոս կը յառաջանայ և կ'ըսէ . «Մայրիկի , կը վատահեցնեմ\*\* զքեղ որ ես ըրի , ներա մտնելնուս պէս աեւ սահք որ ամանը կոտրած էր» :

Մայրը կը կոչէ փոքրիկ սպասուհին\* և կ'ըսէ . «Մարիամ , այս սենեկին մէջ քենէ և տղաքներէն դատ ուրիշ մէկը չէ մտած , դո՞ւն կոտրեցիր յախճապակեայ այս ամանը աւլած ատենդ» : Մարիամ ամբաստանուած\*\* տեսնեւ լով ինքինքը թաշկինակին հանեց և սկսաւ լալ : Այն ատեն Պօղոս քիչ մը ամցյաւ և սիրոը ցաւեցաւ խղճէն նեղուելով :

— «Ո՞ն , Մարիամ , լալու ատենը չէ , պատասխան տուր» :

Իսկ Մարիամ աւելի շատ կուլար և կ'ըսէր . «Ո՞չ , տիկին , ես ըրի , կը վատահեցնեմ զձեղ» : Այս միջոցին Գեղանոյշ մէկդի կ'առնու Պօղոսը և ցած ձայնով կ'ըսէ անոր . «Կը տեսնե՞ս , ի՞նչպէս կը նեղուի խեղճ Մարիամը , ստութիւնը շատ գէշ բան մ'է , և մանաւանդ մէկը պատժել\*\* տալն այն բանին համար , որու մասին բան մը ըրած չէ : Փոքրիկ եղբայրս , ըսէ մայրիկիս թէ դուն կոտրեցիր\*\*\*» :

3. Այն ատեն Պօղոս մօրն առջեւ եկաւ , իսկ Գեղանոյշ անոր ետեւը կը կենար զայն քաջալերելու համար . «Մայրիկ , կ'ըսէր մօրը , Մարիամը մի՛ յանդիմաներ\*\* , ես կոտրեցի ամանը , և թէ ասոր համար մեծ ստութիւն\*\* մը ըրի .» և սկսաւ լալ : Գեղանոյշ և Մարիամ ներողութիւն կը ինդրէին անոր համար : Մայրը կը պատասխանէր . «Պօղոս դու ծանրապէս պիտի պատժուէիր , բայց որովհետեւ ստութեանդ յանցանքը քաւեցիր շիտակ խօսելով , քեղ կը ներեմ , չնորհակալ եղիր բարի Մարիամին , որ քեղ համար ներողութիւն ինդրեց , մինչդեռ յանիրաւի կ'ամբաստանէի զինքը» :

Հարցմունիք .— Պօղոս և Գեղանոյշ ի՞նչ կ'ընէին սենեկին մէջ .— Պօղոս ի՞նչ ըսաւ քրոջը .— Մայրը ի՞նչ հարցուց Գեղանոյշին .— Մարիամ ի՞նչ պատասխանեց .— Պօղոս ի՞նչպէս խոստովանեցաւ իր ստութիւնը :

ՀՐԱՀԱՆՔ .— Դիտողութիւն .— Սմբատ շատ հարուստ էր . առ օր մը իր եղբօրն աղջիկները իր տունը հրաւիրելով կազմին , ընկոյզ , նարինջ տուաւ : Հետեւեալ գիշերը գողեր մանելով անոր տունը՝ կ'ուղիկն ամէն բան գողնալ : Գողերն երբ Սմբատին անկողնոյն պիտի մօտենային , յանկարծ դղբադիւն մը լառեցաւ : Սմբատ արթնցաւ , գողերը փախան : Այդ ձայնը յառաջ եկած էր կաղինի կեղեւներէն , որուն վրայ կոխած էին գողերը , և զորս իր եղբօր աղջիկները հոն ձգած էին նետեւեալ օրը :— Այս մխալ է . որովհետեւ կաղինի կեղեւները նախընթաց օր ձգած էին , եթէ նետեւեալ օրը ձգած էին ըսենք , այն ատեն գողերը չէին կրնար կեղեւին վրայ կոխել , և թէ ստոնը կողոպտած կ'ըլլային : Պէտք է ըսել նախընթաց օրը :

Դ Ա Ս Ժ Բ .

Լ Ն Ա Ր Ք Ն Ե Ր

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Վայրենի .— Զկրթուած մարդիկ :	Մնամէջ .— Մէջը պարապ :
Պատերազմիլ .— Կոռուիլ :	Վարանիլ .— Տարակուսիլ :
Տոչորիլ .— Այրիլ :	Հրապուրել .— Իրեն քաշել :

1. ԳՈԼՈՄՊՈՍ ԵՒ ՎԱՅՐԵՆԵՐԻՑ

**Ուսուցիչն.** — Ամերիկան գտնողը, Գոլոմպոս որ մը վայրենիներու կղզի մը եւաւ. ինք բաւական զօրը չունէր. վայրենիները սաստիկ կ'ատէին Գոլոմպոսը և կ'ուղէին սպանանել անիկաւ. Արդ ի՞նչ կրնար ընել ազատելու համար անոնց ձեռքէն, քանի որ չէր կրնար պատերազմելով յաղթել առնց. թէպէտ խնք շատ խորամանկ և աստղաբաշխական զիտութեան տեղեակ և գիտուն մարդ մըն էր. բայց իրեն ի՞նչ օգուտ ունէր իր այս դիտութիւնն իր նեղ ժամանակին մէջ:

**Աշակերտն.** — Իր այդ խորամանկութիւնն ու զիտութիւնը կրնային իրեն փրկութեան օդատակար լինել և զինքն ազատել:

**Ուսուցիչն.** — Ի՞նչպէս:

**Աշակերտն.** — Եթէ աստղաբաշխութեան տեղեակ էր, եթէ լուսի կամ արեւու խաւարման ժամանակը մօտեցած էր, կրնար ըսել. «Իմ Աստուածու ձեզ դէմ բարկացած է զիս հալածելնուդ համար, ուստի արեւուն կամ լուսին լոյսը պիտի խաւարեցնէ և զձեզ մութի մէջ պիտի թողու.» և երբ խաւարումը պատահէր, վայրենիները սաստիկ վախցած՝ իրեն Աստուծոյն կողմէն զրկուած սուրբ մարդ մը պիտի համարէին և անոր չպիտի վնասէին:

**Ուսուցիչ.** — Ճիշդ այդպէս ալ պատահած է, Գոլոմպոս ազատած էր այդ կերպով:

2. Զ Ի Թ. Ա. Պ Տ Ո Ւ Դ. Ը

**Ուսուցիչն.** — Մարդ մը հեռու երկիր երթալով իր սովու

ոյն թակոյին սոկով կը լեցնէ և վրան ձիթապտուղ կը դնէ: Ութը տարի յետոյ վերադարձին՝ աւանդապահն ու կիներն առնելով միայն ձիթապտուղ կուտայ. տէրը դատ կը բանայ, բայց որովհետեւ վկայ չունէր, կը կորսնցնէ. արդ ի՞նչ կրնար ընել սոկիները առնելու համար:

**Աշակերտն.** — Նպարավաճառներու քննութեամբ կրնար հաստատել տալ թէ ձիթապտուղն ութը տարուան չէր, այլ վերջէն գրուած մէկ տարուան ձիթապտուղ. այս կերպով տէր կ'ըլլար իր իրաւանց:

**Ուսուցիչն.** — Այդ կերպով կրնար յաջողիլ:

**Հարցմունք.** — Գոլոմպոս ի՞նչպէս կրնար ազատիկ վայրենիներուն ձեռքէն. — Մարդը ի՞նչպէս կրնար առնուլ սուկիներն:

Դ Ա. Ս Ժ Գ.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՊՏՈՅՏՔ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

**Առաղձ.** — Քէրէսթէ

եռանիւ. — Երեք անիւ ու

**Անուանոր.** Անիւ ունեցող

նեցող

**Կայք.** — Տիրէլ

Անբաւական. — Զբաւող

**Առադատուաւոր.** — Առադատուաւոր

Ուղղուէր. — Կը շտկուէր

ունեցող

Մեծահանձար. — Շատ ինեւ

**Հանձարեղ.** — Խելացի

լացի

Ո՞վ կրնայ գիտնալ թէ մարդ քանի կերպով կրնայ ճամ-  
բորդել կամ պարտիլ։ Գիտեմ, պիտի ըսէք թէ շոգենաւով,  
նաւով կը ճամբորդեն մարդիկ և կը պարտին կառքով, ձիով  
եւայլն։ Բայց ճամբորդութիւնն և պառյուղ շատ կերպով  
կ'ըլլայ և տեղի կ'ունենայ ծովու և ցամաքի մէջ։ Յամաքի  
ճամբորդութեան կը ժառայեն ձիերն, տղաերը, ջորիներն,  
էշերն ինչպէս նաև բեռ, վաճառք և մարդը փոխադրելու  
համար\* կառքերն և սայլերը։ Բայց ասոնք անբաւական ըլ-  
լալով մարդոց պիտոյից անմիջական գործադրութեանը՝ գի-  
տուն մարդիկ խորհեցան և աւելի արագընթաց կառք մը



յօրինեցին, որ կը կոչուի շոգեկառք։ Սոյն շոգեկառքն հնա-  
րեց Փօրժ Աթէֆլնարն՝ Անդղիացի մեքենագործն 1830ին։  
Շոգեկառքն օրերով ճամբայները մի քանի ժամէն կ'երթայ,  
թռչունի նման կը սահի այն երկաթէ գծերուն վրայէն, որ  
գամուած են՝ գետնին երեսն ամրացած ատաղձներուն վրայ։  
Մինչեռ ցամաքի վրայ կը տեսնուեին ասոնք, 1884 Օդու-  
սսա ամսոյն մէջ Ամերիկացի գիտունը տեսան որ, հողմն է  
որ նաւը կը վարէ անոր առադաստին մէջ լեցուելով, մաս-  
ծեցին որ ցամաքի վրայ ալ առադաստաւոր կառք մը շինեն,  
քանի որ հողմն էր որ կը վարէր նաւը ծովուն վրայ, պիտի  
վարէր նաև կառքը ցամաքին վրայ՝ անոր առադաստին մէջ  
լեցուելով, բաւական էր որ երթալիք ճամբան հարթ

հաւասար ըլլար։ Առադաստաւոր կառքն ունի կայմ և մէկ  
զեկ մը, որուն միջոցաւ ո՛ր կողմն որ ուղղուի, հոն կ'եր-  
թայ. ահա այսպէս ցամաքին վրայ ալ ունեցանք առադաս-  
տաւոր նաւ։ Հին ժամանակ միայն նաւեր և նաւակներ կա-  
յին ծովուն վրայ, վերջէն դիստանները խորհեցան և հնա-  
րեցին այնպիսի նաւ մը, որ շատ շուտ և առանց թիավա-  
ռելու կ'երթար. տեսան որ քամին զօրաւոր ըլլալով իւր  
գէմն ելած ամէն առարկայները կը քշէր, կը տանէր, շինե-  
ցին առադաստ մը, ուր լեցուելով հողմն առաջ կը մզէր նաւն  
և պէտք չէր թողուր թիավարելու։ Բայց այդ ալ բաւական  
չեղաւ. երբ վաճառականութիւնն յառաջ գնաց և ճանա-  
պարհորդութիւնք շատցան, դիստանները նորէն աշխատեցան,  
նորէն յոդնեցան, նաւուն առադաստը վերուցին և անոր  
տեղ գրին մեքենայ մը, որ շոգիով կը գառնար և նաւն ա՛լ  
աւելի արագ կը վարէր, և որայինեաւ շոգին էր որ յառաջ  
կը վարէր, կոչուեցաւ շոգենաւ, զոր հնարեց Ամերիկայի  
Միացեալ-Նահանգաց նիւ Եօրք բաղարին մօտ ծնող այն մե-  
ծահանճար մարդը՝ Խոպէրթ Ֆրիթլն, որ ծնած էր 1807ին։  
Մարդիկ ծովուն վրայ ունէին նաւ, նաւակ, շոգենաւ, եւ  
ցամաքին վրայ շոգեկառք եւ ճամբորդութեան ուրիշ միջոց-  
ներ, բայց այս ամենիը բաւական չինչպիցին, ուղեցին ծո-  
վուն վրայ ալ կառքով պտըտիլ, ինչպէս կ'ընէին ցամաքին  
վրայ։ Անդղիացի ճարտարագէսք 1883 Յուլիս 28ին հնարե-  
ցին ծովային երկանիւ կառքը Թէրրի ճարտարարուեստն ա-  
ռաջին փորձն ըրաւ եւ յաջողեցաւ։ Կայ նաեւ օդային ճա-  
նապարհորդութիւն, որուն վրայ պիտի խօսինք օդապարիկի  
գաստուն մէջ։

Ասոնցմէ զատ հնարեցին ինքնաշարժ կառքեր ալ, որոնք

ձիու չեխն կարօտէր, այլ կազով, շոգեով, ելեքտրականութեամբ կը շարժէին:

Հարցմունինք.—Ո՞վ դտաւ շոգեկառքն եւ ե՞րբ։ — Որո՞նք գտան առագաստաւոր կառքն եւ ե՞րբ։ — Շոգեկառքն եւ առագաստաւոր կառքն ի՞նչ միջոցով կ'երթան։ — Ի՞նչպէս գտան առագաստաւոր նաւն։ — Ո՞վ դտաւ շոգենաւն եւ ե՞րբ։ — Ո՞ւր եւ ե՞րբ ծնաւ Ռոպէրթ Ֆրլթըն։ — Ի՞նչ աղդէ եր։

### Դ Ա Ս Ժ Գ.

## ԶԱՐԻՔՆ ԱՆՎԱՐՁ ԶՄՆԱՐ

ԴԱՍՏԱԿԵԼՈՒԹԻՒՆ—ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Անվարժ. — Զվարժուած։

Վաճառական. — Թիւճար։

Չայնել. — Պուալ

Խթել. — Մշտել։

Դդում. — Խապախ։

Կը վարձատրուի. — Վարձք կ'առնէ

1. Զարուհի և Ստեփանոս ձմեռ առեն երան փայտ ժողվելու, որովհետեւ աղքատ էին և չին կրնար փայտ գնել։ Գերեզմանատան մշէն անդած առեննին չիրիմ մը առասան, կեցան անոր առջեւն և փրան դրուած սա գերերը կարդացին. «Ես մեղաւոր էի, Ասուուած զիս պատեց»։ Այս գերերէն շատ յուղուեցաւ Զարուհի, և մինչեւ իսկ լացաւ, ու բովհետեւ ո՛բքան որ ինք գթած էր, ընդհակառակն այնքան ալ անդութ էր իր եղբայրն Ստեփանոս Գերեզմանատունէն։

Ենելով եկան լերան մը ստորոտն, ուր տեսան ձիւներու մէջ թաղուած անծանօթ մարդ մը, որ թմրած էր ցուրտէն և այնպէս կ'երեւէր թէ կը քնանար։ Զարուհի գթաց վրան, մօտեցաւ անոր, ձայնեց, խժեց, բայց մարդը չարթնցաւ։ «Նարժէ՛, շարժէ՛, թերեւս արթննայ, ըստ Ստեփանոս ծաղրելով, թո՛ղ քիչ մը պակաս խմեր անպիտանը, չե՞ս տեսներ, զինով մ'է, զինովի մը համար հոս պաղելո՞ւ ենք, Ասուուած խելք տայ քեզ»։ — «Ի՞նչ, ըստ Զարուհի, թուղունք որ մեռնի՞ ողորմելին, այս մարդուն կեանքն աղատել մեր պարտաքն է, ես ի՞նչ որ կրնամ ընել պիտի ընեմ, եթէ դու չես ուզեր ինձ օգնել և սպասել՝ գնա՞»։ Ստեփանոս մէկդի գնաց ըսելով. «Ես այդքան դութ որ ունենայի, իմ վրայ կը գթայի»։

Զարուհի առանձին մնաց և մտածեց թէ ձիւնը կը տաքցընէ, լաւ մը ձիւնով ծածկեց զայն, և ինք գիւղը վաղեց. Ճամբան գիւղուածով գիւղացիի մը պատահեցաւ, որ սայլով կուգար, հասկցուց գէպքն, աղաչեց անոր ու գութը շարժեց, որպէս զի օգնէ իրեն։ Գիւղացին հաւանեցաւ և Զարուհիի հետ ընկերանալով գնաց կէս մեռած մարդը գտաւ, և իր սայլին վրայ գնելով տուն բերաւ։ Աղատեցաւ մահուանէ մարդն, որ Զարուհիի գիւղին մօտ քաղաքէն հարուստ վաճառականի մը գրագիրն էր։ Երբ վաճառականն իմացաւ Զարուհիին առավինութիւնն՝ իր սանն ըրաւ, կը թել տուաւ վարժարանի մէջ։ Զարուհի մեծցաւ՝ լաւ, պարիեցտ, ուսեալ և առաքինի աղջիկ մ'եղաւ, և վաճառականն ալ ամուսնացուց զայն իր գրագրին հետ, զոր մահուանէ աղատած էր Զարուհի։ Այսպէս ահա Զարուհիի ըրած «բարիքն անվարձ չմնաց»։

Իսկ Ստեփանոս Եղբայրն, խեղճութեան մէջ ինկաւ, այսպէս որ ուտելու հաց իսկ չունէր, Զարուհի օր մը կոյեւ-  
լով զայն իւր քովին՝ ըստ «Եղբայրս, հիմա կ'ուզե՞ս որ  
ուրիշ մը գթայ քու վրադ» — Ահ, պատասխանեց, երկու  
օրէ ի վեր հաց կերած չեմ. ինչպէս չեմ ուզեր — Ահա՛,  
ինչպէս որ դու կ'ուզես որ ուրիշ մը քեզի աղեկութիւն ընէ,  
այսպէս ալ ուրինէր կ'ուզեն որ դու ալ իրենց աղեկու-  
թիւն ընես. միաբդ բեր ձիւնին մէջ թաղուած մարդը. դի-  
տե՞ս, ի՞նչ ըսկը. չդժացիր այն մարդուն. իսկ ե՞ս, այո՛,  
դժացիր և երջանիկ եղայ, «դի բարիքս անփարձ չմնաց» :  
Լա՞ւ միաբդ պահէ Աւետարանի սա խօսերն. «Ի՞նչ որ  
կ'ուզես որ մէկը քեզի ընէ, դու ալ անոր այնպէս ըրէ՛» :  
Այդ ձիւնին մէջ թաղուած մարդն իմ ամուսինս է այժմ.  
Դու չդժացիր վրան, իսկ նա և ես կը դժամք քո վրադ և  
կը նուիրեմք այս հնագ ոսկին, որպէս զի միմիթարուիս և  
փոխես չար բնութիւնդ» : Ստեփանոս ամցաւ, զզաց և  
լսրվ եկաւ համբուրեց քրոջը ձեռքն և ներումն ինդրեց :

*Հարցմունիք.* — Ի՞նչո՞ւ լեռն ելան տղաքը: — Ի՞նչ տեսան  
գերեզմանատան մէջ: — Ի՞նչ տեսան ճամբուն վրայ: — Ի՞նչ  
ըստ Զարուհի և ի՞նչ՝ Ստեփանոս: — Ի՞նչպէս փրկուեցաւ  
մարդն: — Ի՞նչ եղաւ Զարուհի: — Ի՞նչ եղաւ Ստեփան-  
ոս: — Ի՞նչ խրատ տուաւ Զարուհի Եղբօրը:

*ՀՐԱՀԱՆԴ.* — Նմանուրիւնիք. — Մահուան պէս տժգոյն,  
մարմարի պէս ցուրտ, անծեղի պէս շաղակրատ, գիշերուան  
պէս մաթ, պղնձի պէս կարծր:

Դ Ա Ս Ժ Ե

ԼՈՒ, ՄՐՁԻՒՆ, ՍՊՈՒՆԳ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Յօդ. — Կապ, անդամ:

Բիծ. — Արաւ:

Սուսան. — Զարշափ:

Տարբեր. — Զաւ:

Օձապոյտ. — Պայոյտաւոր:

Նախանձ. — Ոխ, եռանդն,

փափաք:

Ամրար. — Ամպար:

Գրգռել. — Վառել, յուզել

բան մը:

Խիտ առ խիտ. — Սիխ:

Սպունգ. — Սիւնկէր:

Հնձել. — Ցորենը քաղել:

Թեւառոր. — Թեւ ունեցող:

Ճճի. — Որդ:

Ամրար. — Ամպար:

Ա. Լուերը\*\* թեւ չունին, իրենց առաջին սովերը կարճ, ետքինները՝ երկայն են: Իրենց գլխուն վրայ երկու աչք ունին: Լուին սովերն յօդերով բաղկացած լինելուն՝ անմիջապէս և դիւրութեամբ կը ցատկէ: Բերանը մարդուն մարմայն մէջ իրելով\*\* արինը կը ծծէ, անկողնոյն վրայ բժի նման ծու կ'ածէ և մաս մ'ալ արին կը թողու քովը, որպէս զի իր ձագերուն մոռնդ\* Ամառ առեն փոշոյ մէջ կը ծնաւնի: Լուերն զմեզ անհանդիսա կ'ընեն գիշերները: Ամերիկայի մէջ տեսակ\*\* մը լու կայ, որ մարդուն եղանդին մէջ մանելով հնմ կը բնակի. զայն հանելու համար մեծ զգուշթիւն պէսք է, զի եթէ կենդանին հնմ ճեղքուի, պէտք կ'ըլլայ մարդուն մասոր՝ կարել:



2. Յասու անգամ տեսած էք միջիւններ<sup>\*\*</sup>, որ հողին եւ բեսլ կը շնուն իրենց բայնը, որ յայսնի է՝ սպիրական հողին գոյնէն տարրեր գոյնով հատիկ հատիկ հոդերովը. իրենք կը բնակին հողէն վար մէկ մէժրօ խորութեամիր բայնի<sup>\*</sup> մը մէջ, որ օճապատյա<sup>\*\*</sup> ճամբայներով կ'երթան, տամնք իրենց բերանն առած ցորեն, գարի, մրգեղինաց կուտեր, սեխի և ձմերուկի<sup>\*</sup> կուտեր կը բերեն իրենց տարրը. միջիւններն եւ բեր կարգի կը բաժնուին, արու և էգ և պահապան միջիւն, որ կը սպասէ բոյնին մօտ, որպէս զի թեւաւոր միջիւնը ներս չմոնէ, մինչեւ որ ինքն անոր թեւերը<sup>\*\*</sup> փրցնէ. ուրեմն մըրջիւնները թեւաւոր ալ կրնան ըլլալ:

Ամերիկայի մէջ տեսակ մը մրջիւն կոյ, որ շատ մեծ է, արտերէն ցորեն, գարի ևայլն ժողուելով իրեն բայնին յատակն արտ մը կը շնէ, կը ցանէ, կը փարէ<sup>\*\*</sup> և երր բուռնին, կը քաղէ և կը հնձէ զանոնք. ահա այսպէս մրջիւնները մարդու մը նման եւ թերեւու մարդէ մը տեղի կ'աշխատին եւ մեր նախանձը կը գրգռեն:

3. Սպունդը<sup>\*</sup> տեսակ մը կենդանեաց բնակարանն է: Սպունդը կը գանուի Միջերկրականի, Արշակեղագասի եւ Ամերիկայի ծավերուն մէջ: Սպունդի ճճիները<sup>\*\*</sup> լրձնուտ են եւ միասին ապրիլ սովորելով խիստ առ խիստ կը բնակին. եւ եթէ ասսացմէ ոչնչացաղներ ըլլան, իրենց տեղը պարապ մը նարով, որիներ կուգան ձռ կ'ածեն հօն, որք կը մեծնան, կ'ըլլան ճճի:

Մարդիկ սպունդն առնելու համար կը հանուին եւ ծով մանելով այդ ճճիներուն բայնն եղող սպունդները կը ժողին, կը մաքրեն լաւ մը, եւ կը շնուն այն մաքրոր<sup>\*\*</sup> եւ փափուկ<sup>\*\*</sup>

սպունդն, որ կը տեսնէք: Սպունդները կ'ածին, կը մեծնան բոյսերու նման՝ ճճիներու շատութեանը համեմատ:

Հարցմունք. — Ի՞նչ պատճառաւ կարող են ցատկել լուերը: — Ի՞նչպէս կը մեծցնեն իրենց ձագերը: — Ի՞նչպէս է Ամերիկեան լուն: — Ի՞նչ գիտես մրջիւններուն վրայ: — Քանի<sup>\*</sup> տեսակ են: — Ի՞նչպէս կը պատրաստեն իրենց արտը: — Ի՞նչ բանէ շնուռած է սպունդը: — Ո՞ւր կը գտնուի: — Ի՞նչպէս կը պատրաստեն: — Ի՞նչպէս կ'ածի:


### Դ Ա Ս Ժ Գ.

### Ո Ր Թ Ա Լ Ո Ւ Ի Ւ Ճ

### ԴԱՍԱԿՈՍՈՒԹԻՒՆ – ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Մրածայր. — Ծայրը սուր: Հիւթ. — Էօզ:  
Դիւրաշարժ. — Դիւրաւ շարժող: Արգասաւորեալ. — Պտղաբերեալ:  
Կոճղ. — Քէօք: Լուիճ. — Բուռոց վլասակար ճճի:  
Բարունակ. — Բարակ ոստ: Փճացնել. — Ոչնչացնել.  
Դեղնագոյն. — Դեղին գոյն ու. Ողողել. — Ջրով ծածկել:  
Նեցող: Լուծել. — Հալեցնել, քակել:  
Մանրացոյց. — Մանր ցուցնող կենսատու. — Կհանք տուող:  
Գործիք:

1. Ո՞վ գիտէ. ի՞նչ է որթալուիծը։ Որթալուիծն այդիներուն միասակար ճճի\*\* մ'է. ունի վեց ոտք, և աչք, դըլուխ, փշիկ, բողկուկ\*\*։ — Ապրիս, ուշիմ Պարէտ։ Մտիկը ըրէք, այժմ պիտի խօսիմ անոր բուն նկարագիրը\*\*։ Որթալուիծը ա՛յնչափ փոքր միջատ մ'է որ հաղիւ կը տեսնուի մանրացոյցի տակ։ Մարմնոյն ձեւը հաւկիթաձեւ\*\* է և օղակաւոր, լուի նման իր դըլուխը զինուած է երկու խոշոր և հաստ բողկուկներով, ունի կտուց մի, երկայն և սրածայր, ինչպէս կը տեսնէք պատկերիս մէջ, և վեց հատ ոտքեր՝ ճանկերով\*\* վերջաւորուած։ սա իր կունակին վրայ ունի կանոնաւոր կերպով շարուած ուռեցքներ\*\*։



Երբ դեռ նորածին ճճիներ են, շատ դիւրաշարժ են և կսկսին արմատներուն վրայ ասու և անդ ճամբորդել, մինչեւ որ գտնեն արմատներու նուրբ թելերու\* ծայրերը, ուր կը հաստատուին և որթոյ կենսական հիւմը կը ծծեն։ Այս ատեն որթալուիծք շերամներու նման մորթերնին կը փոխեն։

2. Ամառուան սկիզբներն և մինչեւ իսկ դէպի վերջը իրենք եւս կ'սկսին ձու ածել գարնան սկիզբէն մինչեւ աշնան վերջերը։ Որթալուիծը մինչ 10–12 սերունդ հաւկիթ\* կ'ածէ և այս ընթացքով մայր մը յաջորդ սերունդներով\*\* ի միասին 25–30 միլիոն հաւկիթ կ'ածէ։

Են դուրս կուգան թեւաւոր՝ որթալուիծներ, որք էդ են և միւս էգերէն մեծ են հասակաւ։ Ասոնք որթոյ ոստերուն վրայ կամ կոճղին\*\* կեղեւին տակ քանի մը հաւկիթ կ'ածեն։ Այս հաւկիթներն են դեղնագոյն ճերմակ, և կը բաժնուին երկու տեսակի. երկայն և կարծ ։ Երկայն ձուերն աւրու, իսկ կարծերն էդ որթալուիծներ յառաջ կը բերեն։ Այս նորածիններուն էգերը, որ կտուց չունին, կ'երթան բարունակներուն\*\* կամ հողին մօտ՝ կոճղին վրայ և խոշոր հաւկիթ մը միայն կ'ածեն, որ գլանաձեւ է և կը կոչուի ձմեռուան հաւկիթ։

Թեւաւոր որթալուիծները, կտուց չունեցող արուներն և էգերը, ինչպէս նաև հողին տակ գտնուող որթալուիծներու մեծ մասը ձմեռը կը մեռնին իսկ մնացեալները, որ մեծաւ մասամբ նոր սերունդ են, կը թմրին և կը գիմանան ձմեռուան ամենասատիկ ցուրտերուն։

Ձմեռուան հաւկիթները, ամբողջ ձմեռն անցնելէ յետոյ, Ապրիլ և Մայիս ամիսներուն մէջ կը բացուին. մէջն արգասաւորեալ հաւկիթներով լի մայր մը դուրս կ'ենէ, որ հողին տակ կ'իջնէ՝ հոն ածելու համար այդ հաւկիթները։ Երբեմն ալ որթերուն վրայ կ'ենէ և տերեւները\* խայթելով\*\*, այդ խայթուածներուն մէջ կ'ածէ ձուերը\* և ինքն ալ հոն կը փակուի։ Այս լուիծներն հաստատուելով արմատներու վրայ, կը ծակեն զայն իրենց կտուցով և կ'սկսին որթոյ\*\* հիւմը ծծել։ Մի քանի օր խայթած տեղերը կ'ուռենան, որով որթը բոլորովին կը փափի։

Հարցմունֆ. — Ի՞նչ կազմութիւն ունի որթալուիծը։ — Քանի<sup>9</sup> տեսակ են ձուերը։ — Քանի<sup>9</sup> տեսակ են որթալուիծք

— Ո՞րչափ հաւկիթ կ'ածեն։ — Ի՞նչ գիտես ձմռան հաւկիթ։  
Ներուն վրայ։ — Հողին տակ որթալուիճներ կո՞ն։

**ՀՐԱՀԱՆՔ.** — Հետեւեալներն առանց աի բարդ շինէ։ —  
Փոյթ-եռանգն։ Մակ-երեւոյթ։ Ժանո-երես։ Ծառ-ուղի։  
Թան-ապուր։ Գահ-երէց։ Բան-դէտ։

---

### Դ Ա Ս Ժ Է.

### ԳԼՈՒԽ ԵՒ ԴԷՄՔ

ԴԱՍՏԱԿԵՐՊԻՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Անգունք։ — Քթի ծակեր  
Քիմք։ — Տամախ  
Գանգ։ — Գլխան դասն  
Ճակատոսկր։ — Ճակտի ոսկր  
Ակնակապիճ։ — Աչքին ծակը  
Քունկոսկր։ — Քունկի ոսկր  
Փղոսկր։ — Ֆիլ տիչի  
Ճնշումն։ — Ճղմելն  
Տեսանելք։ — Աչքը

Անգոսկր։ — Քթի ոսկր  
Ստորնածնօտ։ — Վարի ծնօտ  
Վերնածնօտ։ — Վերի ծնօտ  
Բնչացք։ — Պելի  
Այտոսկր։ — Այտի ոսկր  
Առաստաղ։ — Թաղան  
Քիմքոսկր։ — Քիմքի ոսկր  
Անզոյգ։ — Զոյգ չունեցող, առանձին

Մարդուս գլխուն ոսկորներն իրարու միացնելով դանդ  
մը կը կաղմուի։ Գլխուն վրայի մասն, որ սկաւոռակաձեւ է,  
դանդ կը կոչուի։ Գանդին մէջ ամփոփուած է ուղեղը։  
Գանդը վեց գլխաւոր ոսկորներէ կը բաղկանայ, որոնց եր-


կոքը զոյգ և երկուքն ալ անզոյգ են։ Անզոյգներն են 1.  
Ճակատոսկրը, որ ճիշդ ճակտին վրայ կը գտնուի և ունի  
չորս զոյգ ոսկորներ, որոց երկուքը դանդին աջ ու ձախ կողմէնը գտնուելով կողային ոսկր աւ-  
նունն ալ կ'առնուն։ 2. Գանդոս-  
կերք՝ որ ականջին քովերը կը գըտ-  
նուին, մարդուն կենդանութեան  
ատեն կակուղ են և մահուանէն  
վերջը կը կարծրանան։ Խակ տղայու-  
թեան ատեն խիստ փափուկ են,  
այնպէս որ փոքր ճնշում մի անհաճոյ տպաւորութիւն և վը-  
տանգ կը պատճառէ տղուն, ուստի, տղայք, պէտք է  
զգուշանաք դանդոսկերաց գլուխէ։ 3. Ասողական գործարանն  
այս ոսկերաց մէջ կը պարունակի։

Երեսին ոսկորները տասն և չորս հատ են, որոնց վեցը  
զոյգ և երեքն ալ անզոյգ են։ Զոյգերն են ոնդոսկր, վեր-  
նածնօտ, այտոսկր, քիմքոսկր, փղոսկր։ Խակ անզոյգներէն է  
ստորնածնօտն, որ ակռայներուն մէկ մասը իւր վրայ կը կը։

4. Անգոսկր կը պատին այն երկու մանր ոսկորները, որ  
քթին վերի երկու կողմերը կը գտնուին և այնպէս ոժով  
երարու միացած են որ շատ գժուարութեամբ իրարմէ կը  
տարբերին։

Վերնածնօտ ըստու սկավածները բերնին վրայ երկայն  
լայն ոսկորներն են, որոնց վրայ ընչացքները կը բումին,  
որք ստորնածնօտին հետ միանալով հաց և ուրիշ բաներ  
ծամելու կը ծառայեն։

Այտոսկերք երեսին երկու կողմերը կը գտնուին և ա-  
սոր համար է որ այտոսկերք կը կոչուին։ քառակուսի են



այն ոսկորներն որ ակնակապիճին ստորին կողմը կը կաղմեն քիմքոսկերք երկու հատ՝ իրարու միացած չափով և անկանոն ոսկորներ են, որ բերանի առաստաղը կը կաղմեն։ Այս ոսկերք երկու մասերու կը բաժնուին։

2. **Փղոսկերք երկու հատ՝ իրենց վրայ գարձած ոսկորներ են,** որք ոնդային խոռոշին ստորին երկու կողմերն կը գտնուին։ Այս երկու ստորին փղոսկերքն զատ կան նաեւ երկու զոյդ փղոսկերք ալ, որք առաջին փղոսկերաց վրայի կողմը դրուած են։

**Հարցմունք.** — Գանգն ի՞նչ ոսկորներէ կը բաղկանայ։ — Ի՞նչ գիտես ոնդոսկերաց քիմքոսկերաց, այտոսկերաց, գանգոսկերաց վրայ։

**ՀՐԱՀՈՒՆՔ.** — Չագեր. — Գաւազ կը նշանակէ բաղէի ձագ, իսկ վառեւակի։ — Թոթիւն կը նշանակէ արջու ձագ, իսկ ամի՞կ։ — Կորիւն կը նշանակէ առիւծի ձագ, իսկ գառնուկի։ — Եղնորդ կը նշանակէ եղնիկի ձագ, իսկ սկունդի։ — Քուռակ կը նշանակէ իշու կամ ձիու ձագ, իսկ հո՞ր։ — Էսէ՛, ի՞նչ կը նշանակին դաւազ, թոթիւն, կորիւն, եղնորդ, քուռակ։ (Բառարանը նայելով գրել նշանակութիւնը անծանօթ բառերուն)։

### Դ. Ա. Ս Ճ.Բ.

### ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅՑԵԱՆ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ - ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Հոգատար. — Հոգ տանող։

Բիծ. — Արատ։

Ջերմ. — Տաք։

Աներկիւղ. — Անվախ։

Դժբաղդ. — Բաղդ չունեցող։

Փայփայել. Շոյել։

1. **Ո՞վ Աստուած իմ, օրհնեալ ըլլայ քու անուն.** Աշխատեցայ, ինդացի, զուարձացայ\*\*. Քնանալէս յառաջ առ քեզ կ'աղօթեմ. Գոհութիւն\*\* քեզ ո՞վ Աստուած իմ, փառք քեզ, Հայութիւն Քեզ ամէն շնորհացըդ\* համար.

Լուսոյն, թուչոց, ծաղկանց համար գոհութիւն, եւ գեղեցիկ, զուարթ այդուն\*\*, որ տուիր.

Բայց ահա՛ լոյսն կը փարատի, չը կայ ձայն։ Ո՞վ Աստուած իմ, գոհութիւն տամ քեզ դարձեալ, Որ այս գիշեր հսկես\*\* վրաս մոթին մէջ, եւ աներկիւղ անկողնոյս\* մէջ ննջեմ ես Գլուխս բարձիս՝ համբոյրներուն տակ իմ մօր։

2. **Դու ինձ տուիր շատ բարիքներ քաղցրանուէր,** եւ հոգատար\* մայր մը, հայր մը ու քոյրեր, եւ խնակիներ, զոր քու ձեռքդ կը բաշխէ. Անոր ժըպտիս, որ կը սիրէ զքեզ միուլ, Որ կը ժպտիս բարի ծնողացս դիմաց, եւ զիս զըդուես անոնց բազկաց մէջ սիրուն, Ուր կը դընես զորով\*\* ու սէր քու անհուն։

3. **Ներէ՛ ինձ, Հայր, զի քեզ մեղայ ես այսօր,** Ոչ մէկ բան կայ, որ մնալ ուղէ ի ծածուկ\*\*, Ամենատես\* քու աշք տեսնէ ամէն բան. Աստղերու\*\* մէջ եղած բիծերն\* գու զիտես, եւ սպիտակ շուշանին\*\* մէջ գեղափայլ.

Պահէ՛ զիս, Հայր, որ բարի մարդ մը լինիմ ես,  
Եւ հրեշտակի՞ն նման արդար, սուրբ, մաքուր :

4. Կ'ըսեն. աղայը կան, որ չունին հայր ու մայր,  
Ո՞րչափ ցաւիմ անոնց վրայ... գթա՛ Տէր .  
Մայր չունենա՞լ... ա՛հ, իմ մայրս պահէ ինձ,  
Որ զիս միրէ, իւր բազկաց\* մէջ առնու զիս,  
Իւր ձեռքերովս փափկիկ մազերս փայփայէ\*\*  
Եւ իմ փաքրիկ ձեռքէս բռնած քայլ առ քայլ\*\*\*  
Եկեղեցին, Քո Սուրբ Տաճարը\* զիս տանի,  
Ուր ծնրադրած՝ անոր հետ փառք տամ քեզ, Տէր :

5. Ո՞վ Աստուած իմ, օրհնեա՞լ ըլլայ քու անուն .  
Աշխատեցայ, խնդացի, զուարճացայ .  
Քնանալէս յառաջ առ քեզ կ'աղօթե՛մ .  
Գոհութիւն քեզ, ո՞վ Աստուած իմ, փառք քեզ, Հայր  
Հարցմունիֆ. — Քնանալէն առաջ ի՞նչ կընէր տղան . —  
Գիշերը ո՞վ կը հսկէր տղան . — Իր մօր համար ի՞նչ կը մաշ-  
թէր տղան :

ՀՐԱՀԱՆԳ. — Գործածութիւն բառից . — Ընկղմիլ . —  
Երբ ո եւ է ծանր նիւթ մը, որ չմնար ջուրին վերեւը, այլ  
գէպի խորը կ'իջնէ, կ'ընկղմի . չենք ըսեր նաւը ջուրին խո-  
րին խորը իջաւ, այլ ընկղմեցաւ. փոխարերաբար կը գոր-  
ծածուի, ինչպէս. մոլութեան մէջ ընկղմեցաւ :

••••• •••••

Դ Ա Ա Ժ Թ.

### Օ Դ Ա Պ Ա Ր Ի Կ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ, ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Մեքենագործ . — Մեքենայ	Հոսանք . — Վաղելն , վաղող
շինող : (շրջող նաւ :	ջուր, օդ :
Օդապարիկ . — Օդին մէջ	Օդայած . — Օդին մէջ պուսող :
Մնդուս . — Ճանփէս :	Ղեկ . — նաւը ուղղելու գործիք :
Ճարտարագէտ . — Վարպետ :	Գործարան . Աշխատելու տեղ
Սպայ . — Ազատ զինուոր :	(Փապրիդա) :

1. Դուք տեսա՞ծ էք կառքեր, որոնց մէջ մարդիկ նըս-  
տելով կը ճամբորդեն : — Այո՛, հայրիկս անցեալ կիւրակէ  
կառք մը բռնեց, կառապանին տասն դրւուշ տալով, անոր  
մէջ հայրս, մայրս, քոյրս և ես նատեցանք և եկեղեցի  
գացինք, որովհետեւ այն օր անձրեւ կուդար : — Լա՛ւ, բայց  
Երբ Պոլիս երթալու ըլլայ հայրդ, ծովէն կ'անցնի, այնպէս  
չէ՞ : — Այո՛, մինչեւ նաւամատոյցը կ'երթայ ցամաքով, անկէ  
անդին ծովալ : — Ծովէն կառքո՞վ կ'երթայ թէ ուրիշ բա-  
նով : — Ո՞չ, ծովէն կառքով չերթուիր, այլ շոգենաւով : —  
Ահաւասիկ երկու տեսակ ճամբորդութիւն սորվեցաք, ծովու  
և ցամաքի . բայց լսա՞ծ էք օդային ճամբորդութիւնը : —  
Ո՞չ, մարդ ի՞նչպէս օդին մէջ կրնայ ճամբորդել : — Այո՛,  
օդային ճամբորդութիւն ալ կայ և անով մարդ ա՛լ դիւրաւ  
կը ճամբորդէ ուզած տեղն, և բարձրէն կը դիտէ աշխարհի  
պանչելիքը : — Ուրեմն թռչունի նման կը թռչի՞ մարդն ալ :

Այսուհետեւ թէ ի՞նչպէս ժամանակաւ Լէօնարտո ալը վիճի անուն մեքենագործը ջանաց մարդն ալ թռցունեւ թեւեր շինելով. բայց չյաջողեցաւ. Շատ ժամանակ անցնելն ետքը դիտուններն յոդնեցան ու աշխատեցան որ օդային ճամբորդութեան դալսնիքը գտնան: Ստեփան և Յովսէֆ Մօնկոլֆիէ՝ գաղղիացի երկու եղբայրներ, որ թղթավաճառ էին, թղթէ օդապարիկ մը շինեցին և ապա կատարելագործեցին, և յաջողեցան թռչիլ իրը թռչուն օդին մէջ: Այս գիւտն եղաւ 1782ին: Բայց այդ ատենէն մինչեւ լիրջին օրերս տակաւին մարդը չէր կարողացած ուզած կողմն երթալ, այլ միայն բարձրանալ և հողմոյն հոսանքն ո՛ր կողմը ըլլար, հոն երթալ, և այս՝ վտանգներ ունէր իրեն մէջ:

2. Գիտունները վերսավին շատ մոտած եցին մինչեւ 1884րդ տարին, որ ատեն երկու գաղղիացի ճարտարագէտ սպայներ՝ Պէրնար և Քէպս անունով, օդապարիկին զեկը գտան: Ղեկաւոր օդապարիկը առաջին անդամ՝ բարձրացաւ 1884 Օգոստոս 9ին Մէօսանի օդապարիկի զինուորական գործարանէն, իւր մէջ ունենալով վերոյիշեալ երկու զինուորական սպայները: Այս փորձին մէջ տեսնուեցաւ որ օդաչու մարդիկ ո՛ր կողմն որ երթալ ուզէին, զեկին չորհիւ կրնային երթալ՝ առանց ենթակայ լինելու հողմոյն հոսանքին աղբեցութեան:

Օդապարիկը բարակ կտաւէ, սնդուսէ կամ քառչու անուն կտաւէ շինուած գունդ մ'է, որուն մէջ լեցուած է տեսակ մի կազ, որ օդէն շատ թեթեւ լինելով շուտով կը վերանայ օդին մէջ: Օդապարիկին յատակը կայ նաւ մը, ուր կը նստի օդաչու մարդն, որ կ'ըլլայ անոր վարիչը:

Անդեկ օդապարիկը գրեթէ տանձի ձեւ մը ունի, իսկ զեւկաւորը ձկան ձեւ, և զեկն ալ ձկան պոշին նման ետեւի կողմն է, զի ձուկն օրինակ բոնելով շինուած է, և գուք գիտէք արդէն թէ՝ եթէ ձուկը պոչ չ'ունենար, չէր կրնար ուզած կողմը դառնալ. զի պոչն՝ ետին իրը զեկ կը ծառայէ: Արդ աւելի լաւ ըլլա՞ր եթէ ըսեմք թէ օդանաւ ալ ունեցանք: Ի՞նչ սբանչելի արուեստ, և ի՞նչ երջանիկ օրեր՝ մեր նախնիք ո՛չ շոգենաւ ունէին, ո՛չ շոգեկառք, ո՛չ օդապարիկ կամ լաւ եւս օդանաւ. մենք ունինք այդ ամենքն ալ, և երբ կատարելագործուի և սովորական դառնայ օդանաւի գործածութիւնը, այն ժամանակ թռչունի նման օդին մէջէն թռչելով, ո՛ւր որ ուզենք պիտի երթանք: Պիտի կարենանք ենիւլ առաւօտուն տունէն, ցերեկը պարտիլ Գերմանիա, և երեկոյին ալ իջնել Լոնտոնի մէջ, պանդոկ մը ճաշելու և ննջելու և միւս առաւօտ վերադառնալու համար: Պիտի տեսնեմք օրեր որ սուրհանդակներ և ճամբորդներ պիտի վազեն մեր զիլուն վրայէն, և վաճառականք ապրանքներ պիտի տանին օդին մէջէն:

Հարցմունիք. — Ի՞նչ տեսակ ճամբորդութիւններ գիտես: — Ի՞նչ հնարեց Լէօնարտո ալ վիճին: — Ի՞նչ հնարեցին Մօնկոլֆիէ եղբայրը: — Ե՞րբ և որո՞նք գտան զեկը: — Ո՞ւրկէ թռուցին զեկաւոր օդանաւը: — Ի՞նչպէս շինուած է օդանաւը: — Ղեկաւոր օդանաւն ի՞նչ ձեւ ունի: Ո՞ւր է զեկը:



Դ Ա Ս Ի

Կ Է Տ Ա Դ Ր ՈՒ Թ Ի Ւ Ն

ԴԱՍՍԻ ՕՍՈՒԹԻՒՆ — ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Կը տարբերին . — Կը զանաւ . Կը բաղկանայ . — Կը կաղմուի :  
զանուին : Սարբինայ . — Ասմալըս :  
Կէտադրութիւն . — Կէտ դնելն , Շփոթ . — Խանդարուտծ .

---

Տղայք , երբ ո' և է բան մը կարդաք կամ դրէք , կը  
տեսնէք փոքրիկ նշաններ , որ գըերաւն բոլ դրուած են ,  
բայց ուշադրութիւն ըրած էք . այդ նշանները կը տարբերին ,  
այնպէս չէ : — Այսու : — Կրնա՞ս այդ տեսած նշաններդ  
գծել ոսա սեւ տախտակին վրայ : Մինաս մտիկ ըրէ . առանց  
կէտադրութեան , այսինքն այդ նշաններուն՝ գրուած մը տարբեր  
ու շփոթ իմաստ մը կրնայ ունենալ , և պէտք կ'ըլլայ  
առանց շունչ առնելու կարդալ մինչեւ որ աւարտի . ուստի  
ուշադրութիւն ընելու է կէտադրութեան գործածութեան :  
Կէտադրութիւնը կը բաղկանայ ընդհանրապէս տասն եւ  
բեք մասերէ , որոնք են . Պարոյկ ( \* ) , որ կը գրուի հարցական խօսքերու մէջ . ինչպէս , ինչո՞ւ չես աշխատիր : Ի՞նչ  
կ'ըսես : — Երկար ( \* ) , որ կը գրուի զարմացում , բարկութիւն ,  
կարեկցութիւն եւայլն յայտնող բառերու վրայ , ինչպէս . վա՞ս , խեղճ առայ : Ի՞նչ գեղեցիկ օր : — Շեշտ ( \* ) ,  
որ կը գրուի հրամայական բառերու վրայ , ինչպէս . Առ սա  
գերը , կարդա : Գնա՞ , ըսէ՛ թէ չպիտի գամ այսօր : Գոյէ՛

վարագոյրը : — Միջակէտ ( . ) , Բութ ( \* ) , Ենթամնայ ( - ) ,  
Ստորակէտ ( , ) , Զակերտ ( < > ) , Վերջակէտ ( : ) , Փակա-  
գիծ ( ) , Կախման կէտ ( . . . ) , Մակակէտ ( ' ) , այս վեր-  
ջի ամենքը պիտի ուսանիք , երբ քիչ մ'ալ մեծնաք :

Հարցմունիք . — Քանի՞ նշաններ կան կէտադրութեան  
մէջ : — Որո՞ւ վրայ կը գրուի պարոյկ , Երկար , շեշտ : —  
Գրէ՛ բութը , Ենթամնան , ստորակէտը , չակերտը , միջա-  
կէտը , փակագիծը , կախման կէտը , մակակէտը :

ՀՐԱՀԱՆԴ . — Ուղղելիք . — Ի՞նչ կ'ըսես : — Զեկը գի-  
տեր որ պիտի գային : — Ուր տարիիր զամբիւղն : — Ի՞նչ կու-  
ղես ինձմէ : — Երբ Եկար հոս : — Որ ատեն գրիչս ուղե-  
ցիր ես չտուի : — Ով բերաւ դքեզ հոս : — Այդ ի՞նչ է  
գլխուդ վրայ :

ՆՄԱՆԱՆԱՅՆ-ՏԱՐԱՆԻՀՅ . — Խորդ ( թոշոն մը ) : Խորթ  
(անհարազատ որդի , այսինքն միեւնոյն ծնողքէ չեղող ) : Թի-  
ակ (պղտիկ թի ) , Դիակ (մեռած մարմին ) : Քուղ (գեր-  
ձան ) , Կուղ (խաթ ) : Կուռ (ամուր ) , Կուր (կերակուր , նաւ ) :

---

Վ Ր Ի Պ Ա Կ

Էջ 172 , չարիբն անվարձ չմնար պէտք է կարդալ  
բարիբն անվարձ չմնար :

---

## ԹՐՉՆԻԿՆ Ի ԾԱՌ

Ե՞նչ անուշիկ գեղօններ նուագես ով թռչնիկ,  
Անտառիս խիտ ծառերուն թերթոց մէջ փափկիկ,  
Երդէ թռչնակ բնութեան դաշնակ գեղեցիկ,  
Երդէ փափուկ ու մեղմ երդեր անուշիկ :

Ահա քեզ երկնից վրայ երդակեց կերեւին,  
Թռչնոց պարք որք կը թռչին խումբ խումբ միասին,  
Երանի քեզ զուարթ ուրախ կերդես միշտ,  
Դաշնակաւոր երդոցդ մէջ դու չոնիս վիշտ :

ԳԻՏԵՐ ԲԱՐԵՒ

Գիշեր բարի Տիկնալը ,  
Գիշեր բարի Տեալը ,  
Գիշեր բարի Պալոնալը :

Ժամ՝ է արդ բաժանման  
Մնայք մնայք բարեւ :  
Զուարթ սրտիւ այժմ կերթոք ,  
Զուարթ սրտիւ այժմ կերթաք :

Անոյշ Երաղ Տիկնայք ,  
Անոյշ Երաղ Ճեղ Տեարք ,  
Անոյշ Երաղ Պարսնայք ,  
Ժամն Հասաւ բաժանման ,  
Զուարթ սրտիւ արդ կերթանք :  
Մնացէք բարեւաւ :



2013  
3628

«Ազատին ուղղարկան»



NL0062511

# ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅ

Sarberf Աշխարհիկ Լեզուի	Ա.	հասոր	.	.	.	.	3
»	»	»	B.	»	.	.	5
»	»	»	Գ.	»	.	.	5
Տայֆ և բարերգորիսի՛վ Պ.	Դարձանիկ	.	.	.	.	.	15
Կիևացրուրին Պ.	Դուռիմիկ	.	.	.	.	.	10
Հանգիս Տ. Գլուց թայ. Արձրունոյ	.	.	.	.	.	.	1

## ՀՐԱՏԱՐԱԿԵԼՔ

Sarberf Աշխարհիկ Լեզուի	Գ.	հասոր	.	.	.	.
Մուրի Գոյց Պատմորին	Ա.	զիրք	.	.	.	.
»	»	»	B.	»	.	.
Քրիստոնեական Հայոսք	Ա.	»	.	.	.	.
»	»	»	B.	»	.	.
Աղօրազիրք	.	.	.	.	.	.
Պատմացրուսի՛վ Վահրամայ,						

Հեղինակին հաջելի

ՀՄԱՅԵԱԿ ԳՈՀՈՒԱՅ ԼՐԱԿՐՃԵԱՆ

Կ. ՊՈՒՅ ՄԱՐԳԱՐԵՐԱ ԿԵՍՏՈՒ

Ա ԾԱՋՋԱՆԱՏԵՐԻՆ Հ

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՈՒՏՈՒՆ

Կ. Պոլիս, Մէրձան Զարդ, թիւ 57.